Էջմիածին

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

II

ՀԱՅ ԴԱՍՏԻԱՆԱՅՑ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Ավարայրի դյուցազնամարտը	3
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ.— Մեկ բանբար ստացողը	6
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Աշխարհի լույսը	11
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— Մեսրոպ Մաշտոց	14
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Մաճառանկարիչ Թորոս Ռոսլին	22
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ.— Գրիգոր Մամիկոնյան իշխանի կառուցած տաճարը և պալատը Թալին գյուղում և վերջինիս ճնագիտական պեղումները	35
Մ. ԷՍԿԻՃՅԱՆ.— Հարություն Ալամդարյան	42
ՄԱՏՐ ԱԹՈՌՈՒՄ	47
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգությունը	48
ՀԱՆԴԻՍԱԿԱՆ.— Սրբոց Վարդանանց և Վանդյանց տոնակատարությունը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում	51
ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ.— Հոգևոր Ճեմարանի ուսանողները Զվարթնոցում	53
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	55
Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո Թեմական պատգամավորական ժողովը և թեմական առաջնորդի ընտրությունը	58
Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խաչ սրբազան արքեպիսկոպոս պարգևատրված	60
Ա. Հ.— «Հայրենի արևին տակ», Վազգեն եպիսկոպոս Պալճյան	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armania, USSR

Երևան, 1955 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԿԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՎԱՐԱՅՐԻ ԴՅՈՒՑԱԶՆԱՄԱՐՏԸ

Ղևոնդյանց և Վարդանանց պայծառ անունն ու խնկելի հիշատակը նվիրական ու բանկացին են եղել հայ սերունդների համար: Ժողովրդի ազատության, Հայրենիքի անկախության, հայ ավանդությունների, հայրենի սրբությունների և հավատի համար մղված հերոսական ու անձնվեր պայքարը ոգեշնչման և խանդավառության աղբյուր է հանդիսացել և է:

1.500 տարիներ մեզ բաժանում են Վարդանանց ժամանակաշրջանից: Բայց Վարդանանց կերպարները, անունն ու հերոսական անձնուրացությունը չեն հնացել, չեն մոռացվել, այլ դարերի հետ բարձրացել և հասել են մեր օրերին և ժամանակի հետ, սերունդների սրտի վրայով կդնան դեպի հավիտություն:

Այսօր, մի անգամ ևս, ժամանակի մշուշից, անցյալի խորից, մեր աչքերի առաջ հառնում են Ղևոնդյանց ու Վարդանանց լուսապայծառ կերպարները, որպես քաջարի և հայրենասեր մարտիկների, իրենց ամբողջ գեղեցկությամբ, հերոսական կյանքի բոլոր անվեր գրավչությամբ, նկեղեցուն, Հայրենիքին, ժողովրդին ծառայելու վեհ ձգտումներով և սուտառուչ պատրաստակամությամբ:

Հարուստ է հայ ժողովրդի պատմությունը հանուն ազատության, հանուն Հայրենիքի անկախության, հանուն սուրբ նախնյաց հավատի, հանուն հայի հոգևոր, անկորնչելի արժեքների համար մղված հերոսամարտը դրվագներով:

Հայ ժողովուրդը, պատմության ասպարեզ մտնելու օրից, իրեն տեսել է մեծ, աշխարհակալ տերությունների միջև ընկած, համեմատաբար թվով փոքր, բայց միշտ պայքարի և զոյամարտերի մեջ: Հայ ժողովուրդը իր գոյությունը պահպանելու համար կյանքի և մահու հոգով է մղել անցյալում բազմաթիվ աշխարհակալների դեմ: Եվ երբեք պատահականություն չէ այն, որ հայրենասիրությունը, Հայրենիքի համար, հոգևոր արժեքների համար, հայ հոգու ազատության համար պայքարը կարմիր թելի նման անցնում է հայ ժողովրդի պատմության միջով, հազարամյակներով:

Ու Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենաուշագրավ մեկ հանգրվանն է կազմում, որն իր անջնջելի ու խորը դրոշմն է դրել հայ ժողովրդի հերոսամարտերի պատմության վրա:

Վարդանանց հերոսամարտերի խորհրդով սերունդներ են դաստիարակվել և խանդավառվել՝ Հանուն Հայրենիքի մղված մարտերում: Վարդանանց հերոսական ոգին նոր թափ, նոր որակ է տվել հայ ժողովրդի պայքարին: Հետագա դարերում հայ ժողովուրդը բազմաթիվ անգամներ հերոսական մարտի է դուրս եկել, Վարդանանց խորհրդով և հերոսությամբ, և հերոսական էջեր ավելացրել իր ազատագրական պայքարի պատմության վրա: Սասունցի Դավիթը, Խորենցի Հովնանը, Թորոս Լևոնին, Թաթուլ Վանանդեցին, Դավիթ բեկը, Աղասին և բազմաթիվ ուրիշ հերոսներ, Վարդանանց ոգով և քաջությամբ, կռվել են Հայրենիքի թշնամու դեմ և Վարդանի օ-

ռինակով հաղթել ու անմահացել: Վարդանանց հերոսական կերպարը, քաջությունն ու ոգին, ոգեշնչել ու առաջնորդել են հայ հայրենասերներին ամեն անգամ, երբ օտար սուր է բարձրացել հայի երկրի ազատության, հայ ժողովրդի կյանքի, հայրենի սրբությունների, օջախի, պատվի վրա: Արդարև, Վարդանանց պատերազմը «եղել է, կա և կմնա առավելապես ազգապահպան էջը Հայոց պատմության, հոգեզմայլ մի էջ, որ դարեր անընդհատ ոգեշնչել ու մխիթարել է հայազգի սերունդներին և ազգային-քաղաքական առաքելության ուղիներ պատգամել Հայրենիքին, Ազգին, Եկեղեցուն» (Գեորգ Զ. Կարողիկոս):

Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի անձնուրաց կռիվն էր հանուն ազատության, Հայրենիքի, հանուն ինքնուրույնության:

Ե-րդ դարը հայ ժողովրդի պատմության հերոսական ու փառապանծ դարերից մեկն է:

Քրիստոնեության մուտքը Հայաստանում բոցավառեց սասանյան պարսիկների անհաշտ թշնամությունը հայերի նկատմամբ: Սակայն քրիստոնեությամբ հայերը ապահովվեցին այլակրոն պարսիկների հետ ձուլվելուց: Բյուզանդիան, իր հերթին, ձգտում էր հավատակից հայ ժողովրդին ձուլել իր գրականությամբ և լեզվով: Մեսրոպյան տառերը փրկեցին հայ լեզուն և մշակույթը բյուզանդական խառնարանի մեջ սուզվելուց: Թեև հայ ժողովուրդը մնաց մենակ, բայց մնաց իր ինքնուրույնությամբ, իր մշակույթով, իր ոգով: Տիգրանի և Բյուզանդիայի դեմ ծառացավ հայ ժողովուրդը իր կուռ միասնությամբ, երկուսի դեմ էլ հերոսական պայքար մղելու իր վճռականությամբ և ատելությամբ:

Ե-րդ դարը հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության, ինքնուրույն մշակույթի ստեղծման և հերոսական գոյամարտերի դարաշրջանն էր, պայքար՝ գրչով և սրով, հանուն հայ հողի, ջրի, ազատության և անկախության:

Երբ մի ժողովուրդ կռվում է իր ազատության և գոյության համար, իր ինքնուրույնության և ոգու անկախության համար, նա ապրում է, նա չի կորչում, եթե նույնիսկ նա պարտվում է մարտում, գոնե մնում է նրա հերոսական պատմությունը, որ գալոց սերունդներին ապրեցնում է, բարձրացնում, հերոսացնում և այդպիսով կորցրածը նորից ետ է առնում, նա հաղթանակում է: Ժամանակավոր պարտությունները չեն որոշում ժողովրդի կյանքն ու ապագան, որովհետև «Մահ իմացեալ անմահութիւն է, որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»,— գրում է Ավարայրի սոխակ ոսկեգրիչ Եղիշեն: «Մի ժողովրդի ուժը նրա գիտակցության մեջ է: Գիտակից ազգը չի կորչի, գիտակցությունը մեծ ուժ է: Գիտակից ազգը, ինչքան էլ փոքր լինի ու շնչին իր բովով՝ մեծաթիվ ազգից է ուժեղ է, երբ ունի պայծառ գիտակցություն, որ ինքը ինքն է»,— ասում է Ավարայրի հերոսներից մեկը՝ Արտակ Մոկացին:

Եվ Ավարայրի հերոսամարտը դրսևորեց հայ ժողովրդի այդ գիտակցությունը. միասնությունը, անհողդողդ ոգին, արիությունը, կորովն ու ազատասիրությունը: Ավարայրի հակատամարտում ամեն մի հայ ռազմիկ շատ լավ էր հասկանում, թե ինչի համար և կռվում և արյուն թափում: Ընդհանուր ալետը, հայ ժողովրդի, Հայ եկեղեցու գոյության ապառնացող մեծ վտանգը առաջ էր բերել մասսայական հերոսություն: Ողջ հայ ժողովուրդը, շինականները, ազատանին, հոգևորականությունը ներշնչված էին մի բարձր հայրենասիրությամբ, որի մեջ իրար հետ կցորդված էին Հայրենիքի սերն ու հայ հավատի նվիրականությունը:

Ու մասսայական, ժողովրդական այդ հերոսության առաջ, զինաթափ էր լինում թշնամին. «ո՞չ ի կապանաց զանգիտեն, ո՞չ ի սանջանաց երկնչին... զմահ քան զկեանս ընտրեն: Ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել»:

Հայ ժողովուրդը Ավարայր իջավ ո՞չ թե մեռնելու, այլ հաղթելու համար, պահպանելու համար իր ազգային նկարագիրը, ինքնուրույնությունը, իր լեզուն, իր մշակույթը, իր եկեղեցին ու հավատը:

Վարդանանք ու Ղևոնդյանք շատ պայծառ ու խորունկ ըմբռնողություն ունեին ազգային սկզբունքների նկատմամբ, որոնց հաղթանակի համար մի վայրկյան իսկ չէին վարանել զոհելու իրենց կյանքը:

Ուխտապահ և հայրենասեր հայ նախարարների բերնով, ՎԱՐԴԱՆՆ ասում է Ավարայրի նախօրյակին. «ՄԵՔ՝ ՆԱԽԵՒՔՆԵՐԸ ՄԵԶ ԿՏԱԿԵՑԻՆ ՀԱՎԱՏ, ՊԱՏԻՎ, ԱԶԳ: ԱՐՑԱՄԲ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ ՆՐԱՆՔ ՄԵՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԼԵԶՈՒՆ, և մեզ հրաման բոլոր անքասիր պահել այդ սրբությունները: Պաշտպանե՛նք մեզ կտակած գանձերը: ՄԵՌՆԵՆՔ՝ ՑՏԱՆՔ ԹԸՇՆԱՄՈՒՆ ՈՉԻՆՉ» (ընդգծումը խմբագրությանն է):

Հայրենասեր հայ հոգևորականության առնից Ղեվոնդ երեցն ասում է. «Պարսիկները պիտի գան ՄՏՆԵՆ ՄԵՐ ՏՆԵՐԸ, ՈՉՆՉԱՑՆԵՆ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ԱՊԱԿԱՆԵՆ ՄԵՔ ԲԱՐՔԵՐԸ, խառնակություն մտցնեն մեր ընտանիքներում: Ի՞նչ, պարսկերե՞ն պիտի խոսեմ, Գողթան երգե՞ր մոռանամ, հոյակապ մատենագրությա՞ն խորթանամ, նախնյաց ճարտարապետությո՞ւնը լքեմ... ո՞չ, ԱՌԱՎԵԼ ՔԱՂՑՔ է ՄԱՀԸ»:

Իսկ բովանդակ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ազատագրական պայքարի դուրս եկավ պարսիկ

նվաճողների դեմ: Եվ անա Հայաստանի սարերից, ձորերից, շեներից ու հառաջներից, իշխանական դղյակներից ու շինականի խրճիթներից, վանքերից ու մենաստաններից դեպի Ավարայր է հոսում ժողովրդական հոսանքը. «Ժողովեցին զքաջս մարդիս առանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից ի զմենակեցաց, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վանան ի ձեռին, ոչ միայն առանց քաջաց, այլ և կանանց առնականաց, ՊԱՏՐԱՍՏ Ի ՍՊԱՆԱՆԵԼ ԵՒ Ի ՄԵՌԱՆԵԼ»:

Վարդանանց հերոսամարտը, տոգորված ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ, սրտառուչ և անձնուրաց հայրենասիրությամբ, հերոսությամբ, ապրեցնում է մեզ, ցնցում, թափահարում, և մղում ուխտելու՝ հավատարիմ մնալու նրանց ոգուն և պայքարին:

Վարդանանց պատերազմը՝ պատերազմ էր ազգային գոյությանն պահպանման համար, Հայրենիքի ազատության համար, ընդդեմ բռնության, ձուլման, այլասերման:

Ավարայրը մարտաճրավեր էր հայ ժողովրդի կողմից պարսիկ բռնակալության դեմ, հանուն հայ հոգու ազատության, հանուն Հայրենիքի:

ԱՎԱՐԱՅՐՈՒՄ ԿՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐ ՈՒԺԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԷՐ, որն իր կամքն էր բելադրում ուխտապահ իշխաններին և հայրենասեր հոգևորականությանը: Վարդանը՝ ինքը հավատական կերպար է, հայ ժողովուրդն է, որ իր սեփական ձեռքերում վերցրեց իր հայրենի երկրի բախտը և հարևան վրաց և աղվանից ժողովուրդների հետ, «կամաւ և յօժարութեամբ» դաշն կապած, իջավ Ավարայր, զեն ի ձեռին կռվելու այն բարձր գիտակցությամբ, որ անխուսանելի կյանքից փառավոր է հերոսական մահը, և լավ է մեռնել կանգնած, սուր ի ձեռին, Հայրենիքի պաշտպանության մարտական դիրքերում, քան սողալ Հայրենիքի թշնամիների ոտքերի տակ:

451 թվականի մայիսի 26-ին կատարվեց կատարվելիքը...: Հայ ժողովրդի և նրա երկրի վրայով եկավ ու անցավ մեծ արհավիրքը, մեծ փորձությունը...: Ու այսպես՝ անցան օրեր, անցան տարիներ, անցան դարեր...: Պատմության բեմից հեռացան շատ ժողովուրդներ, որոնք սուր էին բարձրացրել հայ ժողովրդի ազատության, նրա կյանքի, ապագայի վրա, բայց մնաց հայ ժողովուրդը, մնաց ապրելու անհողդողդ կամքով և ստեղծագործելու տաղանդով ու կենսունակությամբ:

Ավարայրից հետո հայ ժողովուրդը անցավ բազմաթիվ արհավիրքներով ու փորձություններով, տեսավ շատ դժվարություններ և դառնություններ, մինչև վրա հասավ այն երջանիկ ոսպեն, երբ երկնակամարի վրա սկսեց փայլել հայկական աստղը ևս, երբ հայ ժողովուրդը տեր դարձավ իր իրավունքին, իր պատվին և իր պետականությանը, և ստեղծագործական նոր և անանխորնրաց վերելքի ճանապարհի վրա կանգնեց:

Պատմական նոր իրադրության մեջ հայ ժողովուրդը ակնբախ ձևով ցույց տվեց աշխարհին, թե ի՞նչ կենսունակ ուժեր ունի իր մեջ և ինչպիսի՞ ընդունակություններ կարող են դրսևորել փոքր ժողովուրդները, երբ նրանք ազատ են օտարի բաղաքական, տնտեսական և կուլտուրական ճնշումից:

Ազատասեր հայ ժողովուրդը Վարդանանց տոնի այս օրերին մեկ անգամ ևս վերհիշում է իր գոյության համար մղած ազատագրական պայքարի ողջ պատմությունը և նրա փայլուն էջերից մեկը՝ Ավարայրի ճակատամարտը:



ՔԱՐՈԶ

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

(Պատրիարքական տեղապահ Երուսաղեմի Հայոց)

ՄԵԿ ՔԱՆՔԱՐ ՍՏԱՑՈՂԸ

«Մատուցեալ և ոչ զմի քանմար առնալ Լոս։

(ՂՈՒԿ., ԺԹ 20)

Մենք քիչ անգամ իրապես կհամակրինք մարդոց, որոնք ամենուն կողմե գովասանքի կարժանանան։ Այս տեսակետեն հատկանշական է հույն քաղաքացիին խոսքը, Արիստիդեսին, խեցեվճիռի մը առիթով։ Հույն քաղաքացին, որ գրել չէր գիտեր, Արիստիդեսին երկարեց խեցիի կտորը և խնդրեց, որ վրան Արիստիդես գրվի. երբ այս վերջինը հարցուց իրեն, թե զինքը կճանչնա՞ր, ոչ պատասխանեց հույն քաղաքացին. ինչո՞ւ ուրեմն դեմ կքվեարկես, հարցուց Արիստիդես. հույնը պատասխանեց, թե ա՛լ հոգնեցանք իր մասին լսելե, թե արդարակորով անձ մըն է։

Արդարև, հոգեբանական և նշմարելի իրողություն է, որ արդար, խոհեմ, պարկեշտ, և ազնիվ հատկություններով համբավված մարդեր շատ հաճախ մեղ լեն շահագրգռեր, և եթե այս վերջինները վտանգի մը հանդիպին, իրենց պարագան մեղ չի հուզեր։ Մինչդեռ, դատարկապորտ մը, որ ոչինչ ունի լավ և դոհացուցիչ, վտանգի մը պահուն իր հետ կունենա միշտ մեր բարյացակամությունը։

Կխորհիմ, թե այս կարգի զգացումով կլեցվինք, երբ կմտածենք մեր Տիրոջ կողմեն տրված քանքարներու և զանոնք ստացող ծառաներու մասին։ Հինգ քանքար և երկու քանքար առնողները իրենց շահերով, տեղեկագիրներով և գնահատանքներով կանցնին մեր աչքին առջևեն, հետո կուգա մեկ տաղանդ ստացողը, թաշկինակին մեջ ծրարած զայն, գլխիկոր և վեհերոտ, թոթովելով իր պարտա-

ղանցության չքմեղանքը։ Ապա սատը իր Տիրոջ և դատապարտությունը։ Այս տեսարանին առջև, երրորդ ծառային նկատմամբ մենք կունենանք խղճահարություն և որոշ համակրանք, երբ ան պատժված կենտվի խավարին ծոցը։

Սիրո առաջին զգացումը. որ կծնի մեր մեջ երրորդ ծառայի նկատմամբ, կուգա իր պարզ և համեստ վերաբերմունքէն, երբ կփորձե չքմեղելու իր պարտաղանցությունը։ Տաղանդ մը միայն ունեի, կպատասխանե խեղճ ծառան, ի՞նչ կրնայի ընել անով, ի՞նչպես կըրնայի մոտենալ սեղանավորներուն և լումայափոխներուն մեկ քանքարովս, և մանավանդ ի՞նչ հաջողություն կրնայի ունենալ այդքան նվազ գումարով։ Թեև անճիշտ՝ սակայն որքա՞ն համեստ կհնչեն իր բացատրությունները մյուս երկուքին քով՝ որոնք հպարտ գոհունակությամբ կհայտարարեն. Տէր, Քու մեզի տված քանքարներուն չափ ուրիշներ ևս շահեցանք։

Անդրադառնալով մեկ քանքար ստացողին, պետք է ըսել, թե կյանքի մեջ երբ մարդիկ զգան, թե իրենց ունեցած խելքը, պատեհությունը և ուժը արժեքն և նշանակությունն զուրկ է, տակավ անոնք կկորսնցնեն իրենց ինքնավստահությունը, քաջությունն ու ձեռներեցությունը և որևէ ճիգ չեն ըներ կյանքի պայքարին իրենց մասնակցությունը բերելու։ Ո՞րքան մեծ է թիվը այս կարգի մարդոց մեր այսօրվան ընկերության մեջ։ Երիտասարդներ, որոնք ճամբա կելլեն մշակույթի մը տիրանալու և զայն նվաճելու հույսով, սակայն իրենց շփումը իրենցմն ավելի մեծ ու տաղանդաշատ ուղեղներուն հետ, ըլլա ներկայի և կամ անցյալի մեջ, ապա իրենց ուղեղի և կարողության սակավությունը զիրենք հուսահատության կմատնե։ Նույն պարագան կրնա կրկնվիլ բարեգործական և կամ առևտրական գետիններուն վրա։ Մարդիկ ճամբա կելլեն լավ զգացումներով և հառաջադրությամբ, սակայն իրենց ունեցած պզտիկ միջոցներն ու ընչին դրամագլուխը անբավանդակ կթողու զիրենք կյանքի մեծ գործառնություններու և մրցակցությանց մեջ, և զիրենք կմատնե հետևաբար լքումի, հուսահատության և անհաջողության։ Այս է պարագան շատ մը անհաջողության մատնված մարդոց, իրենց ունեցած քիչը, անբավականը, զիրենք հուսահատ անգործության և պարտազանցության կառաջնորդե։

Փրկությունը այս կարգի մարդոց կսկսի այն ատեն միայն՝ երբ անոնք կսթափին իրենց թմբիրեն և նոր քաջությամբ մը կփորձեն դիմագրավել կյանքի դժվարությունները, ձեռք բերել կարենալու համար այն կարելի հաջողությունը՝ որ վստահություն պիտի ներշնչե իրենց։ Կյանքի մեծ հեղաշրջումներն ու հաղթանակները և քաղաքակրթության հաջողությունը, քանի մը առանձնաշնորհյալներու և հաջողածներու շնորհիվ չէ որ կընթանա, այլ համբերատար ու հավատարիմ ջանքերովը անոնց՝ որոնք մեկ քանքար միայն ունին և կամ կրցած են ունենալ այս կյանքին մեջ։ Հերոսները չեն, որ կհեղաշրջեն պատմության ընթացքը, անոնց մեծագործությունը սկիզբն է միայն ըլլալիքին, էականը կկատարվի հասարակ մարդոց ջանքերով և միջոցներով։ Մեծ գործերը ավելի դյուրին են քան փոքր երևցածները և հասարակ մարդոց ըրածը ավելի ծանր ու դժվար է, քան հերոսներունը, որոնք իրենց ներշնչումովն ու արյունովը կսկզբնավորեն զայն։ Ահա թե ինչու մեր համակրանքը կերթա մեկ քանքար ունեցողին, վասնզի իրեն նմաններու ուսին է, որ կծանրանա կյանքի հառաջդիմություններու դժվարին գործը, եթե միայն իրենք գիտակցին իրենց ունեցած քիչ արժեքին և ունենան հարգանք իրենց անձին նկատմամբ։

Մյուս կողմեն, սակայն, մարդ պետք չէ ինքնահավան ըլլա, կարծելով, թե ինչ որ ինք ունի լավագույնն է. միայն ապուշներն են, որ անայլայլ կրնան դիտել ինքզինքին առանց նշմարելու իրենց թերությունները։ Ինքնագիտակից մարդը գիտե իր ուժերուն չափը և զանոնք իրագործելու և օգտագործելու կերպը։ Խոսքով շատ դյուրին է ասիկա և սակայն դժվար՝ զայն իրագործելու պարագան։ Մյուս կողմեն Աստված մեզի տված է կըրկնակ կարողություններ. ճշտորոշելու այս հանգամանքները։ Նախ սիրելու և գործելու կարողությունը, հանուն մեր բացարձակ պարտականության, և երկրորդ՝ սիրելու եղբայր մարդերը և ծառայելու անոնց։ Այս երկու ուժերուն մեջ կկայանա մարդուն հույսը փրկվելու իր ինքնագիտակցությենեն։ Եթե մար-

դը իր ուժերը այս ուղղությամբ փորձելն վերջ, զանոնք անբավարար գտնե, կիյնա հուսահատության մեջ, սակայն հանկարծ իր ինքնագիտակցության մեջ կհնչե ձայն մը, կամ աղաղակը եղբայր մարդուն, որ զինքը օգնության կկանչե, ստիպելով զինքը, որ չմտածե այլևս իր ուժերու և կարողություններու չափին, այլ ընե ա՛յն, ինչ որ անհրաժեշտ է որ ըլլա, նման մայր առյուծին՝ որ վտանգի պահուն կհարձակի փրկելու իր կորյունները, առանց մտածելու, թե իր ուժերը բավական պիտի գայի՞ն առ այդ, և թե ի՞նչ արժեք պիտի կրնար ունենալ իր փորձը։ Երբ մարդ կգիտակցի այս մեծ անհրաժեշտություններուն, կփրկե ինքզինքը իր անձին հայեցողութենեն, որ իր կարողությունները տնտեսելու ներքին հաշվետվությունն է։ Այս է եղած պարագան ու պատմությունը բոլոր քաջ ու ազդեցիկ մարդոց։ Մովսես, Պողոս, Գրոմվել, ասոնք բոլորը ուզած են խաղալ պահ մը վտանգները դիմագրավելու խուսափողական ճարտարությունը, այսինքն խաղալ իրենց անձնոցի անկյուններուն հետ, ինչպես սովորաբար կըսվի, սակայն հզոր կանչը եղբայր մարդերուն և պարտականության գիտակցության, այնքան զորավոր է եղած, որ ասոնցմե յուրաքանչյուրը մոռցած է իր մարդկային տկարությունը ու գացած է իրագործելու մարդերու փրկության իր բաժինը։

Բնականորեն պիտի ըսեք, թե հիշված շարժառիթները շատ զորավոր են և երբ զգացվի եղբայր մարդուն կողմեն, կրնան ազատագրել զայն։ Սակայն ողբերգությունը հոն է, որ մարդիկ չեն զգար զայն ու հետևարար չեն կրնար փրկվիլ մատնանշված միջոցներով։ Հոս է, որ կմիջամտե Գերագույնը, և գթալով հայրորեն իր զավակներուն տկարության, կառաջնորդե զանոնք լավագույնին, լեցնելով այն բացը, որ իրրև վերացյալ իրողություն, շատ պիտի գար տկար արարածի ուժերուն և հասկացողության։ Ահա թե ինչպես իրարու հետ և իրարու մեջ կհաշտվին մարդուն տկարությունը և Աստուծո զորությունը։ Եվ սակայն որպեսզի այս ներդաշնակությունը կարենա նշանակություն ստանալ մեր կյանքին մեջ, Անոր կամքը մեր կամքին հրամայականը պարտի ըլլալ, որպեսզի Ան կարենա փրկել ինքզինքեն հուսահատ ու զզված մարդը։ Իսկ մարդն ալ իր կարգին պետք է կարենա փրկել ինքզինքը ինքնագիտակցության և ինքնագատումի փորձութենեն, լսելու համար իր գերագույն Վեհապետին հրահանգը։ Ահա իմաստը առակին։ «Դուն կճանչնայիր զիս, քու տէրդ, հետևարար պետք է գործեիր համաձայն իմ հրահանգներուս։ Որքա՞ն տեղին է հոս հիշատակել Սաղմոսին այս բացատրությունը, իբրև լուսաբանություն բոլոր անոնց՝ որոնք զերծ կուզեն կացուցանել ինքզինքին իրենց համար ճշտված պարտավորություններեն, իրենց տկարութենեն կամ ինքնագատումեն եկած վկայություններով և չքմեղանքներով։ Եթե գիտես ու կդգաս, թե անհրաժեշտ է ընել այսինչ բանը, ու կպահվրտիս քու տկարություններուդ ետին, այդ կնշանակե, թե չես ուզեր լսել Գերագույնին ձայնը, որ քու էությանդ ընդերքներեն պետք է հոսի նոր կյանքի մը զորավոր արյունին նման։ Ու այսպես լքված ինքզինքեդ ու Գերագույնեն, դուն այլևս ոտքերուդ վրան չես, մինչդեռ ընդհակառակն, երբ զգաս Անոր հնազանդելու հաճույքը, այն ատեն դուն պարտականությանդ գիտակցության մեջն ես և անկարելին կատարված։ Այն ատեն պիտի չկենաս հարց տալու, թե արդյոք կրնա՞ս ընել զայն, մինչև որ հաղթանակի թագը չդգաս գլխուդ վրա։ Եվ մյուս կողմեն զայն գլխուդ վրա ունենալեն հետո, պիտի վերցնես զայն զուլդ ձեռքերովդ և պիտի նետես Իր ոտքերուն, վասնզի այլևս պիտի գիտնաս, թե իրապես Ինքն էր, որ կատարեց զայն և ոչ թե դուն։

Այս պարագան սակայն գլխիվայր չի շրջեր իրողությանց տախտակը։ Եթե անկարողության զգացումին արմատները ինքնագիտակցության մեջն են, պետք է ազատագրել զանոնք, մոռնալով իր անձը, այլապես չքմեղանքը իրենց տրված շնորհի նվազության կվերածվի քողարկված հպարտության մը, ոչ թե ինքնաքննադատումի արարքին, որ իր ուժերու տկարության գիտակցությունն է։ Վասընզի ով որ ինքզինքը իր տկարության կամ փոքրության ետևը կպահե, ապաստանած կըլլա այս կերպ հպարտության բերդին, ու չըներ Աստուծո իրեն տված գործը, ոչ թե իր ուժերուն անբավարության պատճառավ, այլ շնորհին նվազությանը համար։ Մինչդեռ ան-

հրաժեշտ է դուրս գալ այս հոգեվիճակեն, ստանձնելու գործը, զոր Աստված կուտա մեզի, առանց ցուցադրելու մեր տկարությունը, վասնզի Ան մեզի հետ է, Ու երբ Իր հետը ըլլանք և Իր լույսին մեջ, զերծ պիտի մնանք արտաքին խավարեն։

Այս ընդհանուր իրողութենեն հետո, կրնանք ըսել, թե մարդերեն շատեր, այսօր մեկ քանքար ստացող ծառային նման ինքզինքնին ամենեն ավելի զուրկ կզգան կրոնական ուժեն, և հետևաբար անոր իրագործումեն։ Մարդ գիտնալով հանդերձ իր կրոնական նկարագիրը, և իր հոգիին ձգտումները դեպի գերբնականն ու աստվածայինը, ընդունելով նույն ատեն իրավությունը ժամանակին ու հավիտենականության, ընդունելով, թե իր մեջ և իր հետ է Աստուծո սերը և Ս. Հոգին, սակայն ինքզինքը անկարող կզգա իրացնելու աստվածպաշտության գործը, նման կույրին, որմե պիտի պահանջեին, որ գործածե իր չունեցած աչքը։ Այսպիսին, մղված ինքնագիտակցության և ինքնագատումի զգացումներեն, կհամարի պնդելու, թե ինքը կրնա հավատ ընծայել այն բաներուն միայն, զորս իր զգայարանքներուն շնորհիվ կրնա ըմբռնել և շոշափել, ուրկելով այս կամ այն կերպ ինքզինքը երջանկութենե մը և մշակույթե մը նույն ատեն, որ կուգա հավատքի կյանքեն և քրիստոնեական եղբայրութենեն։ Այս կարգի մտայնությամբ տոգորված անձերը արդահատանքի միայն կկարոտին, վասնզի կխուսափին պարտականութենե մը, զոր կրնային ընել։

Միակ մտածումը, զոր կունենանք այս կարգի մարդոց պարագային այն է, թե կրոնքի հասկացողությունը ոչ միայն թերի է անոնց մեջ, այլ սխալ կերպով տրված։ Ժամանակավոր և պատահական կարգ մը հոգեկան իրողություններու նկատմամբ իրենց ծանոթությունը, զիրենք տարտամորեն միայն մոտեցուցած է հավիտենական այս իրողություններուն, և ճիշտ ատոր համար կրոնքը այդպիսիներուն համար կմնա հոգեկան իրողություններու շարք մը՝ որոնց նկատմամբ իրենք չեն զգար որոշ հարում, և հետևաբար չեն կրնար շինել կարելի տեսակետը։ Տակավին այս բազմաթիվ տեսակետներու տարբերությունը, որ գոյություն ունի քրիստոնեական հավատքին մեջ, պատճառ կդառնա, որ մարդիկ ոչ միայն կասկածամտորեն մոտենան անոր, այլ մանավանդ հուսահատության մատնվին հավատքի անհամերաշխության այս թոհուրոհին նկատմամբ։ Եվ սակայն, եթե իրենք կարենան մտածել, թե բոլոր այդ բաժանումներուն խորը կա բան մը, որ հասարակաց է բոլորին, և եթե վերանան դեպի այդ զգացումին հունը, պիտի հանդիպին նույնիսկ Անոր՝ որ օր մը այնքան քաղցրորեն խոսեցավ երկնքեն և Գերագույնեն, Իր և մեր բոլորի Հորէն։ Եվ այս սրտագին իրողությունը բավ պիտի ըլլա, որ անոնք լեցվին սիրով, խոնարհամտությամբ և մարդկայնությամբ։ Ու մինչև որ անհատները չկարենան երթալ իրենց հավատքին հունը, այն սրտագին պարզության, որ բոլոր հավատալիքներու ենթահողն ու էությունը կկազմե, չեն կրնար լեցվիլ այն մեծ սիրով, որ անհրաժեշտ է բոլոր ըմբռնումներու ու մանավանդ կրոնական համակրություններու պարագային։

Իսկ երբ հետո կհետևինք պատմության, թե ի՞նչ կերպով Ան, որ սկիզբն ու աղբյուրն է մեր հավատքին, իրագործած է ինքզինքը, թե ի՞նչպես Իր կյանքի գինով պաշտպանելե վերջ Իր մեզի բերած ճշմարտությունը, դայն մեր կյանքին մաս ընել ուզած է այնպիսի ձևով մը՝ որ լեցուն է սիրով, նվիրումով ու եղբայրությամբ, կհամոզվինք, թե Իր Մարդեղությունը, Խաչելությունն ու Հարությունը մեզի համար եղած են, և հետևաբար մենք մեր կյանքով պարտական ենք այդ բոլորին։ Ահա ճշմարիտ հավատքը և անոր զգացումին պատասխանատվությունը։ Վասնզի իրապես կարելի չէ հավատալ, որ աշխարհի վրա կրնա գտնվիլ մեկը, որ զուրկ ըլլա սիրո և հիացումի զգացումեն և հետևաբար կրոնական կյանքեն։ Մեկը, որ չկարենա համերաշխիլ այն իրողության հետ, թե հոգին անմահ է և աստվածային, և եթե հետևաբար ան Աստուծո կպատկանի և իրմով մենք ևս Աստուծո կպատկանինք ու Աստված մեզի։

Ընենք ուրեմն անհրաժեշտը մեր կյանքի երջանկության և ապահովության համար, ազատելու մեր հոգին կյանքի անստույգ և անորոշ վիճակներեն, որոնք մեր առօրյան կկազմեն։ Որովհետև Դատաստանի վերջին օրվան համար չէ միայն, այլ բոլոր ժամանակներու

համար։ Մեր տրամադրության ներքև դրված յուրաքանչյուր օրը երբ մեր փրկության չի ծառայեր, կխլե մեզմե մեր լավագույնը, մեր երիտասարդությունը, մեր ուժը, մեր գեղեցկությունը և ումպետս վատնված մեր հիդերը։ Ամեն օր Աստված կխոսի մեզի մեր կարելիությանց և իրագործումներուն ի հաշիվ. կխոսի անոնց մանավանդ, որոնք իրենց տաղանդը ծրարած թաշկինակի մեջ, իզուր կվատնեն իրենց ժամանակը։ Վասնզի՞ անոր չի գիտեր շահարկել իր քանքարը, պիտի առնվի իրմեն ու ինքը այս կերպով զրկված իր լույսեն՝ պիտի նետվի ծոցը արտաքին խավարին, նման իր քանքարը շահարկել չմտածող Ավետարանի առակի ծառային։

(ՎԻՈՆ, ամսագիր Հայոց Պատրիարքության, Երուսաղեմ)



ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա Շ Խ Ա Ր Հ Ի Լ Ո Ւ Յ Ս Ը

(Տյառնընդառաջի տոնի առիթով)

«Լույս ի յայտնութիւն ճնչաւոսաց,
և փառս ժողովրդեան քո Իսրայէլի»։

(ՂՈՒԿ., Բ 32)

Հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, այսօր, մեծ հանդիսությամբ և լուսավառությամբ, հոգեզմայլ շարականների և տաղերի երգակցությամբ, տոնում է Փրկչի քառասնօրյա Ս. Տաճար գալստյան տոնը։ Ինչպես ցույց է տրվում այսօրվա ավետարանների ընթերցումից, Քրիստոսի ծննդից 40 օր հետո, Նրա բարեպաշտ ու հավատացյալ մայրը Փրկչին տարավ Երուսաղեմ, Ստրմոնի Տաճարը՝ «յանդիման առնել Տեառն»։ Ահա այդ պատճառով, այդ տոնը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեջ կոչվում է Տյառնընդառաջ, երբ Փրկիչը, քառասնօրյա մանուկ, Տաճար է բերվում ընծայվելու Հոր Աստուծո և «կատարել զօրէնս վասն փրկութեան հեթանոսացս»։

Ըստ Մովսիսական օրենքի՝ «Ամենայն արու որ բանայ զարգանդ, սուրբ Տեառն կոչեսցի»։ Մենգական մայրը երեխայի ծնունդից հետո պետք է սպասեր 7 օր իրեն «պղծեալ», 8-րդ օրը երեխային պետք էր թլփատել, ապա 33 օր նա սպասել, և 40-րդ օրը Տաճար գնալ սրբվելու համար, և «տալ պատարագս» մի տարեկան գառ և մի ղուրդ տատրակ, մեկը ողջակիզի համար, իսկ մյուսը՝ «վասն մեղացս»։

Ս. Մարիամն ու Հովսեփը փետ առ կետ կատարեցին Մովսիսական օրենքի բոլոր պահանջները և Մանուկ Հիսուսին տարան Տաճար։

Այդ օրը Տաճարը լիքն էր բազմությամբ։ Բացի Մարիամից, այնտեղ եկել էին շատ մայրեր, գրկած իրենց անդրանիկ երեխաներին։ Եվ ահա բազմության մեջ, մի պատկառելի ծերունի, «արդար և երկիւղած» մարդ, որ «ակն ունէր մխիթարութեան Իսրայէլի», բազմությունը ճեղքելով առաջանում է դեպի Ս. Մարիամը, և իր դողդոջ, անարյուն բազուկների մեջ վերցնում է Լույսը, և Տաճարի կամարների տակ հուչա-

կում է Մանկան մեծությունն ու նշանակությունը մարդկության համար։ Մանուկ Հիսուսը լինելու է «լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում Իսրայէլի»։

Առաջին անգամ Ս. Սիմեոն ծերունին է, որ, հրեա ժողովրդի ազգային-կրոնական մեծ կենտրոն Տաճարում հռչակում է Լույսի ծնունդը, Քրիստոսի մեծությունն ու մեսիականությունը։ Ծերունի Սիմեոնը գրկում, շոշափում է հեթանոսների Լույսը, իր ժողովրդի փառքը։ Եվ աստվածավախ ու հավատավոր ծերունին «խաղաղայր Աստուածորդւոյն ի գիրկս իւրս»։

Տյառնընդառաջի տոնը առավելապես Լույսի տոնն է, «լոյս ի յայտնութիւն հեթանոսաց»։ Ս. Սիմեոն ծերունու անատամ բերնով, Տաճար բերված քառասնօրյա Մանուկը հռչակվում է իր ժամանակի և բոլոր ժամանակների և աշխարհների համար իբրև Լույս, ճշմարտություն, արդարություն։

Իր աստվածային առաքելության առաջին իսկ օրերից Հիսուս հաստատեց Սիմեոն ծերունու այդ մարգարեությունը։

Քրիստոսի ժամանակակից աշխարհը ապրում էր բարոյական, իմացական, հոգեկան խավարի մեջ, մարդկությունը խարխափում էր անհույս և անդեկ, մթության, մեղքի, հուսալքման մեջ։ Եվ ահա, այդ հոգեկան քաոսի մեջ ճառագայթեց Աստվածային Լույսը, Լույսը մարմին առավ և լուսավորեց իր ուղին կորցրած մարդկության ճանապարհը։ «Ես եմ լոյս աշխարհի»,— հայտարարեց Հիսուս։

Քառասնօրյա Տաճար բերված այս լուսեղեն Մանուկը, արդարև, հանդիսացավ փրկության Լույս, որը ծագեց իր դարն ապրած հին աշխարհի հորիզոնի վրա և իր փրկարար լույսով լուսավորեց աշխարհը։

Արդարև, աշխարհի, կյանքի Լույսն է Քրիստոսը. «մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի» (Յովհ., Թ 5)։

Գեղեցիկ և աստվածային է Լույսը....։

Կյանքում, բնության մեջ, ամեն գեղեցիկ ստեղծագործություն լույսով է ստեղծվել։ Արարչագործությունից առաջ խավար էր տիրում ամեն կողմ։ Աստված ամեն ինչ ստեղծեց լույսով և տեսավ «զի բարի է»։ Առանց արևի լույսին ու ջերմության չկա կյանք, չկա ուրախություն ու գեղեցկություն։ Աստված ևս Լույս է. «զի Աստուած լոյս է և խաւար ի նմա չիք» (Ա Յովհ., Ա 5), իսկ քրիստոնյաները կոչվում են «որդիք լուսոյ»։

Կյանքի խավարը, տգիտության, մեղքի, չարության խավարը լուսավորող մեծ ու կենսաշող լուսարձակն է Քրիստոս, որն աշխարհ է եկել լուսավորելու մահվան խավարը և կյանքի անել, մութ ու անարև շավիղները։

Ս. Սիմեոն ծերունու օրով, և հետագայում ևս, Իսրայելը չգնահատեց երբեք իր հոգի վրա ճառագած Լույսի արժեքն ու իբրև թափառական, ընկավ դարերի ճանապարհի վրա, իր հոգին վերջնականապես վաճառելով խավարի իշխանության։ Մեսիան եկավ նրա համար, որպես «փառս ժողովրդեան քում Իսրայէլի», իսկ Իսրայելը ընդմիշտ փակեց իր հոգու աչքերը՝ չտեսնելու համար Լույսի գեղեցկությունն ու մաքրությունը. «ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյսն, իսկ որ առնէ ճշմարտութիւն՝ գայ առ լոյսն» (Յովհ., Գ 20)։

Միայն հրեաները չէին Լույսի թշնամիները. ամեն տեղ կան այսօր Լույսի, կյանքի, ճշմարտության թշնամիներ, որոնք խավարը, չարիքը, արյունը, կեղծիքը ավելի են սիրում քան լույսը, որովհետև «գործք իւրեանց չարութեան են»։

Մարդկանցից քանիսնե՞ր և քանիսնե՞ր դեռևս խարխափում են առանց հավատի, սիրո, հույսի, ընկղմված խավարի, մեղքի մեջ։

Հայ ժողովուրդը Աշխարհի Լույսն ընդունողների մեջ առաջիններից մեկն է եղել։ Լույսը ծագեց հեռավոր Հրեաստանում, բայց Քրիստոսի անմիջական առաքյալներն և հայ ժողովրդի հայրենի առաջին մեծ լուսավորիչները՝ Ս. Թադեոսն ու Ս. Բարթուղիմեոսը, Հայաստան աշխարհ բերին ավետարանի Լույսը, որպես հայտնություն մեր լուսատենչ նախնիքներին։ Հայ ժողովուրդը, աշխարհի ամենահին ու կուլտուրական ազգերից մեկը, միշտ էլ մեծ խանդավառությամբ և ուրախությամբ է բացել իր մտքի ու հոգու լուսամուտները մեծ Լույսի առաջ։ Հայ ժողովուրդը, որպես լույսի կարոտ ժողովուրդ, իր ողջ պատմության ընթացքում ձգտել է

լուսավորության, լույսի շուրջը պտտվող թիթեռնիկների նման իր թևերը այրելով. բայց միշտ փյունիկի նման կենդանի մնալով լույսի իր ձգտումի մեջ։

Լո՜ւյս, ավելի՜ լույս... ահա թե ինչի՛ է ձգտում այսօր ողջ մարդկությունը։

Աշխարհը դեռևս, մարդկությունը առհասարակ, չեն լուսավորված Քրիստոսի Լույսով։ Կյանքը լույսի և խավարի, բարու և չարի կռիվն է, բայց վերջնական հաղթանակը այդ պայքարում պատկանում է լույսին, որովհետև լույսը կյանք է տալիս, լույսը գեղեցկություն է, լույսը սուրբ է և աստվածային։

Քրիստոնեությունը լույսի կրոնք է, լույսի հաղթանակը խավարի վրա, կյանքի հաղթանակը մահվան վրա, բարության հաղթանակը չարության վրա։

Թեթևհեմի անշուք մսուրում ծնված Լույսը, Երուսաղեմի Տաճարում Ս. Սիմեոնի բերնով հռչակված Լույսը արդարև կարող է հալածել խավարի, չարիքի իշխանությունը մարդկանց հոգիներից և լուսավորել բովանդակ տիեզերքն ու մարդկությունը, եթե մարդիկ հավատան այդ Լույսին և նրա զորության. «Իսկ որ ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատացեն յանուն նորա։ Քրիստոս իր աստվածային լույսը ծագեցնում է բոլորի վրա, առանց խտրության, ինչպես արևը ծագում է ողջ երկրագնդի վրա։ Բայց պետք է սրբել, մաքրել հոգու լուսամուտները, որպեսզի Նրա Լույսը անարգել կարողանա թափանցել մարդկանց սրտերի և հոգիների մեջ։

Հայ ժողովուրդը եղել է անցյալում լուսապաշտ ժողովուրդներից մեկը, լույսի գեղեցկության երկրպագող ժողովուրդներից մեկը, որ այս պատմական հողերի վրա կանգնեցրել է Լույսի խորան Ս. Էջմիածինը, և Արարատի կատարին, անպարան, վառել է Լուսավորչի կանթեղը, որ միշտ լուսավոր ու պայծառ մնա հարության հոգին, լույսը, հավատը։

Այդ Լույսը հրեղեն սյունի նման առաջնորդել է հայ ժողովրդին դեպի այսօրվա լուսապայծառ իրականությունը։

Քրիստոսի քառասնօրյա Ս. Տաճար ընծայման օրը, բոլոր հավատացյալների սրտառուչ մաղթանքն այն է, որ չարի հայության սրտից Լուսավորչի կանթեղը, Քրիստոսի Լույսը, մեր նախնյաց սրբազան հավատի կենդանի հուրը։

Թո՛ղ միշտ հայոց եկեղեցիներում և հայ ժողովրդի հոգում անշեջ շողա հավատի Լույսը։ Քրիստոսի Լույսը։ Ամեն։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

ԳԼՈՒԽ ՅՈՐԴՈՐԴ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

§ 1

Այսպես ուրեմն, Դանիելյան գրերը Հայաստան բերվեցին և ընդհանուր գործածության ստացան հայոց մեջ։ Աշխատությանս երրորդ մասին վերապահելով խոսել Դանիելյան այբուբենի կազմության մասին ընդարձակորեն, այստեղ նկատենք միայն, որ այդ այբուբենը ունենալով ինչ-ինչ թերություններ, չէր կարող լիովին լրացնել հայոց լեզվի պահանջները. բայց նաև չէր այնպես պակասավոր, որ մի անգամից փոքրն անպետք դեն գցվեր։ Այս պատճառով երկու տարի տևեց այդ այբուբենի գործածությունը (Սամվել Անեցին, հակառակ մյուս պատմագիրների ասածին, դնում է մեկ տարի). և վերջապես Մեսրոպ նկատեց, թե աշակերտների համար այնչափ հեշտ չէր վարժվել այդ գրերին. ուղղագրության և ընթերցանության սխալներ անշուշտ տեղի էին ունենում մեջտեղ, այնպես որ Մեսրոպ վերջապես ստիպվեց խափանել նրանց գործածությունը։

Կարող են տանք տարօրինակ գտնել այս դեպքը։ — Եթե Դանիելյան գրերը այնպես անկատար էին, միթե չէ՞ր կարող Մեսրոպ մի անգամից նկատել այդ. փ՞նչ սրեռոք կար երկու տարի փորձելու և երկու տարի հետո միայն նկատելու, թե անկատար են։ Այս մտածմունքը անշուշտ ստվեր պիտի ձգեր Մեսրոպի վրա։— Բայց ճիշտ հակառակն է։ Դանիելյան գրերը կարող ենք որոշ չափով համեմատել ատրերեն, արաբերեն, ֆրայցերեն և այլ այսպիսի այբուբենների հետ, որոնք թեև շատ պակասավոր, բայց ահա այսքան դարերն ի վեր գործածվում են և ո՞վ գիտի դեռ որքա՞ն ժամանակ պիտի գործածվեն։ Եթե այս պակասավոր այբուբենները կարողացան այսքան դարեր դիմանալ, նույնը կարող էր լինել նաև Դանիելյան այբուբենը։ Մեսրոպ աչքի առաջ ուներ հատկապես ատրական այբուբենը, որին ո՛չ միայն ատրմները, այլև հայերից շատեր վարժված էին։ Եվ, վերջապես, Մեսրոպի առաջին փորձը հաջողությամբ պսակված էր. առաջին աշակերտները կարողացել էին տիրել այդ տառերը. «ինոդրէին հայրէին ևս յարբայվ մանկունս մատաղս, որով գնշանագիրսն մարթեսցեն։ Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային...» (Կորյուն, էջ 9). ուստի Մեսրոպ մտածում էր, որ դժվարությունը անհաղթահարելի չէր։

Երկու տարվա փորձը ո՛չ թե ստվեր է ձգում Մեսրոպի վրա, այլ մեծ պատիվ է իրեն։ Պարսիկները, թյուրքերը և այլն հազարամյա գործածությունից հետո, նորերս միայն զգացին իրենց այբուբենի պակասավորությունը և դարմանելու կարիքը։ Իսկ եթե Մեսրոպ երկու տարուց կարողացավ զգալ, սրանից ավելի ի՞նչ մեծ պատիվ իրեն։ Չեմ ուզում շեշտել այն հանգամանքը, որ հիշյալ ազգերը թեև զգացին իրենց այբուբենի պակասավորությունը, բայց դարմանելուց շատ հեռու են։ Թյուրքերը ոչ շատ տարիներ առաջ

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № XI-ից, XII-ից և 1955 թվականի № I-ից։

միայն ինչպիսին իրենց այրուպենը և ընդունեցին եկեղեցականը, իսկ պարզիկները, աբբաները, աֆիսմանները և այլն դեռ մնում են իրենց սրբակատավոր այրուպենին կապված։ Մինչդեռ Մեսրոպ ոչաց և մեկ տարվա մեջ պարմանեց ամենադեղեցիկ կերպով։ Աստվա՛ ենք՝ չենք հիշում այս հանգամանքը, որովհետև առաջինների համար այժմ շատ ուշ է, գրականությունը արդեպս է տարածված, որ մեծամեծ ճիգերի պետք կա այնպիսի հին ու համաստարած մի միավորություն խափանելու, պակասավոր այրուպենը վերացնելու համար։ Մինչդեռ Դանիելյան դրերի գործածությունը դեռ չափազանց թարմ լինելով, շատ հեշտ էր խափանել ու վերացնել։

§ 2

Դանիելյան նշանագրերի խափանումով, Մեսրոպ դարձյալ ընկավ իր նախկին հոգսերի և մտածմունքների մեջ։ Երկու երանելի անձերը բավական ժամանակ աշխատեցան այս կացության դարման տանելու համար. «Ցնեա այնորիկ դարձեալ կրկին անդամ ի նոյն հոգս գառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ (Կորյուն, էջ 9)։ Վերջապես Մեսրոպ տեսնելով, որ Հայաստանում մնալով չպիտի կարողանա պատշաճորեն օգտվել, որոշեց անձամբ դիմել Միջագետք, խուզարկություններ կատարելու և իր ցանկությունը ի կատար ածելու համար։ Ուստի Վռամշապուհ թագավորի հրամանով և Սահակ կաթողիկոսի համաձայնությամբ, Մեսրոպ իր հետ առավ մի խումբ աշակերտներ և հրաժեշտ տալով նրանց, ճանապարհ ընկավ դեպի հարավ, ասորական քաղաքները։

Դժբախտաբար Մեսրոպի ճանապարհորդության հանգամանքները և ուղեգիծը մանրամասն չեն ավանդում պատմագիրները։ Այս մասին Խորենացին է, որ ավելի կատարյալ տեղեկություններ է տալիս, բայց դրանք էլ համաձայն չեն Կորյունին, որ ըստ մեզ ամենից վավերական աղբյուրն է։ Ստիպված ենք ուրեմն Կորյունի տված տեղեկություններով հյուսել մեր պատմությունը, քայլ առ քայլ գտնելով նրա ընծայած անորոշությունները և կասկածելի կետերը երևան հանելով։

Կորյուն անորոշ կերպով պատմում է, թե Մեսրոպ Հայաստանից դուրս գալով, այցելեց ասորական քաղաքները՝ Եդեսիա և Ամիդ. «Երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անուն» (Կորյուն, էջ 9)։ Այս խոսքերից այնպես է երևում, որ Մեսրոպ այցելել է նախ Եդեսիա և ապա Ամիդ, ինչպես ընդունում է նաև Տաղավարյան (էջ 26)։ Բայց մի պարզ ակնարկ քարտեզի վրա՝ բավական է համոզելու համար մեզ, թե չէր կարող Մեսրոպ նախ Եդեսիա և ապա Ամիդ մտած լինել։ Ամիդ, որ եթե այժմյան Տիգրանակերտը (Դիարբեքիրը) էր, նրանից էլ շատ հեռու չէ, գտնվում է լայնության 38° և երկարության 40° աստիճանների տակ, Մուշի հարավ-արևմտյան կողմը. իսկ Եդեսիա, որ այժմյան Ուրֆան է, գտնվում է լայնության 37° և երկարության 39° աստիճանների տակ, Տիգրանակերտի հարավ-արևմտյան կողմը։ Արդարև որ, եթե մի ուղիղ գիծ քաշենք Մուշից Եդեսիա, այդ ուղիղ գծի մեջտեղի կետը կլինի Տիգրանակերտը։ Հայաստանից մեկնող ճամբորդը նախ պետք է մտնի Տիգրանակերտ և այնուհետև միայն Եդեսիա։ Այսպես տրած պիտի լինի նաև Մեսրոպ, և երբ Կորյուն առաջինը Եդեսիա և երկրորդը Ամիդն է նշանակում, այդ կարգը ոչ թե ժամանակագրական կամ տեղագրական պետք է համարել, այլ ըստ արժանիքի։ Եդեսիան իր «համալսարանով» կարող էր պարծել ու պանծալ ամբողջ Միջագետքում, իբրև ամենից առաջնակարգ քաղաքը, մինչդեռ Ամիդը վաղուց ընկած լինելով, չուներ բնավ մի բան, նրա հետ համեմատվելու համար։

Հաստատ է ուրեմն, որ Մեսրոպ Վաղարշապատից մեկնելով և հավանաբար իր հայրենի Տարոն գավառից անցնելով, իջավ նախ Ամիդ և այստեղից էլ Եդեսիա։

Մեսրոպ թե՛ Ամիդի և թե՛ Եդեսիայի մեջ պատշաճավոր ընդունելություն գտավ. եպիսկոպոսները, կղերականները և իշխանները դիմավորեցին նրան և թե՛ իրեն և թե՛ իր աշակերտներին մեծարանքներ ցույց տալով, սիրալիր կերպով ընդունեցին ու պահեցին։ Կորյուն այս ընդունելությունը համառոտ կերպով պատմելուց հետո, հիշում է նաև այն երկու եպիսկոպոսների անունը, որոնք Մեսրոպին ընդունեցին՝ Բաբիլաս և Ակակիոս։ Բայց այստեղ էլ հիշատակությունը այնպես խառնակ է, որ անկարելի է որոշել, թե արդյոք Բաբիլաս Եդեսիայի և Ակակիոս Ամիդի՞ եպիսկոպոսն էր, թե՞ երկուսն էլ նույն Եդեսիա քաղաքի եպիսկոպոսներ էին. «Եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց, որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անուն։ Ընդդէմ լինէր սուրբն եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս, համեստերգ կղերականացն Բաղարին պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարդիս» (Կորյուն, էջ 9)։

Տաղավարյան (էջ 26) ընդունում է առաջին կարծիքը, այսինքն թե Բաբիլաս Եդեսիայի, իսկ Ակակիոս՝ Ամիդի եպիսկոպոսն էր։ Այսպես են նաև Մարկվարտ («Պատմու-

թիւն հայ նշանագրերուս, էջ 58), Գալուստ Տեր-Մկրտչյան («Արարատ», 1912 թ., էջ 508), Նահապետյան («Բազմավէպ», 1913 թ., էջ 136), Ադոնց («Հանդէս ամսօրեայ», 1925 թ., էջ 435) և Հ. Ն. Ակինյան («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 514)։ Վերջին երեքը տալիս են նաև Ակակիոսի համառոտ կենսագրությունը։ Ակակիոսը Ամիդի եպիսկոպոսական աթոռը գարձրացավ 400 թվականի մայիսի 9-ին՝ իբրև հաջորդ Մարտաստ. 409-ին գնաց Հազկերտ Ա.ի մոտ՝ Պարսկաստանի քրիստոնյաների խնդրով. 420-ին ներկա էր Ցահգալայի ժողովին՝ իբրև եպիսկոպոս Ամիդի։ Նույն թվականին Թեոդոս կայսեր կողմից ուղարկվեց Հազկերտ Ա.ի մոտ՝ բանակցելու համար խաղաղության մասին. 422-ին, երբ Մծբինի առաջ պարսիկները հաղթվեցին հույներից, Ակակիոս ծախեց Ամիդի եկեղեցու թանկագին անոթները և 7.000 գերի գնելով, Պարսկաստան ուղարկեց։ Վասակ Ծ. հիացած նրա այս արարքի վրա՝ կանչեց նրան իր պալատը՝ հայտնելու համար իր շնորհակալությունը։ Մեռել է 431 թվականին։

Բայց, ըստ ձևի, անշուշտ երկրորդ կարծիքն է ուղիղ. այսինքն թե՛ Բաբիլաս և թե՛ Ակակիոս նույն Եդեսիա քաղաքի եպիսկոպոսներն էին, և պատեղով անուններից՝ առաջինը Աստրոց եպիսկոպոսն էր և երկրորդը՝ Հոմանց։ Այս բանը երևում է նախ՝ Բաղարիի եզակի ձևից և երկրորդ՝ Կորյունի մյուս խոսքերից. «Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց... բերէր առ եպիսկոպոսն Աստրոց (Եդեսիոյ), որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր. վասն որոյ քաջում իսկ գովութիւնք յեպիսկոպոսացն սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային...» (Կորյուն, էջ 10)։ Սրանց մեջ եպիսկոպոսների համար միշտ հոգնակի թիվ տրվելուց երևում է, որ Բաբիլաս և Ակակիոս Եդեսիայի եպիսկոպոս էին, իսկ եզակի ձևը եպիսկոպոսն Աստրոց ասելուց էլ երևում է, որ սրանցից մեկն էր միայն Աստրոց եպիսկոպոսը, որ և սիրտ լինի Բաբիլաս։ Այս մասին իմ առաջին կարծիքը կհայտնեմ իր տեղում։

Ծանոթանանք այս անձավորության հետ։ Ինչպես տեսանք, Կորյուն այդ եպիսկոպոսի անունը դնում է Բաբիլաս. նույնը Խորենացին (Գ, ԾԷ) չնչին տարբերությամբ կոչում է Բաբիլոս։ Բանասերները նկատել են սակայն, որ Եդեսիայի ժամանակակից եպիսկոպոսների շարքում չկա Բաբիլաս, բայց կա Բաբիլաս կամ Բաբուլաս. ուստի ամենայն հաջողությամբ սրբագրել են Բաբիլաս։ Բ և Ր տառաձևերը այնքան նման են իրար, որ բնավ կասկած չկա, թե Կորյունի սկզբնագրում եղել է Բաբիլաս և հետո, գրչագրերի վրիպակով, դարձել է Բաբիլաս։ Այս սրբագրությունը առաջին անգամ առաջարկել է Զամչյան (Ա, էջ 492), որ ուղղում է Իրաբոս կամ Բաբիլոս, հետո Ավգերյան («Վիպակատար վարք սրբոց», Ե, էջ 290), որ նույնպես ուղղում է Բաբիլոս. որ և Իրաբոս։ Ավելի ուշ՝ Saint-Martin և այլն։ Ս. Վ. Պարոնյան («Ներկրագունդ», 1884 թ., էջ 540) դարձնում է Թաբուլաս, որ անշուշտ տպագրական սխալ է և պետք է կարդալ Բաբուլաս կամ Բարբուլաս։ Մինչև անգամ Խորենացու ձեռագրերից մեկում Գալուստ Տեր-Մկրտչյանը գտել է Բաբիլոս ձևը (տե՛ս «Արարատ», 1912 թ., էջ 508)։ Եվ Ֆենտգլյան իր Կորյունի հրատարակության մեջ արդեն մտցրել է Բաբիլաս ձևը։ Այս անունը զուտ ասորական բառ է և իբրև հասարակ անուն rabôlâ նշանակում է «summus pastorum հովվապետ» (տե՛ս Brockelm, «Lex. Syr.», էջ 345)։ Սրա հետևողությամբ կազմված է մեր մեջ Հայրապետ անձնանունը, որ գործածված է 13-րդ դարից սկսած։

Բաբուլասը հեթանոս էր, քրմի որդի, մայրը քրիստոնյա. ծնվել է Կեն-Նեշրինում. մեծ հարստության և բարձր դիրքի տեր էր։ Իմաստասիրական ուսմունքների մեջ զարգանալով, ընդունեց քրիստոնեությունը, գնաց Երուսաղեմ, այցելեց տնօրինական վայրերը, մկրտվեց Հորդանան գետում, դարձավ հայրենիք, վաճառեց իր բոլոր ստացվածները և դրամը բաժանեց աղքատներին։ Այնուհետև արձակեց գերիներին, թողեց կին, ընտանիք, պաշտոն, և Մեսրոպի նման քաշվեց անապատ՝ ճգնելու։ Իր գիտության և սրբության համբավը տարածվեց երկրում. և երբ Եդեսիայի Դիոգինես եպիսկոպոսը մեռավ, նրան հաջորդ ընտրեցին Բաբուլասին՝ 412 թվականին։ Երբ գտմարվեց Եփեսոսի ժողովը (431 թ.), ներկա էր նաև Բաբուլաս, որ մեծ հակառակորդ դուրս եկավ Նեստորականության դեմ, հալածելով նրանց և այրելով նեստորական գրքերը։ Ունեցել է ընդարձակ գրական գործունեություն, բայց իր գրվածքներից քիչ բան է հասել մեր ձեռքը։ Մեռել է 435 թվականին և իրեն հաջորդել է Իբաս[1]։

Peeters («Revue des études arméniennes», № 9, էջ 209) ասում է, թե այն ժամանակ, երբ Մեսրոպ եկավ Եդեսիա, Եդեսիայի նշանավոր Պարսկական դպրոցի գլխավորն էր Իբաս։ Անկարելի էր, որ Մես-

1. Բաբուլասի կենսագրությունը տե՛ս համառոտակի Գալուստ Տեր-Մկրտչյան, «Արարատ», 1912 թ., էջ 509 և, ընդարձակ, Հ. Հ. Թորոսյան, «Բազմավէպ», 1922 թ., էջ 99—104 և Ֆենտգլյան, էջ 83—84։

յոտ, Բաբելոնի և այլոց հետ ծանոթանալուց հետո, ծանոթացած չլիներ նաև այս Իրասի հետ։ Իսկ եթե Կորյունի մեջ ո՛չ մի հիշատակություն չկա այս մասին, դա ո՛չ մի արժեք չունի. և հետո, եթե որևէ բան գրված էլ լիներ, ապագային ջնջված պիտի լիներ, որովհետև Իրաս հետո նեստորական վարդապետության առաջնորդներից մեկը դարձավ։

Այնուհետև Կորյուն իր պատմության թելը այսպես է առաջ տանում. «Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ զտարեալն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յաստրի դպրութեանն կարգէր, և զոմանս յունական դպրութիւնն։ Անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, և նորա իւրովք հաւատարօք զտոմրականն առաջի եդեալ զաղօթս և զոգնութիւնս և զպաղատանս արտասուալից, դխսսամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշելով դասացեալսն մարգարէին, եթէ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցեսս։ Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ ոճան զտանելոյ։ Որում պարգևէր Խսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի տեսք աջովն իւրով, մշտանգիրս հայերէն լեզուին։ Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարդեալ, յօրինէր սիղոբայիք և կապօք։ Եւ ապա հրաժարեալ լեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ ողնականօք փութով իջանէր ի քաղաքն Սամոսատացւոց» (Կորյուն, էջ 9—10)։

Հատվածիս իմաստը շփոթ է և մանավոր քննության պետք կա պարզելու համար այն։ Առաջին տողերը ցույց են տալիս, թե Մեսրոպ իր հետ տարած աշակերտներին երկու խմբի բաժանելով, մեկը ոյուշեց դնել աստրական դպրոցը՝ աստրերեն լեզուն և գրականությունը սովորելու համար, իսկ մյուսը հունական դպրոցը՝ հունական լեզուն և գրականությունը ուսումնասիրելու համար։ Սրանցից առաջինը, այն է աստրական դպրոցը, անտարակուսելի է, որ գտնվում էր Եդեսիայում, աստրոյ եպիսկոպոսի հովանավորության տակ։ Կասկածելի է սակայն երկրորդը, այն է հունական դպրոցը։ Արդյոք այս դպրոցն է՞լ էր գտնվում Եդեսիայում (իմարկե հունաց Ակակիոս եպիսկոպոսի հովանավորության տակ), թե՞ մոտակա Սամուսատ քաղաքում։ Այս քաղաքը հին Կոմագենի մայրաքաղաքն էր, Եդեսիայի հյուսիս-արևմտյան կողմը, այժմյան Մարաշից ոչ շատ հեռու, Եփրատի աջ ափի վրա, լայնության 37° 30′ և երկայնության 38° 30′ աստիճանների տակ, որի տեղն այժմ Սամսատ գյուղն է։

Հունական դպրոցը Սամուսատում դնելու կասկածը ծագում է Կորյունի «անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր» բացատրությունից։ Գումարէր ձևը հասարակ բայ է և կարող է առնվել թե՛ ներգործական մաքով՝ «պատրաստեց ուղարկելու» (գումարեմ) և թե՛ չեզոք մաքով՝ «պատրաստվեց եղթալու» (գումարիմ)։ Առաջին դեպքում սուրբ խնդիրը աշակերտներն են, որոնց պատրաստում է Մեսրոպ՝ Սամուսատ ուղարկելու, որպեսզի սովորեն հունական դպրոցում։ Սրանից երևում է, թե Եդեսիայում հունական դպրոց չկար։ Երկրորդ դեպքում Մեսրոպ ինքն է, որ պատրաստվում է գնալու Սամուսատ՝ իր հնարելիք գրերի առթիվ։ Սրանից էլ հետևում է, թե Եդեսիայում, բացի աստրականից, կար նաև հունական դպրոց, ուր գրավ իր աշակերտների երկրորդ խումբը։ Եթե Կորյուն գումարէր բառի մոտ զնոսա կամ իմն բառը գրած լիներ, ամեն ինչ կպարզվեր և այնպիսի կասկածների տեղիք չէր մնա։ Ահա թե ի՞նչ է նշանակում մուտ գրել։

Բայց կարիք չկա կասկածելու, թե առաջինն է ուղիղ. այսինքն Մեսրոպ պատրաստեց իր աշակերտների երկրորդ խումբը՝ Սամուսատ ուղարկելու համար։ Այսպես են ցույց տալիս հետևյալ հանգամանքները.

ա) Առաջին խմբի վրա խոսած ժամանակ Կորյուն ասում է՝ «զոմանս յաստրի դպրութեանն կարգէր», բայց երկրորդի համար՝ «և զոմանս [ի] յունական դպրութիւնն». առաջինը ներգոյական և երկրորդը նախդրով հայցական դնելուց այնպես կարելի է մտածել, թե առաջին խումբը մնացել էր Եդեսիայում, իսկ երկրորդը պիտի գնար Սամուսատ։

բ) Գումարել «ուղարկել» իմաստով սովորական է հին հայերենում. ահա՝ սրա վկայությունները (տե՛ս Նորայր, «Քննասէր», Ստամբուլ, 1887 թ., էջ 17 և 79)։

1. «Սա խնդրեաց զՀրահատ որդի Գազաւնի, որ յեւ հօրն նորա մահուան՝ հանեալ յԱնդիշելի ամրոցէն, անդր ելս քան զԱռզաստան էր գումարեալս (Խորենացի. Գ, ծե)։

2. «Զգունդն առաջին տային ցներշապուհ Ռմբոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Ատրպատականաց աշխարհին» (Եղիշե, Գ)։

3. «Եւ զՄուշկան Նիւսալատուրա հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լբնաց և Ճղրաց» (Եղիշե, Է)։

4—5. «Եւ զՎարդան և զմեզ գնդաւ յԱղուանս ի կռիւ գումարեաց, և ինքն յանգգայս մեզ նենգեալ՝ յայս չար մղեաց... և դարձեալ գումարեալ գնա զօրու յԱղուանս,

ի վերայ Պարսկաց գումարտակին համարձակեցուցեր երթալ» (Փարպեցի, տպ. 1904 թ., էջ 84)։

գ) Եթե Մեսրոպ լիներ Սամուսատ դնալու պատրաստություն տեսնողը, տարօրինակ չէ՞, որ այդ պատրաստությունից հետո միայն, ինչպես նկարագրում է Կորյուն, տկսում է աշխատել հայոց գրերի վրա և երկար աշխատելուց հետո հաջողվում է հնարել։

դ) Ոմանք ոանտի ի Սամուսատական քաղաքն գումարէրս խոսքը Մեսրոպի համար առնելով, կարծում են, թե Մեսրոպ Եդեսիայից ճանապարհ ընկավ և իր աշխատություններն ու տառերի գյուտը ճանապարհորդության ժամանակ կատարեց։ Սա բացարձակ սխալ է, որովհետև, ինչպես Կորյուն որոշ կերպով պատմում է, այդ աշխատությունը վերջացնելուց հետո, նոր միայն Մեսրոպ հրաժեշտ է տալիս եպիսկոպոսներին (Բարիլասին և Ակակիոսին) և իր օգնականների հետ միասին իջնում Սամուսատ։

Տարօրինակ է հանկանում Տաղավարյան (էջ 26) Կորյունի պատմությունը։ Սա Մեսրոպին նախ Եդեսիա և հետո Ամիդ տանելով, այս քաղաքի մեջ է գնում հունական և ասորական դպրոցները, ուր մոնում են հայ ուսանողների երկու խմբերը։ Ամիդից հետո Մեսրոպ «Սամուսատական քաղաքն կիջնե, անշուշտ Հռուփանոսն տեսնելու համար և ապա... Սամուսատ կիջնե գտնալու Հռուփանոսը։ Ճիշտ այսպես։ Արդյոք Տաղավարյան Սամուսատական և Սամուսատ տարբեր քաղաքնե՞ր է կարծում և երկու էլ Հռուփանո՞ս է ընդունում։ Հապա ինչպե՞ս մեկնել այս կրկնությունը։ Իսկ Սարգսյան («Բազմավէպ», 1897 թ., հավելված ապրիլի. էջ 6—7) ենթադրում է, թե Մեսրոպ Սամուսատի մեջ գտավ Դանիելյան գրերը Հռուփանոսի հետ, այնտեղից գնաց Եդեսիա, այստեղ ավելացրեց մի քանի գրեր էլ, նորից եկավ Սամուսատ՝ Հռուփանոսի մոտ, գեղագրելու և թարգմանելու համար։

ե) «Եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եդեալ...» խոսքի մեջ և նորա ձևն էլ, որ երկրորդ դեպքում անհարմար պիտի գար, շատ պատշաճավոր դիրք է ստանում առաջին դեպքում։ Կորյուն ուզում է ասել, թե «Մեսրոպ աշակերտներին Սամուսատ ուղարկեց, իսկ ինքը սկսեց աշխատել իր ընկերների հետ՝ հայերեն գրերը գտնելու համար։

Եթե մեր այս պատճառաբանությունները ընդունելի համարվեն, այն ժամանակ պետք կլինի Կորյունի հրատարակության մեջ մի փոքրիկ կետադրական փոփոխություն մտցնել և պարբերությունն տալել «և նորա ձևից. «և զամանս [ի] յունական դպրութիւնն անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր։ Եւ նորա իւրովք հաւասարօք...»։

Այսպիսով պատմությունը հետևյալ ձևը կստանա.

Մեսրոպ Եդեսիայում իր աշակերտներին երկու խմբի բաժանեց. առաջինը դրեց ասորական դպրոցը, իսկ երկրորդը՝ որովհետև Եդեսիայում հունական դպրոց չկար, ուղարկեց մոտակա Սամուսատ քաղաքը՝ հունարեն սովորելու համար։ Այնուհետև, իր աշակերտների հոգսից ազատված, իր ընկերների հետ (իրովք հաւասարօք) բոլորովին անձնատուր եղավ խուզարկությանց ու քննությանց՝ իր ցանկալի նպատակին հասնելու համար։ Վերջապես երկար աշխատությանց անձանձրույթ համբերելուց հետո, հաջողվեց հնարել հայերեն գրերը՝ Եդեսիայում։

Ինճիկյան («Հնախօսութիւն», հատոր Գ, էջ 82) կարծում է, թե Մեսրոպ Եդեսիայի մեջ իր աշակերտների համար հատուկ հայկական մի դպրոց է բաց արել՝ Դանիելյան նշանագրերի ուսման համար, որ և համարում է «առաջին հայկական դպրոցը։ Բայց այսպիսի մի կարծիք, ինչպես ցույց է տալիս Ս. Վ. Պարոնյան («Երկրագունդ», 1884 թ., էջ 494), բոլորովին անտեղի է։ Մեսրոպի գործը ուրիշ բան չէր, եթե ոչ իր աշակերտներին մտցնել տեղական գրագրագույնս դպրոցները, փոքր ժամանակ, կատարելագործելու համար այն ուսումը, որ ստացել էին Հայաստանում։

Եդեսիայում, Մեսրոպ Հայերեն գրերը (հնչյունները) որոշելուց և նրանց յուրաքանչյուրին առանձին ձև տալուց հետո, նրանց անունները դրեց և որոշ դասավորությամբ շարելով՝ կազմեց մեր այժմյան հայերեն այբուբենը. «և անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիդրայիւք և կապօքս» (Կորյուն, էջ 10), կամ, միաբանի կազմած ընագրով՝ «նշանագրեալ և անուանագրեալ և կարգեալ, յօրինէր սիդրայիւք և կապօք և ձայնատու նշանօքս» («Արարատ», 1912 թ., էջ 510)։

Բայց պետք կար այս արդեն պատրաստ այբուբենը գեղեցիկ և կանոնավոր կերպով նկարել՝ կազմել նորակերտ գրերի տախտակը, որ հին լեզվով պենակիտ է կոչվում և մինչև վերջերս էլ ռամկական բարբառով պենակ էր կոչվում։ Մեսրոպ թեև քարտուղար, բայց ինչպես երևում է, չուներ գրչագրական

1. Այս օրագրությունը ես մտածել էի 1903 թվականին Շուշում։ Այժմ նկատում եմ, որ ինձանից 16 տարի առաջ նույնը առաջարկել է Նորայր, «Քրնաստրա, պրակ Ա, Սանկտ-Պետերբուրգ, 1887 թ., էջ 15։ Նորայր պատճառաբանություններ չի տալիս, բայց քրնում է զուգահեռել բայի ներգործական կիրառությունը, որ դնում եմ ես էլ այստեղ՝ Նորայրից փոխ առնելով։

կամ ավելի հիշտ՝ գեղագրական ոգվիստը։ Նա նկարիչ չէր։ Եղեսիայում անշուշտ կլինեին ծաղկողներ և գեղագիրներ, բայց նրանք ավելի ասորական մանվածապատ ոյորագրուցյա գրերին էին վարժված. ուստի Մեսրոպ լավագույն հմտարեց գնալ Սամոսատ, ուր, ինչպես տեսանք, կար նշանավոր հունական դպրոց, դիմել հունական մի դեղագրի և մի վայելուչ պնակիտ նկարիչ տալ։ Ուստի հրաժեշտ տարով եպիսկոպոսներին (Բարիլասին և Ակակիոսին), իր օրենականների հետ միասին, Եղեսիայից ճանապարհ ընկավ Սամոսատ։

§ 3

Ինչպես Եղեսիայում, նմանապես Սամոսատում լավ ընդունելություն գտավ Մեսրոպ։ Սամոսատի հույն եպիսկոպոսը և ժողովուրդը մեծամեծ պատիվներ ցույց տվին. «Յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր» (Կորյուն, էջ 10)։ Սամոսատի եպիսկոպոսի անունը չի հիշում Կորյուն, բայց ըստ Peeters-ի («Revue des études arméniennes», № 9, էջ 209) կոչվում էր Անդրեաս, որ Եղեսիայում նեստորական կուսակցության գլխավորներից մեկն էր։ Սամոսատում Մեսրոպ գտավ հունարենի մի գեղագիր Հռափանոս անունով, որին հանձնարարեց նկարել իր ցանկացած պնակիտը։ Հռափանոս վերցրեց Մեսրոպի պարզ սևագրությունը և նույն օրինակի վրայից պատրաստեց իր պնակիտը՝ տառերի կարճը կարճ, երկարը երկար պահելով, և նուրբ ու հաստ գծերը գեղեցիկ նկարելով. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռափանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զերբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (Կորյուն, էջ 10), կամ, ըստ Միարանի կազմած բնագրի՝ «զերբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն («Արարատ», 1912 թ., էջ 510)։

Կորյունի այս բառերը (նրբագոյն, կարճ և այլն) տեղիք են տվել զանազան սխալ բացատրություններին, զանազան հեղինակների կողմից։ Օրինակ՝ Ստեփան Նազարյան («Հիւսիսափայլ», 1860 թ., էջ 241) հասկանում է ձայնավորների կարճն ու երկարը և բաղաձայնի պարզն ու կրկնավորը։ Նույնպես Մարկվարտ (էջ 31) կարճ և երկայն բառերով հասկանում է ձայնավորների ամանակը (կարճ ու երկար ա, ե և այլն), առանձին և կրկնաւոր բառերով էլ հասկանում է լ—ղ, ր—ռ, ւ—վ տառերը, որոնցից լ, ր, ւ համարում է առանձին, իսկ ղ, ռ, վ՝ կրկնավոր (երկու ձայնից բաղկացած, իբր թե Ղ.=Ղ, ՐՌ=Ռ, ՒՒ=Վ)։ Իսկ նրբագոյն-ի մասին չի խոսում։

Սարգսյան էլ («Բազմավէպ», 1897 թ., ապրիլ, հավելված, էջ 7) հասկանում է միջին դարերի քերականական բացատրությունները, որոնց համաձայն նրբագոյն են կ, պ, տ, ծ, ճ, կարճ են ա, ի, ո, և երկայն են է, ով ձայնավորները և եւ, ը, իւ, կրկնաւոր են ը, գ, լ, փ, ջ, չ, ր, ռ, ց, առանձինն է՝ մնացյալը։

Այս բոլորը սխալ մեկնաբանություններ են։

Ամենից առաջ պետք է հարց տալ, թե ի՞նչ մարդ էր Հռափանոս և ինչո՞ւ համար Մեսրոպ դիմեց նրան։

Մինչև այժմ պատմվածներից մեզ հայտնի է, որ Հռափանոս գեղագիր էր («գրիչ ոմն հելլենական դպրութեան»,— ասում է Կորյուն և ոչ «դպիր») և Մեսրոպ դիմեց նրան իր կազմած տառերը գեղեցիկ կամ ճաշակավոր ձևով նկարել տալու համար։ Եթե այդպես է, ուրեմն վերի բառերն էլ տառերի գեղագրական ձևերը նշանակող բառեր պիտի լինեն և ոչ թե ուրիշ բան։ Եթե Հռափանոս քերականագետ կամ լեզվաբան լիներ, այն ժամանակ միայն կարելի էր սպասել նրանից քերականական ուղղումներ։ Ինչպես լեզվաբանությունը հաստատել է, 5-րդ դարում և ավելի առաջ հայերենը կարճ ու երկար ձայնավորներ չուներ, հետևաբար կարելի չէ Կորյունի կարճ ու երկայնը ձայնավորների ամանակի համար հասկանալ, ինչպես անում են Նազարյան և Մարկվարտ։ Բայց նույնիսկ եթե 5-րդ դարում հայերենը կարճ ու երկար ձայնավորներ ունեցած լիներ, Մեսրոպի կազմած այբուբենում չկա այդպիսի բան, ուստի Կորյունի առածը և Հռափանոսի արածը տարբեր բան պետք է լինի։

Նույնպես Կորյունի առանձինն ու կրկնավորը չեն կարող ձայնաբանական արժեք ունենալ։ Մի մարդ, որ իր լեզվի մեջ չունի այսինչ կամ այնինչ հնչյունը, չի կարող լսել ու զանազանել, երբ մի օտար հնչի։ Թյուրքն ու պարսիկը չեն կարողանում զանազանել ս և ց, զ և ձ ձայները։ Մենք էլ չենք կարողանում զանազանել վրացերենի ղ և ղ՝ ձայները։ Այսօր էլ եվրոպացիք չեն զգում մեր ր և ռ ձայների տարբերությունը և ո՞չ միայն եվրոպացիք, այլև նույն իսկ վրաստանի հայերը։ Այս դատողությամբ հույն Հռափանոսն էլ չպիտի կարողանար զանազանել հին հայերենի ր—ռ, լ—ղ, ւ—վ ձայները, որոնցից վերջին չորսը այսօր մենք էլ չենք կարողանում զանազանել։ Հայերենի 36 ձայներից առնվազն 15 հատը չէր

կարող զանազանել խեղճ Հռուփանոսը (ը, ժ, խ, ծ, ճ, ձ, լ, ճ, յ, շ, չ, ջ, վ, ռ, ց), էլ ինչո՞ւ պիտի դիմեր Մեսրոպ Սրան՝ այս տառերի ձայնաբանական զանազանությունը որոշելու համար։ Նշանակում է, թե այս բառերն էլ ուրիշ բան են նշանակում, քան ինչ որ ենթադրում է Մարկվարտ։

Մնաց նրբագոյն-ը։

Կորյունի հին հրատարակությանց մեջ մի բառ պակաս էր այստեղ, որ այժմ Կորյունի քննական հրատարակությունը գտավ ու ավելացրեց. այդ է—գնրբագոյնն և գլայնագոյնն։ Մի՛ միակ այս բառը կարող է դնել մեզ ուղիղ ճանապարհի վրա և ցույց տալ Կորյունի տված վեց բառերի իմաստը։

Այդ վեց բառերը տառերի գեղագրական ձևին էին վերաբերում. նրբագոյն-ը և լայնագոյն-ը նշանակում են տառերի հաստ ու բարակ գծերը. օրինակ Ն տառի գծագրության մեջ ձախակողմյան երկար սյունը և աջակողմյան կարճ սյունը ճաստ են, իսկ թեք բարակ է։ Այս է հայերեն տառերի ընդհանուր գեղարվեստական ոճը. հորիզոնական գծերը բարակ են, իսկ ուղղահայաց գծերը հաստ։ Այս է Կորյունի նրբագոյն և լայնագոյն կոչածը։ Այս բացատրությունից հետո, ինքնին հասկանալի է դառնում Կորյունի կարճ-ն ու երկար-ը, որով պիտի իմանանք տառերի երկար ու կարճ սյուները։ Սրա լավագույն օրինակը տալիս է Պ տառը, որի աջակողմյան սյունը երկար է, երկու ձախակողմյանները մին մյուսից կարճ։ Մնում է առանձին-ն ու կրկնաւոր-ը, որ նմանապես գեղագրական ոճի համար ասված պիտի լինի։ Ագեղյան, որ իր հոդվածում («Սովետական գրականություն», 1941 թ., № 2, էջ 45—46) ցույց է տալիս Մարկվարտի սխալները և շատ ճիշտ բացատրում է նախորդ չորս բառերի իմաստը, այստեղ Կորյունի առանձին բառով հասկանում է հայերենի ջոկ, մենակ մի տառով գրված հնչյունները, իսկ կրկնավոր բառով հասկանում է երկու տառով կազմված ու հնչյունը, որի հորինումը վերագրում է Հռուփանոսին։

Ես չեմ ընդունում գեղագիր Հռուփանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ։ Եվ ահա իմ պատճառաբանությունը։

Մեսրոպ Եդեսիայում կազմել էր արդեն իր այբուբենը. այստեղ որոշել էր նաև ու, ինչպես նաև ի գրելու ձևը։ Նա գիտեր, որ հույները գրում են երկտառ ու, իսկ ասորիները և պարսիկները գրում են վ և կարդում ու։ Ինքը Մեսրոպ հետևեց այս երկուսից որևէ մեկին. կա՛մ հետևեց հունարենին և հնարեց հայերեն ու ձևը, և կա՛մ հետևեց պարսիկներին ու ասորիներին և վ ձայնին տվեց նաև ու հնչումը։ Առաջին դեպքում Հռուփանոսի մասնակցությունը վերանում է։ Բայց երկրորդ դեպքում էլ չի կարող տեղի ունեցած լինել, որովհետև փորձից գիտենք, թե Մեսրոպ ընդունած էր մի տառին մի հնչյուն տալու սկզբունքը։ Ուստի չէր կարող պատահել, որ նա վ տառին նաև ու հնչյունը տված լիներ։ Մնում է ուրեմն ենթադրել, թե նա ու ձայնավորի համար նդեսիայում հնարել էր առանձին մի տառ (մի նշանից բաղկացած, ինչպես արեց հետո աղվանքերեն այբուբենի համար)։ Արդ, կարելի՞ է երևակայել, որ Մեսրոպ նախապես ու ձայնավորի համար առանձին մի տառ հնարած լիներ (ինչ որ մի մեծ առավելություն պիտի լիներ մեր այբուբենի համար), և հետո Հռուփանոսի դրդմամբ չնչած և հունարենի համաձայն հորինած լիներ ու երկտառը։ Այդ անկարելի է. ուստի երկու դեպքում էլ վերանում է Հռուփանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ և նրա հորինումը մնում է Մեսրոպին։

Կա նաև ա՛յն կետը, որ դժվար թե Կորյունը մի միակ ու-ի համար առանձին բաժանմունք ստեղծեր (կրկնաւոր) և մնացյալ բոլոր տառերը անվաներ առանձին։ Եթե ու-ի նման զուգատառ, բայց միաձայն կապակցություններ թիվը մի քիչ ավելի լիներ հայերենում (ինչպես գերմաներենում ch, sch, stch, ph, pf, ih, ie և այլն) կարելի էր այդ երկու բաժանմունքների գոյությունը ընդունել։

Պետք է ասել նաև, որ եթե մյուս չորս բառերը տառերի գծագրական ձևերն են մատնանշում, ինչո՞ւ այս երկուսն էլ՝ առանձին-ն ու կրկնաւոր-ը, նույնը չպիտի լինեն և ձայնաբանական երևույթներ պիտի նշանակեն։ Ես կարծում եմ, որ կրկնաւոր բառի սովորական ու տարածված իմաստը կասեցրել է մեր միտքը և առաջնորդել է մեզ սխալ մտածողության։ Բայց եթե աչքի առաջ բերենք կրկնել բառի հնագույն հայերեն նշանակությունը, որ է ծալել, ոլորել (տե՛ս Ծնոր Հարկիրքս, հատոր Ա, էջ 1136, սյունակ բ), որից և ծուռ կրկնել ածականը ծալելս, այն ժամանակ իհարկե կմտածեինք, որ նաև այստեղ կրկնաւոր նշանակում է ծալած, ոլորած։ Կրկնաւոր (կամ կրկնայար) բառով Կորյունը հասկանում է կլոր փութուքներ ունեցող տառերը, ինչպես Ժ, Թ, Ս, Զ, Ջ և այլն, իսկ առանձին բառով ուզում է հասկանալ Ո, Ս, Լ, Ր և այլն ձևի տառերը, որոնք ուղիղ, շիտակ, անջատ ու մենակ կանգնած են։

Հռուփանոսի մասնակցությունը հայերեն տառերի հորինման մեջ՝ առհասարակ պետք

է զուրս գցել ծրագրից։ Այն քննիչները՝ որոնք Հռուփանոսին մասնակից են դարձնում Մեսրոպյան տառերի հորինման գործին, ինչպես օրինակ Ստեփան Նազարյանը («Հիւսիսափայլ», 1860 թ., էջ 241), լավ ուշադրությամբ չեն կարդում Կորյունի խոսքերը. «Եւ անդէն ի նմին քաղաքի դրիչ ոմն հելլենական դպրութիւն Հռուփանոս անուն զտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զերբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկցուկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (Կորյուն, էջ 10)։ Վերջին երկու դերբայները, որոնք Կորյունյան ոճով իրար քայ են դործածված. իրեն ենթակա ունեն ո՛չ թե Հռուփանոսին, այլ Մեսրոպին, որ հիշված է շատ ավելի առաջ, ուրիշ բազմաթիվ դերբայներով։ Եթե յօրինեալ և յանկուցեալ դերբայների ենթական Հռուփանոսը լիներ, պիտի բառին հաջորդող որով հարաբերականը սեռական հոլով պիտի լիներ (որոյ)։ Բայց այսպես չէ, այլ դործիական հոլով է (որով)։ Ուրեմն և Հռուփանոսը մի դործիք է, մի միջոց, որով Մեսրոպ «լօրինել» և «յանկուցել» է իր տառերը. այսինքն ա՛յն տառերը, որ արդեն նդեսիայում, նախքան Սամուսատ դալը և Հռուփանոսին դտնելը, «ծնել էր» և «ճշանակել, անվանել և կարդել ու հորինել սիդորանոցով և կապերով»։

Սրանից ավելի պարզ և մեկին բացատրություն կամ վկայություն, որ խոպան ջնջում է ամեն մի կասկած ու տարակույս, չի կարող լինել։

Կանգնած է Մեսրոպ՝ իր սեռագրությունը ձեռքին, Հռուփանոս՝ դրիչն ու վրձինն առած. մեկ նայում է սեռագրին, մեկ նայում պռնակիտի վրա և պատրաստում հայերենի առաջին այբուբենական տախտակը։ Ավելորդ է ասել, որ այս նկարման միջոցին Մեսրոպ տալիս է միշտ իր ցուցմունքները Հռուփանոսին։

Տառերի ձևավորումից հետո, Մեսրոպ անմիջապես թարգմանության սկսեց, իր երկու հասուն աշակերտների ընկերակցությամբ, որոնցից առաջինի անունն էր Հովհան՝ Եկեղյաց գավառից, իսկ երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական ցեղից. «Ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբ երկուք, աշակերտօքն իւրովք...» (Կորյուն, էջ 10)։

Թարգմանության համար Մեսրոպ ընտրել է նախ Սողոմոն իմաստունի Առակաց դիրքը և իր պաշտելի բերանով տուն տալով կեղտոտ Հռուփանոսին՝ թելադրել է հայերեն առաջին խոսքը.

ԱՌԱԿԱՑ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐԴՈՅՈՑ ԴԱՒԹԻ ԹԱՐԳԱՒՈՐԻ ԻՍՐԱՑԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶՐԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ։

. . . . . .

Այս ընտրությունը պատահական չէր. նրա՛ համար Առակաց դրքից սկսեց Մեսրոպ, որովհետև այս դիրքը հենց սկզբից խրատում էր ճանաչել իմաստությունը և կրթությունը. հասկանալ հանճարի խոսքերը. և գիրը, որ սկիզբն էր կրթության և գիտության, կարո՞ղ էր սրանից ավելի դեղեցիկ զուդադիպություն ունենալ։ «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց» (Խորենացի, Գ, ծգ).— «Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմանի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Կորյուն, էջ 10)։

Հռուփանոս ո՛չ միայն իր դեղեցիկ զրչով գրեց հայերեն առաջին դիրքը՝ Սողոմոնի Առակաց դրքի թարգմանությունը. այլև իր մոտ աշակերտ առնելով Մեսրոպի բերած աշակերտներից մի քանիսին, սկսեց սովորեցնել նրանց հայերեն դեղագրության արվեստը, որպեսզի նրանք էլ Հայաստան դառնալով տարածեն իրենց հայրենակիցների մեջ. «Որ և զրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով մանկունս գրչոն նմին դպրութեանն» (Կորյուն, էջ 10).— «Միանգամայն և զարուեստս գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկադոյն աշակերտացն» (Խորենացի, Գ, ծգ)։

Ինճիճյան («Հնախօսութիւն», հատոր Գ, էջ 83) հետևցնում է այս խոսքերից, թե Մեսրոպ Սամուսատի մեջ բաց է արել առաջին հայկական դպրոցը՝ Մեսրոպյան դրերով, ուր աշակերտել են իր աշակերտները, որոնց Հայաստանից Միջագետք էր բերել, ինչպես և Սամուսատի հայ քնակիչների որդիները։ Սա նշանակում է ժամանակակից մի հեղինակի թեթև մի խոսքը ավելորդաբար ընդարձակել ու լայնացնել։

(Շարունակելի)



Ա. ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ*

1214 թվականին Հովհաննես սարկավագ Հռոմկլայեցին, դարձյալ Հռոմկլայում, գրում է մի ավետարան, որ այժմ գտնվում է Երևանի Պետական ձեռագրատանը։ Հիշատակարանում արձանագրված է. «...Գրեալ եղև ձեռամբ նուաստ գրչի Յովհաննիսի սարկավագի... [Հռոմ]կլայցո[ւ]՝ յաստուածապահ ղեկիս հայրապետանիստ քաղաքիս Հայոց»։

1231 թվականին վաստակավոր գրիչ Թորոսը, Հռոմկլայում, Տեր Դավիթ եպիսկոպոսի խնդրանքով, բոլորգրով գրում է «Գիրք դատաստանի», որի հիշատակարանում ընդգծվում են. «Ի թուականութեանս Հայոց ՈՁ (680+551=1231), ի թագաւորութեանս Հեթումոյ՝ որդւոյ Կոստանդեայ իշխանաց իշխանի... գրեցաւ գիրքս այս ձեռամբ մեղաւոր և տխմար գրչի Թորոսի, ի յաստուածապահ անառիկ ղեկակս Հաւռոմկլայս»։ Ձեռագրի հիշատակարանում կան նաև պատմական այսպիսի թանկագին տեղեկություններ. «...Արդ ի յայս ամի եկաւ ազգ մի, որ կոչի թաթար, և փախստական արար զպարսկաց թագաւորն և աւերեաց զպարսկաց աշխարհն և երեկ ընդ Միջագետաց ի վայր մինչև յԵդեսա և Սամուսատ և կոտորեաց բազում թուրք և քուրդ և քրիստոնէք և էառ բազում...»։ Ձեռագիրը Փարիզի Ազգային մատենադարանի սեփականությունն է։

1238 թվականին Թարսեղ գրիչը, Հռոմկլայում, Մարկոս արքեպիսկոպոսի համար, բոլորգրով, արտագրում է Մխիթար Գոշի «Գիրք դատաստանացդ», որ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում։ Առանձին արժեք են ներկայացնում ձեռագրի հիշատակարանի հետևյալ տողերը. «Փառք Աստուծոյ յաւիտեանս, ամէն։ Ի թուին ՈՁԷ (687+551=1238) գրեցաւ Գիրքս դատաստանաց առ ապն մեծ գետոյս, որ կոչի Եփրատէս, առ ստորոտ աստուածապահ ղեկիս Հռոմկլայ կոչեցեալ, ի հայրապետութեան Տեառն Կոստընդնա, ի չար և ի դառն ժամանակի, յորում նշանք երևելիք եղեն, քանզի մեռաւ երիս սուլտանս՝ Հռոմոցն և Շամբիս և Մսրայն։ Եւ արդ գրեցաւ սա ձեռամբ Թարսղի մեղապարտի և փցուն գրչի... Մատնեցաւ աշխարհն Հայոց ի ձեռն խուժադուժ ազգացն, որ կոչի դադար, քանզի յաւարի էառ զաշխարհն ամենայն առ հասարակ, բազում քաղաքս և ատանս, և բազում եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք և սարկաւագունք և իշխանայք և ազատք և շինականք և բազում ա՛յլ ևս կանայք և մանկտիք, զի ոչ կարէ ոք ընդ գրով արկանել, զոր ըմբռնեցին ընդ ձեռամբ իւրեանց»։

* Շարունակված սմսագրի 1955 թվականի № 1-ից։

1244 թվականին նշանավոր գրիչ և ծաղկող Կիրակոս քահանան, Հռոմկլայում, մագաղաթի վրա, բոլորգրով, Կոստանդին կաթողիկոսի համար, գրում է մի ավետարան, որը «ծաղկերանդ զարդարեալ ոսկով և երփներփն դունիւք։ եւ կազմեալ ոսկւով և արծաթով։ Գեղարվեստական ուրույն արժեք ներկայացնող այս ձեռագիրը Վենետիկի Մխիթարյան միաբանության սեփականությունն է։ Հիշատակարանից արժեքավոր են հետևյալ տողերը. «Փառք քեզ... Շնորհիւ ամենախնամ ողորմութեանն Աստուծոյ՝ յանդ հլեալ աւարտեցաւ աստուածախաւս մատեան... յաշխարամուտ աթոռս Հռոմկլա... ի թուականութեանս Հայոց ՈՂԳ (693+551=1244)... ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ քրիստոսասպասակ թագաւորի... և իմ ըստ կարի ջան տարեալ գրեցի և պատուական երանգաւք և յոսկւոյ սրբոյ զարդարեցի զսա... Գրեալ ե|ղե|և ի դառն ի խուճապուտ ժամանակի, յորժամ ել ազգն խուժադուժ, ոչ կոչի Տաթար, և սպառեաց զամենայն հասակ յերկրէ, և մնացեալքս՝ ի յերերս եմք ի յահէ նոցա... Արդ, որք վայելէք զսա կամ աւրինակէք, յիշեսջի՛ք... թագաւորին Հեթմոյ, որ և նա փոխեալ ի Տէր։ Աղաչեմ յիշել ըղձիւ... ղչքնաղ և գամենավայելուչ պատանին ղԼեւոն՝ զորդի թագաւորի Հայոց Հեթմոյ, զքրիստոսասէր թագուհին ղՁաբէլ, զի տացէ նոցա Տէր Աստուած խաղաղութեամբ թագաւորել ի վերայ Հայոց ազգին... Աղաչեմ յոքնամեղ գրիչս Կիւրակոս, որ և անյիշելի անուն, յիշել զեղկեալիս և խնդրել թողութիւն բազմամեղիս և ծնաւղաց իմոց»։

1248 թվականին նույն Կիրակոս գրիչը, ընտիր մագաղաթի վրա, շատ գեղեցիկ և խոշոր բոլորգրով, գրում է Բարձրբերդի ավետարանը, որի արծաթապատ կազմը 1252 թվականի հայ ոսկերչական արվեստի թանկագին նմուշներից մեկն է։ Գրչության տեղն է «յամրակառոյց և յաշխարհամուտ գղեակս Հռոմկլայ»։ Կարդանք հիշատակարանի հետևյալ տողերը. «Փառք քեզ... և ես ըստ կարի իմում լցի զփափագ նորին և գրեցի զսա յամրակառոյց և յաշխարհամուտ գղեակս Հռոմկլայ... Արդ էր թուականս Հայոց ՈՂԷ (697+551=1248) յորժամ աւարտեցաւ սուրբ գիրս, և թագաւոր էր Հայոց քրիստոսասպասակն Հեթում, որ առաւելեալ էր քաղցր և բարի բնութեամբ՝ հնգից որդոց եղեալ հայր. առաջնոյն Լեւոն, որ յանուն հաւուն իւրոյ, որ է աւրհնութեան շառաւեղ և բարի պատանի... Պաղատիմ յոգնամեղ գրիչս Կիւրակոս առնել արժանի յիշատակի և զիմ պանարժանութիւնս և խնդրել թողութիւն բազում մեղաց իմոց և ծնաւղաց իմոց և ամենայն երախտաւորաց իմոց»։ Ձեռագիրը մանրանկարչական արվեստի տեսակետից արժանի է առանձին ուշադրության, հավանորեն վրձինել է Կիրակոսը։ Գտնվում է Անթիլիասի Կաթողիկոսարանի թանգարանում։

1249 թվականին վաստակավոր գրիչ և մանրանկարիչ Կիրակոսը Հռոմկլայում գրում, նկարազարդում և հայ արվեստին է նվիրում մի նոր ձեռագիր։ Դա ընտիր, փափուկ մագաղաթի վրա, գեղեցիկ և խոշոր բոլորգրով գրված և նորը վրձինով նկարված մանրանկարչական արվեստի մի թանկագին ավանդ է, որը զարդարված է ոսկեջրած արծաթապատ և պատկերավոր կազմով։ Դա ՉԴ=1255 թվականին քանդակված հայ ոսկերչական արվեստի արժեքավոր մի ստեղծագործություն է։ Ձեռագրի մանրանկարների նուրբ երանգները և ոսկեզօծ ֆոնի վրա պատկերվող կապույտ-վարդագույն թևերով ու մանիշակագույն պոչերով վրձինված սիրամարգերն առանձին գրավչություն են տալիս նկարներին, իսկ կարմիր երանգավորումները խորացնում են նկարչական տպավորությունը։ Սակայն, ձեռագրի մի այլ գեղեցկություն Լեւոն Գ.ի պատանեկության նկարն է, որ վրձինված է ՈՂԸ=1249 թվից հետո։ Այս ավետարանը Կոստանդին կաթողիկոսը «շնորհում է» Հեթում թագավորի որդուն՝ պատանի թագաժառանգ Լեւոն Գ.ին, ինչպես այդ ցույց են տալիս հետևյալ տողերը.

«Տեառն Կոստանդեա|յ| կաթողիկոսի
Ձաւետարանս այս [ը]ղձալի
Շնորհեալ սանու իւր Լեւոնի՝
Որդոյ Հեթում թագաւորի...
Ի յիշատակ իւր յաւիտեանս»։

1263 թվականին Լեւոն Գ. թագաժառանգը ձեռագիր ավետարանը նվիրում է իր քրոջը՝ «տաճ» Ֆիմիին։ Հիշատակարանում կարդում ենք. «Փառք քեզ... Աւարտեցի զսա ի սուրբ և յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա... ի թա-

դաւորութեանս Հայոց Հեթմոյ բարեպաշտի և որդւոց նորա բարի շառաւեղաց՝ Լեւոնի և Թորոսի և սրբահոգի թագուհոյ իւրոյ Զապելի... Յերեսս անկեալ յոքնամեղ գրիչս Կիւրղակոս] յիշելի։ Ձեռագիրը գտնվում է Երեվանի Պետական ձեռագրատանը։

1253 թվականին, «ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ պայծառահաւատ թագաւորի, և բարեպաշտ որդոյ նորա Լեւոնի», տաղանդավոր գրիչ և նկարիչ Հովհաննես արվեստագետի ձեռքով, Հռոմկլայում, գրվում է և նկարազարդվում մի ձեռագիր, որ իր գրչությամբ և մանրանկարներով կիլիկյան արվեստի լավագույն ստեղծագործություններից մեկն է։ Գտնվում է Վաշինգտոնի «Freer Gallery of art»-ում։

1273 թվականին տաղանդավոր գրիչ և մանրանկարիչ Գրիգոր երեցը Հռոմկլայում գրում է մի «Նարեկ», որի գեղարվեստական արժեքը Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը բնորոշել է այսպես. «Նույն արվեստագետի, այսինքն Գրիգոր երեցի, գործն է Էջմիածնի № 1561, սքանչելի, փոքր երկաթագրով Նարեկը, գրված և նկարազարդված ՈՒԲ (722+551=1273) թվին։ Ձեռագիրը ունի սկզբում մի խորան, նաև Նարեկացու երեք տեսակ մանրանկարները, որպես փիլիսոփա, որ նստած գրում է, որպես ճգնավոր հունական զգեստավորությամբ՝ ձեռքին ավետարան և խաչ բռնած, կանգնած դիրքով, որպես աղոթող՝ ծունկ չոքած Հիսուսի առաջ, որ նստած է գահույքի վերա ciborium-ի տակ։ Լուսանցքի զարդերը շատ գեղեցիկ են, քնքուշ, ակնապարար և հանկուցիչ՝ ուշադրության արժանի հատկապես սկզբնավորության Ջ մանրանկարչական տառը։ Բայց բարդ չեն գույները և ոչ էլ անզգալի նյուանսներով խաղեր ունի, ինչպես կիլիկյան շրջանի ԺԳ. դարի ձեռագիրները, բայց որոշ չափով նկատելի արդեն բյուզանդական ազդեցություն։ Ստացողն է Ներսես Լամբրոնացին պատանի հասակում, հավանորեն, երբ ուսանում էր դեռևս Հռոմկլայում։

Այս ձեռագրերը գրչական ու մանրանկարչական արվեստների լավագույն ստեղծագործություններ են և ցայտուն գաղափար են տալիս Հռոմկլայի մանրանկարչական, գեղագրական և ձեռագրային մշակույթի ձևակերպումների և նվաճումների մասին։ Թերևս այդ երևույթով էլ պիտի բացատրել, որ Հռոմկլան իր ժամանակին մեծ հռչակ է վայելում, որին ժամանակի գրիչները նվիրել են բազմաթիվ գնահատական տողեր։ Դեռ 1173 թվականին գրված և 1549 թվականին Ատոմ աբեղայի գրչով երուսաղեմում ընդօրինակված «Պատմութիւն սուրբ հարանց» խորագրով ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Զանմատչելի ամրոցն Հռոմկլայ՝ մերձ առ ափն ադինաբուղխ գետոյն Եփրատայ», իսկ 1179 թվականին գրված ձեռագրի հիշատակարանում, որի հեղինակն է ականավոր մատենագիր, մեկնիչ և հզոր ճարտասան Ներսես Լամբրոնացին, ընդգծված են հետևյալ տողերը. «...թարգմանեցաւ աստուածային «Յայտնութեանս մեկնութիւն» ի թուիս Հայոց ՈՒԸ (628+551=1179) ի սուրբ և ի հայրապետական աթոռն, որ կոչի Հռոմկլայ, շրջապատեալ յաղենական աղբերէն Եփրատայ, որ մասամբարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս ինամօքն Աստուծոյ։ Կարդանք նաև Գրիգորիս դպրի «Մեկնութիւն Ղուկասու աւետարանին» խորագրով ձեռագրում 1204 թվականին արձանագրած այս տողերը. «...Յաստուածապահ գղեակս Հռոմկլա» կամ «Յանառիկ և յանմատոյց գղեակս Հռոմկլա՝ յաթոռս հայրապետականս։ Ահա նաև Թորոս գրչի 1231 թվականին գրած բնորոշումը. «Յաստուածապահ անառիկ գղեակս Հռոմկլայս», իսկ Հովհաննես «անարժան և անպիտան գծող» և գրիչը 1241 թվականին գրել է. «Մեծ և հռչակաւոր գղեկին Հռոմկլա»։

Այս տաղանդավոր արվեստագետներն իրենց ստեղծագործություններով Հռոմկլայի գրչության, գեղագրության և մանրանկարչության մշակույթը բարձր զարգացման են հասցնում։

Տաղանդավոր բանասեր Գարեգին Ա. Կաթողիկոսը Հռոմկլայի դերը բնորոշել է այսպես. «Կիլիկիայում հառաջ են գալիս գիտության և արվեստի երեք մեծ կենտրոններ՝ Դրազարկը, Հռոմկլան և Սկեռան, հայ իշխանությունների ուռճացման և քաղաքական ու եկեղեցական ազատ կյանքի տիրապետության հետ։ Դրազարկը իշխանական և

թագավորական տան, Սկևռան Լամբրոնացիների, իսկ Հռոմկլան հայրապետական աթոռի Դրազարկի հետ պետք է մի համարել Գոնների և Ակների վանքերը, որ 13-րդ դարում ծաղկեցան, հատկապես, Հովհաննես արքայեղբոր առաջնորդությամբ, բայց ադդված Հռոմկլայի դպրոցի կողմից («Հայաստանյայց Եկեղեցի», № 1, 1942 թ., էջ 85)։

Ահա կիլիկյան գրչական ու մանրանկարչական արվեստների այս դպրոցում՝ Հռոմկլայում, Թորոս Ռոսլինը մշակում է և զարգացնում իր հոդում թագնված կեղարվեստական տվյալները։ Նա առանձնապես ձևակերպվում է 13-րդ դարում սիրված ու հարգված տաղանդավոր գրիչներ, ծաղկողներ և առաջնակարգ մանրանկարիչներ Կիրակոս և Հովհաննես արվեստագետների մոտ։ Այդ հանգամանքը հաստատում է Երուսաղեմի № 1956 ձեռագիրը, որ նկարազարդել է Թորոս Ռոսլինը և որի հիշատակարանում իր սիրելի մի ուսուցչին հիշատակում է. «Եվ ե չքնաղագեղ գրիչն Կիրակոս։ Նույն երեվույթն է ընդգծում Գարեգին Ա. Կաթողիկոսն իր «Հիշատակարանք ձեռագրաց»ի 1150-րդ էջում. «Թորոս Ռոսլին, գրիչ, աշակերտ՝ Կյուրակոս գրչի և նկարչի, ԺԳ. գարի երկրորդ կիսում», իսկ «Հայաստանյայց Եկեղեցիի (1942 թ., № 1) 107—108-րդ էջերում գրել է. «Գրչի եղբայրն է Անտոն. տարաբախտաբար չի տալիս յուր ծնողների անունները, որոնց «երախտաւոր» է անվանում և ոչ ուսուցիչների անունները, որ մենք կարծում ենք Կյուրակոս և Հովհաննես գրիչները... մանրանկարիչներն են։ Հավանորեն սրանց համեմատությամբ է, որ իրեն «փոցուն և տխմար» է անվանում։

Ռոսլինի վարպետ վրձինի շնորհիվ էլ 13-րդ դարում Հռոմկլայի և գլխավորապես կիլիկյան մանրանկարչական արվեստ առանձին փայլ ու երանգ է ստանում և ուշադրավ նվաճումներ անում։ Ահա թե ինչու 13-րդ դարի երկրորդ կեսի հայ գրչության և մանավանդ մանրանկարչության արվեստների պատմության մեջ Ռոսլինը պատվավոր տեղ է գրավում։

5. ԷՋԵՐ ՌՈՍԼԻՆԻ ՎՐՁԻՆԻՑ ՈՒ ԳՐՉԻՑ

Կիլիկյան մանրանկարչության մեծագույն արվեստագետ Թորոս Ռոսլինից, 13-րդ դարի մեծ վարպետից, մինչև օրս մեզ հասել են տասնմեկ նկարազարդ ձեռագրեր, որոնք իրենց բարձր արվեստով, նուրբ երանգների սքանչելի ներդաշնակությամբ և բանաստեղծական բովանդակությամբ պատիվ են բերում տաղանդավոր նկարչի վրձինին։

Ռոսլինի հայ նկարչական մշակույթին նվիրած այդ ձեռագրերը մանրանկարչական արվեստի թանկագին ավանդներ են, որոնց ա՞յնքան նուրբ և գեղեցիկ նկարներն այսօր ո՞չ միայն ցայտուն դաղափար են տալիս նկարչի հմուտ վրձինի և գեղարվեստական պայծառ դիմագծի մասին, այլև ընդգծում են նրա անցած ստեղծագործական ուղին և որոշում նրա տեղն ու դերը հայ մանրանկարչական արվեստի պատմության մեջ։

Այստեղ պատկերենք նրա վրձինի ու գրչի աշխատանքները[1]։

1256 թվականին Ռոսլինի նկարազարդած ձեռագիրը Կիլիկիայի մանրանկարչության թանկագին աղբյուրներից մեկն է, որը նկարչի արվեստին պատիվ է բերում։ Դա Զէյթունի ավետարանն է, գրված «յամի 9 և ե» (105+551=1256) թվականին, «յանտիկ ղղեակս Հռոմկլայ», «Հրամանաւ և ծախիւք ա[ստուա]ծապատիւ տ[եառ]ն Կոստանդին

[1]. Հռոմկլայի դպրոցի և Ռոսլինի վրձինած ձեռագրերի մի մասն ուսումնասիրել է Ռ. 1925—1927 թվականներին, երբ Երևանի Պետական Թանգարանի պատմագրական բաժնում, որպես գիտական աշխատավոր, պաշտոնավարում էինք, իսկ մյուս ձեռագրերի մերկուծության համար գլխավոր աղբյուրներ ունեցել ենք՝ Ալիշանի «Սիսուան» և «Հայապատում», Գարեգին Ա. Կաթողիկոսի «Խաղբակյանք կամ Գոշյանք», մանավանդ «Հիշատակարանք ձեռագրաց» և «Կոստանդին Ա. Կաթողիկոս», Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմելյանի «Մայր ցուցակ Բ.», «Կիլիկյան գրչագրեր Երուսաղեմի մեջ», «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի և Անթիլիասի», Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես», Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանի «Թորոս աղբարա», Նորայր եպիսկոպոս Գոզարյանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց», Հ. Բարսեղ Սարգսյանի «Ձեռագրաց ցուցակ» և ուրիշներ։

կաթուղիկոսի Հայոցս Ուշագրավ են Ձեռագրի Հիշատակարանում Ռոսլինի իր մասին գրած հետևյալ տողերը. «...Վասն այնորիկ իմոյ անարժանութեան, փցուն և տխմար գրչի Թորոսի մականուն Ռաւլին կոչեցելոյ ըստ նախնեացս։

1260 թվականին Ռոսլինը Հռոմկլայում, ընտիր մագաղաթի վրա, 19×7 սմ. մեծությամբ և բոլորգրով գրում է ու նկարազարդում մի նոր Ձեռագիր, որը նկարչի գրչության և մանրանկարչական արվեստի միջ ուրույն տեղ է գրավում։ Դա հրուսաղեմի

Հիսուսի հայտնվելը աշակերտներին Հաբուրյունից հետո
(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.ի Ձեռ. № 197)

№ 251 աւետարանն է, որին առանձին փայլ են տալիս վարպետորեն վրձինված խորանները, սկզբնագարդերը, ավետարանիչները և տերունական նկարները։

Սակայն, Ռոսլինի Հռոմկլայում վրձինած ամենաճոխ ձեռագիրը Սեբաստիայի Ս. Նշան վանքի նշանավոր ավետարանն է։ Դա մանրանկարչական արվեստի տեսակետից վերին աստիճանի արժեքավոր մի գրչագիր է, որը գրված է 1262 թվականին, ընտիր մատեանի վրա և երկաթագրով։ Գտնվում է Բալթիմորի Walters Art Gallery-ի մեջ։ Գրիչն է հենց Թորոս Ռոսլինը։ Ահա գլխավոր հիշատակարանից մի էջ. «Նմին իրի ստանայր կրկին անգամ զմատեան սրբոյ աւետարանիս յիմմէ անարժանութենէ Թորոսէ մականուն Ռաւլին կոչեցելոյ, որ և ըստ կարի իմում յանգ հանի Ա[ստուծո]վ զհրաման նորա, նոյնպէս զարդարեալ ոսկւով սրբով և երանգ երանգ գունաւք...»։ Խնդրում է հիշել նաև «զարքեպաշտ արքայն Հեթում և զսրբահոգի թագուհին իւր Զապէլ՝ դուստր Լեւոն արքայի... և զպարոն Թորոս և զամենայն նախնիս իւրեանց, որք և անուանին

Ռորինեանք։ Հիշել աղաչեմ և զթագաւորահայրն պարոն Կոստանդին ուստիւաք և դստերաքս։ Ձեռագրի գեղեցկությունը կազմում են սքանչելի խորանները, ավետարանիչների սիրուն պատկերներն իրենց սկզբնագարդերով, ընտիր լուսանցազարդերով և մանրանկարչական տառերով։

Ռոսլինի նկարազարդած ձեռագրերի մեջ ուրույն տեղ է գրավում կիլիկյան շրջանի առաջնակարգ գրիչներից Ավետիս քահանայի գրչով գրված ձեռագիրը, որ այժմ գտնվում է Երուսաղեմի վանքի մատենադարանում։ Դիս № 2660/105, ազնիվ մագաղաթի վրա, բոլորգրով և Հռոմկլայում գրված ավետարանն է ՉԺԱ=1262 թվականին՝ «հրամանաւ մեծի և բարեպաշտի և իշխանաց իշխանին պարոն Լեւոնի Աստուծով որդւոյ քրիստոսապատակ և սուրբ արքային Հեթմոյ թագաւորի ամենայն հայոց»։ Ձեռագրի նկարչական գեղեցկությունը կազմում են Թորոսի վարպետ վրձինով նկարված ավետարանիչների պատկերները, խորանները և սկզբնագարդերը։ Բայց գրչագրի մանրանկարների մեջ կենսրոնական տեղ է գրավում մի թանկագին

Հիսուսի Հարությունը

(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.-ի ձեռ. № 979)

Մատթեոս ավետարանիչը
(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.ի ձեռ. № 2029)

պատկեր, որ պատմական տեսակետից մեծ արժեք է ներկայացնում։ Դա գահաժառանգ Լևոն Գ.ի և Կեռան թագուհու ամուսնության նկարն է։ Նկատենք, սակայն, որ մի անբարեխիղճ ձեռք մասամբ եղծել է Լևոնի դեմքը։ Մանրանկարն ունի ոչ միայն գեղարվեստական ու պատմական, այլև ազգագրական արժեք։ Այն ցայտուն գաղափար է տալիս արքայական զգեստի մասին, որ բյուզանդականի նմանությամբ այնքան հետաքրքիր է։ Ձեռագիրը պարզում է նաև Լևոն Գ.ի և Կեռան թագուհու ամուսնության թվականը։ Թանկագին փաստաթղթեր են նաև ավետարանի հիշատակարանները, որոնք ժամանակի պատմական դեպքերի ուրույն էջերն են լուսաբանում։

Ահա 13-րդ դարի մանրանկարչական արվեստը պատկերող մի այլ գեղեցիկ ձեռագիր ավետարան, որ նույնպես խնամքով պահվում է Երուսաղեմի վանքի ձեռագրատանը (№ 1956)։ Դա 1265 թվականին գրված և Թորոսի վրձինով նկարազարդված դրչագիրն է, որի նրբանկար սքանչելի խորանները, խաչից իջեցնելը, այլակերպությունը և այլ լավագույն նկարներն առանձին գրավչություն են տալիս ձեռագրին և ընդգծում Ռոսլինի վրձինի հմտությունն ու վարպետությունը։ Այդ մանրանկարներում գծված կերպարների դիմագծերի առանձնահատկությունները նշում են մի այլ էական հանգամանք, որ Ռոսլինը հմուտ ու ձևակերպված մանրանկարիչ է և հոգեբան նկարիչ։ Այդ տեսակետից բնորոշ են «Խաչելությունը», «Թաղումը» և այլ մանրանկարներում գծված տիպարները, որոնց դեմքերն անչափ ցայտուն են և հարազատ։ Ձեռագրում Ռոսլինն իր ուսուցիչներից հիշում է «ես և զլքնաղագեղ գրիչն Կիւրակոսու»։

Ընդգծենք, որ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի գեղարվեստական գործերը մեկը մյուսից գրավիչ ու հետաքրքիր են։ Դրանցից հիշատակենք Երուսաղեմի վանքում խնամքով պահված № 2027 «Մաշտոցը», որ 1266 թվականին, Սսում, գրել է նշանավոր դրիչ Ավետիքը, իսկ ձեռագրի էջերը նկարազարդել է Թորոս Ռոսլինը Հռոմկլայում, ուր ապրում էր տաղանդավոր նկարիչը։ Ձեռագրի հիշատակարանը վկայում է, որ գրությունը «աւարտեցաւ յամի եօթն հարիւր և հնգետասաներորդի թուականութեան Հայոց ի հռչակաւոր և ի թագաւորեալ քաղաքին Սիս կոչեցեալ յաշխարհին Կիլիկեցւոց...ի ժամանակս աստուածասէր արքային Հեթմոյ մեծ երախտաւորի ամենայն սերոյ Հայոց և ազգաց բազմաց... Եւ զայսու ժամանակաւ սպասաւորէր հայրապետական սուրբ աթոռոյն, որ յաստուածաբնակ դղեակն Հռոմկլայ, որ և ետ վայելչացուցանել զսա ոսկւով և զանազան նիւթով բազմամեղ գրչին Թորոսի, գրեալ ձեռամբ Աւետիք քահանայինս»։ Ձեռագրի նկարչական արվեստի ուսումնասիրությունը պարզում է, որ Թորոս Ռոսլինի վրձինին պատկանում են մանրանկարչական մեծ պատկերները, որոնցից ուշադրություն են գրավում Հովհան մարգարեի կյանքը պատկերող երկու նկարները, Կարմիր ծովից հրեաների անցնելը, մոգերի երկրպագությունը, աղոթող մանուկներն ու հրեշտակը, Հիսուսի մկրտությունը, Հովհաննու հանգիստը, մանրանկարներ, որոնք ոչ միայն 13-րդ դարի մանրանկարչական արվեստի թանկա-

կին վավերագրեր են, այլև տաղանդավոր նկարչի ոճի, դպրոցի և արվեստի մասին ցայտուն դաղափար են տալիս։

Ահա Ռոսլինի մանրանկարչական արվեստի մի ա՛յլ գեղեցիկ արտադրություն։ Դա 1267 թվականին գրված արծաթագատ շքեղ ավետարանն է, որին առանձին երանգ է տալիս առաջին երեսի ոսկի թիթեղը, որի մի երեսի վրա պատկերվում է խաչելությունը, մյուս կողմը՝ Աստվածածինը։ Մանրանկարչական արվեստի նուրբ ստեղծագործություններ են նաև խորանները և չորս ավետարանիչները, որոնք գրավիչ են իրենց արտահայտիչ ու խտացուն գծերով և սկզբնաղբյուրներով։ Նույնպես առանձին ուշադրության է արժանի «Վերջին դատաստանը», որ իր ամբողջությամբ Թորոս Ռոսլինի հարուստ երևակայության մասին ցայտուն դաղափար է տալիս։ Դա լավագույն վրձինի արտադրություն է, ուր բազմաթիվ խմբական տեսարանները, կերպարների խտացուն արտահայտություններն ու շարժումները բարձրացնում են նկարի գեղարվեստական արժեքը։ Գրչագիրն այժմ Երուսաղեմի վանքի ձեռագրատան սեփականությունն է, որի դլխավոր հիշատակարանում կարդում ենք. «Ցամի ՉԺ և Է.երորդի թուականին Հայկազեան տումարի, յաստուածապահ դղեակս Հռոմկլա... եւ դրել դսայ իմոյ անարժանութեանս Թորոսի, մականուն Ռաւլին կոչեցելոյ, և նուիրեաց դսա որդւոյ Լև[ւ]ոնի որդոյ Հեթում թագաւորիս։ Հիշատակարանի մի ա՛յլ կարևոր էջը Անտիոքի վրա եգիպտացիների արշավանքն է, ապա հայոց Լևոն թագավորի եգիպտոսի գերությունից ազատությունը և վերադարձը. «Եւ բազում պատուով և ընծայիւք եկն յաշխարհ, և ի հայրենի աթոռ իւր և եղև խաղաղութիւն երկրիս և խնդութիւն քրիստոնէից»։

Թորոս Ռոսլինի վրձինի մի այլ դլուխ դործոցն է Երուսաղեմի վանքի ձեռագրատան մեջ դտնվող № 2563 արքայական ավետարանը, որ կիլիկյան շրջանում նկարազարդված ամենաճոխ ձեռագրերից մեկն է։ Գրիչն է տաղանդավոր դեղագիր Ավետիսը, որ ապրում էր Սսում։ Ձեռագրի աննման գրչությունը նշում է մի հանգամանք, որ դեղագրության արվեստն Ավետիքի դրչով ինչպիսի բարձրության է հասել և ուշադրավ նվաճումներ արել։ Նշենք և այն, որ այս գեղեցիկ ձեռագրի նկարազարդումը Կեռան թագուհին հանձնել է մանրանկարչական արվեստի արքա Թորոս Ռոսլինին, իսկ ավետարանը պատրաստված է Լևոն Գ.-ի թագադրության առթիվ, ի ՉԻԱ (721+551=1272) ի թագաւորութեան Հայոց Լեռնի աստուածասիրի և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ», Կեռան թագուհու հրամանով։ Ձեռագրի դանձը կազմում է արքայական ընտանիքի մանրանկարը, որ ցայտուն դաղափար է տալիս Կիլիկիայի թագավորական տան անդամների, նրանց դրեստի և զարդարանքի մասին։ Ահա թե ինչո՛ւ նկարը ո՛չ միայն նկարչական, այլև պատմագրական ու ազգագրական տեսակետից մեծ արժեք ունի։

Ռոսլինի արվեստին պատիվ է բերում նաև 1286 թվականին Հեթում Բ. թագավորի համար գրված «Ճաշոցը», որի դեղեցկությանն առանձին փայլ ու երանգ են տալիս նկարչի վարպետ վրձինով գծված սքանչելի նուրբ մանրանկարները— «Մարկոս ավետարանիչ», «Ղազարոսի հարությունը», «Երբ

Ղուկաս ավետարանիչը
(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.-ի ձեռ. № 2629)

Հովհաննես ավետարանիչը
(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.ի ձեռ. N 2028)

գնում են դաշտի մեջ», «Խաղաղության կույսերը», «Տյառնընդառաջ» և այլ նկարներ, որտեղ դրսեորվող կերպարների հոգեկան նուրբ ապրումները խոսում են նկարչի բարձր արվեստի մասին։ Նույնքան նուրբ արտադրություններ են նաև ձեռագրի խորանների զարդանկարները և սկզբնատառերը, որոնք կրկնվում են միանգամայն նոր և նուրբ ձևերով։ Առհասարակ, ձեռագրի գեղարվեստական նկարները հայկական մանրանկարչության հիասքանչ արտադրություններ են։ Գտնվում է Երևանի Պետական ձեռագրատանը։

Ռոսլինը հայ մանրանկարչական արվեստին նվիրել է մի այլ նկարազարդ ձեռագիր, որը գտնվում է Երևանի Պետական ձեռագրատանը։ Դա 1287 թվականին գրված ավետարանն է, որի սիրուն մանրանկարները— «Իջումն ի դժոխս», «Մկրտութիւն», «Զեռնադրումն», «Դժոխք» և ուրիշներ գրավում են ուշադրություն և խոսում նկարչի հմուտ վրձինի մասին։

Նկարչի արվեստին վերագրում են նաև Երևանի Պետական ձեռագրատանը գտնվող և 1290 թվականին Դրազարկում գրված ավետարանի մանրանկարները, որոնց գեղեցկությունը կազմում են նուրբ խորանները, գլխատառերն ու լուսանցազարդերը։ Այս նկարների մասին «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» խորագրով Լ. Ս. Խաչիկյանի գրքի (Երևան, 1950 թ.) 356-րդ էջում կարդում ենք. «Զեռագրի մանրանկարչական գործերը կարծել են տալիս, որ վերահիշյալ Թորոսը կարող է նույնանալ մեծահռչակ Թորոս Ռոսլինի հետ»։

Այժմ անժխտելի է մի հանգամանք, որ Ռոսլինի վրձինից մեզ թանկագին ավանդ մնացած ձեռագրերի եռանում ցոլանում է 13-րդ դարի երկրորդ կեսում ապրող ամենատաղանդավոր նկարչի պայծառ և լուսապսակ կերպարը, որին միջազգային առաջնակարգ մանրանկարիչների շարքում փարելի է դասել։ Իր հմուտ տեխնիկայի համապատասխան նա ունի նաև բանաստեղծական երանդավորումներ, համարձակ թռիչքներ, ջերմություն ու նրբություն, հատկանիշներ, որոնք մեծ առավելություններ են և հաստատում են Ռոսլինի ունեցած նկարչական խոր հասկացողությունը։ Ահա թե ինչո՞ւ նրա բարձր և նուրբ արվեստով ամեն մի կուլտուրական ժողովուրդ կարող է հպարտանալ։

6. ՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՍԼԻՆԻ ՄԱՍԻՆ

Հռոմկլայի դպրոցի տաղանդավոր մանրանկարչի մասին հայ մամուլի էջերում կարդում ենք թեև սեղմ, բայց ուշագրավ տողեր, որոնք պատկերում են նրա պայծառ վերպարը։

Արվեստագետի արժանիքները և հայ մանրանկարչության զարգացման գործում նրա գործունեության նշանակությունը շատ բարձր է գնահատել հմուտ բանասեր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, ընդգծելով այսպի-

սի տողեր. «Հռոմկլայի դպրոցի փառքն է Կոստանդին կաթողիկոսի և արքունիքի կատարյալ հովանավորությունը վայելող արվեստագետը՝ Թորոս Ռոսլինը։ Մեզ ծանոթ նրա հնագույն աշխատանքն է Կոստանդին կաթողիկոսի սատցմամբ յոթերորդ՝ Զեյթունի ավետարանը... Զեռագիրը գրված է «յամի Զ և Ե (= 1256)», «յանառիկ դղեակս Հռոմկլայ», Հեթումի թաթարաց ավաղ խանի մոտից վերադարձի տարին... Թորոս Ռոսլինը այնքան բեղմնավոր է իբրև բարձր արվեստագետ, որ արժանի է հատուկ մասնագիտական ուսումնասիրության, որքան էլ մեծաժախս լինի այդպիսի մի գիրք։ Այդ տեսակետից միայն Սարգիս Պիծակը՝ ԺԴ. դարի առաջին կիսում, կարող է մրցել Թորոսի հետ» («Հայաստանյայց Եկեղեցի», 1942 թ., էջ 106 և 113)։

Ուշադրավ են նաև «Հասկ» հայագիտական տարեգրքում (1949—1950 թ.) Գարեգին Ա. Կաթողիկոսի նկարչի մասին արձանագրած հետևյալ տողերը. «Հռոն թագավորը յուր Կեռան թագուհու հետ, դիտեինք, որ մեծ հովանավոր է հանդիսացել հայ գրչության և մանրանկարչական արվեստների ծաղկման մեջ, գրել և նկարազարդել տալով այնպիսի հոյակապ գործեր, ինչպիսիք Երուսաղեմի № № 1956 և 2563 ավետարաններն են, և Նորնախիջևանի Լուսավորիչ եկեղեցու մի ավետարանը, այժմ Երևան տարված № 87։ Երեքն էլ արտաքո կարգի արժեքավոր իրենց մանրանկարներով և ճոխ զարդագրությամբ, մանավանդ արքայական զույգի և ընտանիքի պատկերներով, իսկ երրորդը Լևոնի պատանեկության... Թորոս Ռոսլինը, որ Հռոմկլայի նկարիչ էր, գրած և նկարազարդած է Երուսաղեմի վերև հիշված ձեռագիրները և ուրիշ գործեր Կոստանդին Ա. Կաթողիկոսի համար, ուրեմն և հայանի որպես արքայական ընտանիքի նկարիչ... Հենց Թորոսը և՛ գրիչ էր, և՛ նկարիչ, թեև առավելապես նկարիչ»։

Բանանք նաև բանասեր Կարապետ Հ. Ռասմաջյանի «Հայոց հին դեղարվեստի վարպետները» (1926 թ.) խորագրով գիրքը, ուր մանրանկարչի մասին կարդում ենք հետևյալ սեղմ տողերը. «Թորոս Ռոսլին. տաղանդավոր և բազմաշխատ նկարիչ՝ Լևոն Բ.ի (1270—1289) և Կեռան թագուհիի պատկերները նկարած է»։

Համարարոտի խորան
(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.ի ձեռ. № 2629)

Ահա նաև «Հասկ» հայագիտական տարեգրքում Արտավազդ արքեպիսկոպոսի բնորոշումը. «... Հայ գրչության և մանրանկարչության բարձրագույն զարգացման շրջանը կբնորոշեն հատկապես Կոստանդին կաթողիկոսի և Թորոս քահանա Ռոսլինի շրջանին ակնարկությամբ, վասնզի առանց չափազանցության կարելի է խոստովանել, որ ասենց օրով կիլիկյան գրչագրական, մանրանկարչական և զարդագրական արվեստները արձանագրեցին իրական ոսկեդար մը... Հռոմկլայի դպրոցին մեծագույն մանրանկարիչը եղող Թորոս քահանա Ռոսլին... թագաժառանգ Լևոնի սիրական ու վստահելի պալատական նկարիչն էր»։

Ծանոթանանք նաև «Գեղարվեստ»ի խմբագիր և վաստակավոր բանասեր Գարեգին Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը (1946 թ., Երևան) խորագրով գրքի 36-րդ էջում գրած կարծիքի հետ. «...13 և 14-րդ դարերում գեղարվեստական գրքի զարգացումն այնպիսի բարձրության է հասնում, որ ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չէր

Մատենսի ավետարանի սկիզբը
(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.ի ձեռ. N 2629)

հասել Հայաստանում։ Այս դարերը ապել են երկու խոշորագույն մանրանկարիչ արվեստագիտներ՝ Թորոս Ռոսլին և Սարգիս Պիծակ. թե՛ մեկը և թե՛ մյուսը հայ դրքի մանրանկարչության արվեստը հասցրին իր դաղաթնակետին։

Թերթենք նաև 1939 թվականին, Մոսկվայում, ռուսերեն լեզվով հրատարակված «Պատկերներ Հայաստանի արվեստի պատմությունից» խորագրով դիրքը, ուր արվեստագետ Ռուբեն Դեմբյանը Թորոս Ռոսլինի նկարչական արվեստը գնահատել է այսպես. «Կիլիկյան շրջանի նկարիչների մեջ ամենից աչքի ընկնողը Թորոս Ռոսլինն է։ Նա մյուս նկարիչներից տարբերվում է իր աննման հայտնաբերումներով։ Միևնույն զարդանկարների մոտիվները նա կարողանում է տալ անվերջ տարբեր ձևերով։ Ահա, օրինակ, նրա Հեթում Բ.ի «Ճաշոցը»։ Այդ ձեռագրի ոսկրնատառերը անընդհատ կրկնվում են նոր ձևերով և զարմանք պատճառում նկարչի այնքան հարուստ երևակայության մասին։ Նրա դործերն այնքան արբությամբ են նկարված, որ պիտի դիտել խոշորացույցով։ Նա ոչ մի դժվարության առաջ կանգ չի առնում և բավական հեշտությամբ լուծում է ամենաբարդ մոտիվները։ Աքանչելի կերպով տիրապետում է մարդակազմության, միաժամանակ վարպետորեն պատկերացնում է դանազան կենդանիների՝ մի փոքր ոճավորված։ Օրինակ՝ Պետական Ձեռագրերի մատենադարանում գտնվող N 1035 ավետարանում կան որսորդության տեսարաններ, ուր մեծ վարպետությամբ դծված են կռվող կենդանիների շարժումները... Նա փայլուն վիրտուոզ (խիստ հմուտ) նկարիչ է։ Ռոսլինը միևնույն ժամանակ կարողանում է տալ հոգեկան ամենանուրբ ապրումները։ Նրա լավագույն դործերի մեջ երևում են հոգերանական ուժեղ արտահայտություններ, օրինակ, հետևյալ նկարներում— «Երբ դնում են դաղաղի մեջ», «Խաղաղության կույսերը» («Ճաշոց», 1286 թ.)։ Նույնպես պիտի նկատել, որ Ռոսլինի ոչ լավագույն դործերը կատարված են նույն հաջողությամբ։ Եվ դրա համար ակամայից հարց է առաջանում. «Արդյոք այդ նկարները անմիջապես ի՞նքն է վրձինով, թե՞ իր օգնականները»։ Ռոսլինի ստեղծագործությունը կիլիկյան արվեստի դաղագնակետն է, որից հետո, մի քանի տասնյակ տարիներ անց, սկսում է անկման շրջանը։ Բայց այդ, Ռոսլինի արվեստի վիրտուոզության փայլի մեջ, որի համար թվում է դժվարություններ չեն կարող լինել, արդեն երևում են անկման նշաններ։ Ինչպես երևում է, նա արդեն սպառել է իր նկարչական արտահայտությունների բոլոր միջոցները։ Նրա ավանդ թողած դործերի մեջ չկան կենսագրական տվյալներ։ Շատ տարօրինակ կերպով հայկական չէ նրա Ռոսլին անունը։ Հիմնվելով Ռոսլինի նկարած ձեռագրերի վրա, նրա դործունեության ժամանակաշրջանն ընկնում է 13-րդ դարի 60—90-ական թվականը։ Նրանից մեզ հասած աշխատանքներից հայտնի են տասը ձեռագրեր, որոնցից 6-ը գտնվում է Երուսաղեմում, 1-ը, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, գտնվում էր Սոֆիայում և 3-ը Երևանի պետական ձեռագրատանը, որոնք են՝ Հեթում Բ.ի «Տոնական ճաշոցը» (1286 թ.), «Հեթում Բ.ի ավետարանը» և «Ռոսլինի ավետարանը» (1287 թ.)։ Վերջին երեքը չունեն հիշատակարաններ, բայց

մյուս գործերի մեջ ճշգրիտ ավյալներ կան, որոնք հաստատում են, որ այդ գործերը Ռոսլինին են պատկանում... եթե ամբողջ կիլիկյան արվեստն ունի պալատական նկարագիր, ուրեմն Ռոսլինի ստեղծագործությունները անգր-պալատական են։

Վաստակավոր արվեստագետ Լ. Ա. Դուռնովան «Հին հայկական մանրանկարչություն» խորագրով ալբոմի մեջ (1952 թ., Երևան), Ռոսլինի մասին գրել է. «... Նրա բազմակողմանի ստեղծագործության համար բնորոշ է մի նոր վերաբերմունք... զեպի շրջապատող իրականությունը, դեպի մարդու ներքին կյանքը և դեպի... քաղաքական և հասարակական կյանքի բազմաթիվ երևույթների ներքին բովանդակության բացահայտումը։ Ունենալով գեղարվեստական դիտելիքների ու նրբազգացության, կերպարների ու պատկերացումների տեխնիկապես կատարյալ ընդունակությունների հարուստ պաշար, նա շռայլորեն դրսևորում է ինքն իրեն՝ երբեք չկրկնվելով ոչ մի հորինվածքում, ոչ մի ժեստում կամ գեմքի արտահայտության մեջ, ոչ մի զարդական մոտիվում... Որպես խոշոր նկարիչ, առաջինն ինքն է առաջ քաշում և մասամբ լուծում այն հարցերը, որոնք հետագայում Վերածնության է մշակել։ Շարժումների իսկական և ոչ պայմանական կենսականությունը, հուզականությունը, անատոմիան, գծային և օդային հեռանկարները, պատմականությունը— բոլոր այս հարցերը շոշափված են նրա կողմից»։

Խորանանք նաև Լ. Ա. Դուռնովայի «Հին Հայաստանի գրքային փեղանկարչությունը» խորագրով նյութի մեջ, ուր ընդգծված են այսպիսի տողեր. «... Կիլիկիայի վարպետներից աչքի է ընկնում Դուչչիոյի ու Դանտեի ժամանակակից և Զոտտոյի անմիջական նախորդ, խոշորագույն նկարիչ Թորոս Ռոսլինը (13-րդ դարի երկրորդ կես), որն իր ստեղծագործության մեջ առաջին հաստատուն քայլերն է արել Վերածնության դարաշրջանի արվեստի ուղղությամբ»։

Կարդանք այժմ օրիորդ Սիրարփի Տեր-Ներսիսյանի «Տեսություն մը հայ մանրանկարչության մասին» խորագրով հոդվածում

Հովհաննու ավետարանի սկիզբը

(Հայկական ՍՍՌ Պետ. մատ.ի ձեռ. № 2629)

Թորոս Ռոսլինի մասին արձանագրված հետևյալ տողերը. «Միջնադարյան արվեստի դպրոցներեն են 13-րդ դարու ձեռագիրները։ Թորոս Ռոսլին և ուրիշներ սուր դիտողություն ունեցող միտքեր եղած են և իրենց շրջապատը լավ դիտած։ Իրենց արվեստի մեջ կան գաներ, որոնք արևմտյան են, խաչակիրներու միջոցով ընդունված անշուշտ, կան նաև իսլամական, թաթարական դրոշմ կրող տարրեր, բայց այդ բոլոր ազդեցությունները ձուլված են, յուրացուած ու ինքնուրույն ոճ ստեղծած։ Հետևաբար ընդօրինակություն չեն անոնք... Այս շրջանին կսկսին նոր ձևեր ստեղծել անհատական ներշնչումի ազդեցության տակ... Ուրեմն շատ ինքնատիպ արվեստ մը ունեցած է կիլիկյան շրջանը։ Իսկ Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Մարմարաղ»ում նա գրել է նաև հետևյալը. «13-րդ դարուն, Հռոմկլա ամենեն կարևոր կեդրոնը եղած է դրչության արվեստին համար, և ամենեն հանճարեղը Թորոս Ռոսլինն էր»։

7. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ի՞նչ են ընդգծում հռչակավոր նկարիչ Թորոս Ռոսլինի հայ մանրանկարչության նվիրած ձեռագրերը— Այն, որ նա 18-րդ դարում Հեթում Ա.ի, Լևոն Գ.ի և Հեթում Բ.ի օրերում հայ մանրանկարչական արվեստի ամենավաստակավոր, առաջնակարգ և պայծառ զարդանկարիչն է, նշանավոր մանրանկարիչը, տաղանդավոր գեղագիրը և վարպետ դիմանկարիչը, որն իր ինքնատիպ վրձինով, իր պայծառ ոճով ու նրրին, սքանչելի ներդաշնակ գույներով կիլիկյան մեծատաղանդ մանրանկարիչների— Կիրակոս, Հովհաննես— շարքում առանձնահատուկ և պատվավոր տեղ է գրավում։

Իր հմուտ ու ձևակերպված վրձինով նա ո՛չ միայն իր ժամանակի նկարչական արվեստին զարկ է տվել, այլև հայ մանրանկարչական մշակույթը հասցրել է գեղարվեստական բարձրության։ Այդ գծով էլ նա Հռոմկլայի նկարչական դպրոցի հմայքը բարձր է պահել, մի դպրոց, որն իր մանրանկարներով, զարդանկարներով, գեղագրերով, խորաններով, տերունական նկարներով, դիմապատկերներով մանրանկարչական արվեստի մի հռչակավոր թանգարան է և կարող է ամեն մի կուլտուրական ժողովրդի պատիվ բերել։

Ռոսլինի արվեստում հիմնականը, կենտրոնականը միաժամանակ ռեալիզմն է։ Իբրև առաջնակարգ արվեստագետ նա ո՛չ միայն պայքարել է ռարվեստն արվեստի համար հասկացողության դեմ, այլև հանդիսացել է ռեալիստական մանրանկարչության հիմնադիրը։ Նա նոր ծրանգ է մտցրել իր ժամանակի մանրանկարչական արվեստի մեջ։ Առհասարակ, նա իր նյութերը վերցրել է իրական կյանքից, պատկերելով գլխավորապես վերին դասի նշանավոր և ցայտուն դեմքերը՝ թագավորներ, թագուհի, իշխանազուններ, եկեղեցական իշխաններ, արքայական ծառաներ, բնութագրել է նրանց հոգեկան աշխարհի և կենցաղի առանձնահատուկ գծերը և տիպիկ զգեստները։ Թերևս այդ մերևույթներով էլ պիտի բացատրել, որ նրա արվեստում տեսնում ենք ուժեղ ռեալիզմ, կազմակերպված հմուտ վրձին և ազդագրություն (էտնոգրաֆիա)։ Ահա թե ինչո՛ւ ժամանակի բարձր խավի, գլխավորապես արքայական և իշխանական դեմքերի պայծառ կերպարների և նրանց կենցաղի ու տարազների հետ ծանոթանալու համար խիստ արժեքավոր են նրա որոշ նկարները, որոնց առանձին փայլ են տալիս ծիրանի, ոսկեգույն, արծաթագույն և ա՛յլ հրաշագեղ երանգների սքանչելի ներդաշնակությունն ու աղնվությունը։

Արձանագրենք և ա՛յն, որ Ռոսլինի մի շարք մանրանկարներն իսկական գլուխ գործոցներ են և խոսում են կիլիկյան մանրանկարչության գեղարվեստական բարձր մշակույթի մասին։

Մի հանգամանք պարզ է, որ հայկական գեղարվեստի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում կիլիկյան մանրանկարչական դպրոցը, որի ամենափայլուն և պայծառ արվեստագետներից մեկն է Թորոս Ռոսլինը, 18-րդ դարի կիսում ապրող և ստեղծագործող նուրբ վրձինի և քանասոսեղծական գույների մեծ վարպետը[1]։ Նրա ստեղծագործական անհատականությունը հայ նկարչության ներմուծել է գեղարվեստական նրբությամբ հռչակավոր արտադրություններ։ Ահա թե ինչո՛ւ նրա թողած մանրանկարչական ժառանգությունը մի ամբողջ դպրոց է, որից գեղարվեստասեր նոր սերունդը և երիտասարդ նկարիչները կարող են մեծապես օգտվել։

1. Հռոմկլայի նկարչական դպրոցի պարծանքն ու հպարտությունն են նաև Ռոսլինի ուսուցիչներ Հովհաննես և Կիրակոս առաջնակարգ մանրանկարիչները, որոնք իրենց հռչակավոր ստեղծագործություններով հարստացրել են հայ մանրանկարչական արվեստի գանձարանը։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
թեկնածու, ճնշագետ)

ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԻՇԽԱՆԻ ԿԱՌՈՒՑԱԾ ՏԱՃԱՐԸ ԵՎ ՊԱԼԱՏԸ ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂՈՒՄ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Թալիշ գյուղը գտնվում է Աշտարակի շրջանում, Երևանից Լենինական տանող գլխավոր ճանապարհի եզրին, Աշտարակից 28 կիլոմետր դեպի արևմուտք, ընդարձակ սարահարթի վրա։ Թալիշը պատմական Արուճ ավանն է, որը Հայաստանի ամենամեծ և նշանավոր բնակավայրերից է։ Նա եղել է Հայ Արշակունի թագավորների զորակայաններից մեկը։ Չնայած պատմական աղբյուրներում Արուճ ավանի մասին հիշատակվում է 4-րդ դարից, սակայն հնագիտական հետազոտությունները հաստատում են, որ նա բնակավայր է եղել մեր թվագրությունից դեռ շատ առաջ։

Թալիշ գյուղում և նրա շրջակայքում, մի քանի քառակուսի կիլոմետր տարածության վրա, պահպանվել են Արուճ ավանի հետքերը, ուր նկատելի են բազմաթիվ տների քարաշար պատերի մնացորդներ, գերեզմանոցներ, մահարձան-կոթողներ, առանձին գերեզմաններ, հացահատիկի ու դինու հորեր՝ կարասների ձևով, խաղողի հնձաններ և այլ մնացորդներ։ Առանձնապես աչքի է ընկնում գյուղի մեջ գտնվող մեծ ամրոցը, որից պահպանվել են բերդապարսպի բրգավոր պարիսպների առանձին մասերը՝ շարված սև ու կարմիր տուֆի մաքուր տաշված մեծ քարերով, կրաշաղախով։ Հավանական է, որ ամրոցը պատկանած լինի Արշակունիների տիրապետության շրջանին, որը մեծ փոփոխությունների է ենթարկվել 10—13-րդ դարերում և պարսկական տիրապետության վերջին շրջանում՝ 17—18-րդ դարերում։

Հատկապես պետք է հիշատակել Թալիշի հյուսիսային կողմում, ձորի եզրին գտնվող 13-րդ դարի քարվանսարայի շինքի մնացորդները, որովհետև դա ինքնին հաստատում է, որ միջազգային տարանցիկ առևտրի Դվին—Անի և ապա դեպի արևմուտք գնացող ուղին անցել է Արուճ ավանի վրայով և, որ վերջինս հանդիսացել է այդ ուղեմասի վրա եղող ապրանքափոխանակման կայաններից մեկը։

Պատմական աղբյուրների տեղեկություններից պարզ է դառնում, որ երբ արաբները դրավեցին Հայաստանը, նրանք Դվին մայրաքաղաքը դարձրին իրենց վարչա-քաղաքական կենտրոնը, հայ նախարարները և հոգևորականությունը նպատակ ունենալով հեռու մնալ արաբների ամենօրյա հսկողությունից, երկրի վարչական և հոգևոր կենտրոնները Դվինից տեղափոխեցին այլ տեղ։ Ներսես Տայեցի կաթողիկոսը կառուցեց Զվարթնոցը և այնտեղ փոխադրեց կաթողիկոսական աթոռը, իսկ Գրիգոր Մամիկոնյանը Արուճում կառուցեց տաճար և ապարանք՝ այնտեղ հաստատելով իր ռեզիդենցիան։

Որ Գրիգոր Մամիկոնյան իշխանը Հայաստանի կառավարիչ եղած ժամանակ (662—684 թ. թ.) Արուճ ավանում կառուցել է հոյակապ տաճար և ապարանք, այդ մասին

որոշակի կերպով տեղեկացնում են ժամանակի հայ պատմիչները։ Սերեոսը գաղորդում է. «Իսկ ի վախճանել Համազասպայ հայցէ Ներսէս նախարարաց հանդերձ յամիրապետէն զԳրիգոր Մամիկոնեան՝ եղբայր Համազասպայ, որ ի պատանդի իսկ էր առ նմա, կացուցանել իշխան Հայոց. և շինեաց զկաթողիկէն որ յԱրուճ»[1]։

9—10-րդ դարերի հայ մատենագիր Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, հետևելով Սերեոսին, իր հերթին ավելի մանրամասնություններ է հաղորդում այդ մասին. նա գրում է. «Բայց Համազասպայ յետ էր այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ, առաջնորդ գտեալ յոքնապատիկ կարդաց և ուղղութեանց, շինութեան և խաղաղութեան, ապահովութեան և բարեմասն լրութեան...։

Զայսու ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա սիրով, երկնային իմն ճեմարան յարգարեալ ի վերայ երկրի։ Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ արքունիս իւր յեղր քարաժայռ ձորակին, յորում ըղձէ ակամակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպս վիմարդ քարանցն. որ զեղերս ունի իբրև զպսակ պատուարի։ Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն ընակութեան իւրոյ»[2]։

ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂ.— Տաճարը ճյուսիս-արևմուտքից, վերականգնումից հետո։

Արուճում, Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից կառուցած տաճարի մասին, բացի վերը նշված պատմական տեղեկություններից, տաճարի արևելյան պատի վրա պահպանվել է նրա կառուցման հետևյալ արձանագրությունը.

1. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլիոս», Թիֆլիս, 1913 թ., էջ 285։

2. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոցն», Թիֆլիս, 1912 թ., էջ 89—91։

Ի ԵՒ Թ ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏՆԻ ՄԱՐԵՐԻ ԱՄՍՈՑ ՈՐ ԱՒՈՐ Ի ԵՒ Ե ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ Ի ՋԵՌՆԴՐԻԳՈՐԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ՀԱՅՈՑ ԻԵԽԱՆԻ ԵՒ ՀԵՂԻՆԷ-Ի ՆՈՐԻՆ ՁՈՒԳԱԿԵՑԻ Ի ԲԱՌԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՇԻՆԱՒՈՂԱՑ ՁՍԱ:

Որոշ գիտնականներ գտնում են, որ այդ արձանագրությունը ուշ ժամանակի գործ է և ընդունելով, որ արձանագրության մեջ հիշատակվող Կոստանդինը Կոստանդին առաջին կայսրն է, որը չի թագավորել 29 տարի, ինչպես նշվում է արձանագրության մեջ, և հենվելով տաճարի կառուցման ոճի և ճարտարապետության մանրամասների մշակման ձևերի վրա, ցանկանում են ապացուցել, որ Թալիշի տաճարը կառուցված պետք է լինի 10-րդ դարից ոչ շուտ։

Կարող է պատահել, որ այդ արձանագրությունը ուշ ժամանակի գործ լինի, սակայն անհավանական չէ, որ նա սկզբում փորագրված լինի տաճարի մի այլ մասում, որը հետագայում, շենքի վերանորոգման կապակցությամբ արտագրված լինի ներկա տեղում։ Որ տաճարը բազմիցս ենթարկվել է վերանորոգման, այդ մասին ապացուցում են հնագիտական ուսումնասիրությունները և տաճարի հարավային խորանի մուտքի վերևում փորագրված հետևյալ արձանագրությունը.

Ի ՆԻՔ (973) ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ Ի ՍՈՒՐԲ ԿԱԹՈՒՂԻԿԷՍ ՁՈՐՈՒՄ ՆՈՐՈԳԵ...։

Դժբախտաբար արձանագրության վերջին մասը չի պահպանվել, սակայն կիսատ մնացած վերջին նորոգե... բառը նորոգել բառի մի մասն է, որն, անշուշտ, վերաբերում է տաճարի վերանորոգությանը։

Բացի այդ, Թալիշի տաճարի կառուցման ժամանակի մասին կան նաև պատմական որոշակի տեղեկություններ։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Գրիգոր Մամիկոնյան իշխանը Արուճի տաճարը կառուցում է Անաստասի կաթողիկոսության 5-րդ տարում. «ի հինգերորդ ամի Անաստասայ եղև շինուած կաթուղիկէին՝ որ յաւանն Արուճ, զոր շինեաց Գրիգոր Պատրիկն»[1]։

Սեբեոս պատմիչը տեղեկացնում է, որ Անաստասը կաթողիկոս դարձավ 120 (671) թվականին. «Իսկ Ներսիսի կացեալ ամս 10. յաջորդէ զաթոռն Անաստաս ի 120 թուին, որ էր սենեկապետ Ներսիսի, ի գաւառն Մասեաց տոհմ, ի գիւղէ Ակռուոյ»[2]։

Վերը նշված տեղեկություններից երևում է, որ Թալիշի տաճարը կառուցել է Գրիգոր Մամիկոնյան իշխանը 125 (676) թվականին, հետևապես Կոստանդին երկրորդի կայսրության ժամանակ։ Հայտնի է, որ Կոստանդին երկրորդը հունաց կայսր է դարձել 667—668 թվականներին. ապա պետք է ընդունել, որ Թալիշի տաճարի կառուցման արձանագրությունը պետք է ընթերցել ոչ թե «Ի և Թ ամի Կոստանտնի», այլ՝ «Ի Թ ամի Կոստանտնի», որից կստացվի 667+9=676, իսկ դա ճշտիվ կհամապատասխանի հայ պատմիչների Արուճի տաճարի կառուցման ժամանակի մասին հաղորդած տարեթվին։

Ամենից հավանականն այն է, որ Արուճի կաթողիկեի կառուցման վերաբերյալ վերը մեջ բերած արձանագրությունը սկզբում փորագրված է եղել մի այլ տեղ, հետո, տաճարի վերանորոգման հետևանքով արտագրվել է ներկա տեղում, որի ժամանակ թույլ է տրվել արձանագրության աղավաղում՝ ի սկզբնատառի և Թ միավորի միջև ավելացնելով Ի շաղկապը, որից Ի սկզբնատառը դարձել է տասնավորի համարժեք։

Այդ բոլորից հետևում է նաև, որ այն գիտնականները, որոնք պնդում են, թե Թալիշի տաճարը կառուցված պետք է լինի 10-րդ դարից ոչ շուտ, նրանք կա՛մ ծանոթ չեն պատմական փաստերին, կա՛մ դիտավորյալ կերպով աղավաղում են այդպիսիք, մանավանդ, որ տաճարի վրա մինչև այժմ էլ պահպանվել է 867 թվականը կրող մի այլ արձանագրություն (տե՛ս հոդվածի վերջում)։ Բացի այդ, տաճարի կառուցման և ճարտարապետական մանրամասների մշակման ձևերը խիստ հարազատ են 7-րդ դարին։

Թալիշի կաթողիկեն հայ արվեստի եզակի կոթողներից է. նա զմրեթավոր մի ընդարձակ դահլիճ է երկարաձիգ-ուղղանկյուն հատակագծով։ Կողերի պատերը ներսից ունեն մեծ ելուստներ, որոնցից ձգվող գլանաձև կիսասյուները, միանալով կամարներով, իրենց վրա կրում են խոշոր գմբեթը։ Արևելյան կողմից ունի կիսակլոր արտիդ՝ ցածր բեմով, որի երկու կողքերին կան միևնույն մեծ խորաններ։ Երեք կողմերից ունի գիդեցիկ, մեծ շքամուտքեր, պատերի մեջ բացվում են բազմաթիվ լայն ու բարձր, կամարակապ լուսամուտներ՝ շքեղորեն զարդարված պսակներով։ Բոլոր քիվերը պատած են նուրբ մշակված կոզովտիրս զարդաքանդակներով։ Արևելյան պատի մեջ, արտաքուստ, կան երկու եռանկյունաձև մեծ խոր-

1. «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1913 թ., էջ 60։

2. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913 թ., էջ 285։

շեր՝ դեղաքանդակ, կամարաձև դաղաթներով։ Խիստ արժեքավոր են արևելյան ասիդի որմնանկարները, որոնք վերաբերում են տաճարի կառուցման ժամանակին՝ 7-րդ դարին։ Վերջին տարիներում խոշոր աշխատանքներ են կատարվել հուշարձանի վիրանորոգման ու բարեկարգման ուղղությամբ. վերականգնված են պատերի քանդված մասերը, թափված երեսապատ քարերը, տանիքը պատած է կղմինդրով։ Նախագծվում է ամրացնելու թաղակապ ծածկը և լրացնելու ծածկի քանդված մասերը։ Ամբողջ շրջապատը մաքրված է հողից, շինաղբից ու փլատակներից։

շարվածքի հետքեր. գետնի երեսին թափված էին վաղ միջնադարին ու ավելի ուշ ժամանակներին պատկանող կավե զանազան ամանների բեկորներ։

Դեռ 1946 թվականի ամռանը, Սովետական Հայաստանի ճարտարապետների միության մի խումբ ճարտարապետներ այցելելով Թալիշ, ստուգողական փորումներ են կատարում քարուկիր շարվածքի մնացորդների վայրում, ուր բացվում են մաքուր տաշված մեծ տուֆ քարերով պատերի մնացորդներ։

Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն 1947 թվականից ձեռնարկում է այդ ավերակների սիստեմատիկ պեղում-



ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂ.— Պեղված եռանավ բազիլիկ դահլիճի մնացորդները։

Թալիշում, Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից կառուցված տաճարի և պալատի մասին հայ պատմիչների տեղադրական նկարագրությունները հաստատվում են մեր կատարած հնագիտական հետազոտություններով։ Տաճարն իրոք գտնվում է փոքրիկ ձորակի արևմտյան եզրին, ուր քարափի տակ մինչև այժմ էլ նկատելի են ցամաքած աղբյուրի հետքերը։ Գարնան հորդառատ անձրևների ժամանակ այժմ էլ ջուր է հոսում այդ աղբյուրից։

Տաճարի հարավային կողմում, մինչև 1947 թվականին այդտեղ հնագիտական սիստեմների սկսելը, նկատելի էին քարուկիր

ներին, որը փոքրիկ ընդմիջումներով շարունակվում է մինչև այժմ։

Անցած ժամանակամիջոցում կատարված պեղումներից հայտնաբերվել են երկու ընդարձակ դահլիճներ՝ կից այլ սենյակներով ու սրահով, մի փոքրիկ եկեղեցի, մատաղատան և պարսպապատերի առոնձին հետքեր։

Առաջին պեղված դահլիճը գտնվում է տաճարից դեպի հարավ-արևելք, քիչ հեռու, ձորի եզրին. դա եռանավ բազիլիկ տիպի մի մեծ շենք է, երկարաձիգ-ուղղանկյուն հատակագծով։ Ներսում եղած խաչաձև հատվածի չորս մույթերը և դրանց դիմաց, պատերին կից ձգվող ուղղանկյուն որմնասյուները միա-

ցած են եղել կամարներով, կաղմելով թաղակապ ծածկը։ Արևելյան, արևմտյան և հյուսիսային կողմերից ունեցել է մեծ մուտքեր։ Արևմտյան պատի մեջ նկատվում են փոքր լուսամուտի հետքեր։ Ամբողջ շենքը

ԹԱՎԻՇ ԳՅՈՒՂ.— Պեղված սրահի սյունաշարի խարիսխները։

շարված է կարմրագույն տուֆի մաքուր տաշված մեծ քարերով, կրաշաղախով. ստորին շարքերի առանձին քարեր ունեն 3—3,5 մետր երկարություն և 1 մետրից ավելի բարձրություն։ Սալահատակված է նույն տուֆ քարերով։

Շենքն ավերակ վիճակում է. քանդված է ծածկը և պատերի որոշ մասերի վերի քարաշարերը։ Մույթերի ու որմնասյուների խարիսխների և պահպանված խոյակների մշակման ձևերը խիստ ընորոշ են 7-րդ դարին։ Քանդված մասերի բոլոր քարերը հավաքված ու դասավորված են շենքի ներսում և շրջապատում։

Դահլիճը, հավանաբար միջին դարերում, ենթարկվել է մեծ վերանորոգումների ու փոփոխությունների, ըստ որի շարվել փոքրացվել են բոլոր մուտքերը, արևելյան մուտքին դրվել է քարե մեծ դուռ, որն ընկած է տեղում, փակվել է հարավային լուսամուտը, փոխված է պատի երեսպատման քարերի զգալի մասը։ Միաժամանակ շենքը վիր է ածված եղել պաշտպանական վայրի, որի համար արևելյան և հյուսիսային կողմերից կից կառուցված են կրկնապատեր՝ անկյուններում աշտարակաձև բուրգերով։ Այդ նպատակով են նաև փոքրացված մուտքերը և արևելյան մուտքին դրված է քարե դուռ։ Պաշարման կամ վտանգի ժամանակ պատրաստված ընակիչներին շրով ապահովելու նպատակով, դահլիճի ներսում, հյուսիս-արևելյան անկյունում կառուցված է հատուկ ջրամբար, որի ջուրը հատուկ քարաշար ջրմուղով բերված է արևմտյան կողմից և դահլիճ է մտել հյուսիսային դռնով։

Դահլիճի ներսում կատարված պեղումները հաստատում են, որ այստեղ ուշ, գուցե 17—18-րդ դարերում, երբ արդեն քանդված է եղել նրա թաղակապ ծածկը, նորից բնակություն է հաստատվել։ Հայտնաբերված մեծ քանակությամբ երկաթի հալոցքի մնացորդները, անասնաաղբի շերտը, անասուններ կապելու համար անցքավոր մեծ քարերը, քարե մեծ սանդը և այլ իրեր վկայում են, որ դահլիճի ներսում, բացի բնակարանից, եղել են նաև արհեստանոց և անասնագոմ։

Երկրորդ պեղված դահլիճը գտնվում է տաճարի հարավային կողմում, մոտիկ, նրան զուգահեռ, նախորդ դահլիճի արևմտյան կողմում։ Սյունաշարդ, ավելի մեծ քան նախորդը մի շենք է, ներսում երկու շարք քարե խոշոր սյուներով. կողքերից ունի երկու շարք սենյակներ։ Հյուսիսային կողմի սենյակների շարքը հյուսիսից ունեցել է սյունաշարդ բաց սրահ՝ երեսի կողմով դեպի նկեզեցին դարձած։ Հավանաբար այստեղից է եղել հանդիսավոր մուտքը դեպի տաճար և այնտեղից դեպի իշխանական ապարանքը։

Այդ դահլիճից պահպանվել են հարավային, հյուսիսային և արևմտյան պատերի ստորին մասերը, վեց սյուների խարիսխները՝ յուրաքանչյուր սյունաշարքում երեքական խարիսխ և երկու հատ խոյակ։ Պատերը շարված են կիսատաշ փոքր քարերով, թույլ կրաշաղախով. սյուների խարիսխներն ու խոյակները լավ մշակված են՝ յուրաքանչյուր տուֆ քարից։ Դահլիճի կողքերին եղած սենյակներից պահպանվել են պատերի ստորին մասերը՝ նույն ձևով շարված։ Ինչպես դահլիճի, այնպես էլ կից սենյակների արևելյան պատերը չեն հայտնաբերված, ուստի նրանց երկարության չափը և ընդհանուր ձևը դեռ պարզ չեն։ Հյուսիսային կողմի սյունաշարդ սրահից պահպանվել են սյուների 9 խարիսխներ՝ պատանման պատվանդանի վրա։

Եկեղեցին գտնվում է առաջին դահլիճի հյուսիս-արևելյան անկյունում, համարյա կից։ Սա միանավ փոքր բազիլիկ է, արևելյան կողմից փոքր արսիդով, առանց խորանների։ Ծածկը եղել է թաղակապ։ Պահպանվել են միայն պատերի ստորին քարաշարը և ստիլոբատը, շարված մաքուր տաշված տուֆ քարով։ Պահպանվել են թաղի ու քիվերի մի քանի քարեր։ Քիվերը լավ մշակված են ու քանդակազարդ՝ բնորոշ 5-րդ դարին։

Մահարձանը գտնվում է բազիլիկ եկեղեցու արևմտյան կողմում, կից, և, հավանաբար, վերաբերում է առաջին դահլիճի վերակառուցման շրջանին՝ միջին դարերին։ Պահպանվել է միայն պատվանդանի մասը՝ քառակուսի հատակագծով, եռաստիճան. շարված է տուֆի տաշված քարերով, կրաշաղախով։

Թալիշում կատարվող հնագիտական պեղումները դեռ չեն ավարտված, սակայն մինչ այդ կատարված պեղումներից հայտնաբերված ճարտարապետական կառուցվածքների մնացորդներն ու առանձին բիկորներ և միաժամանակ կատարված ուսումնասիրությունները հաստատում են հայ պատմիչների վկայությունները այն մասին, որ Գրիգոր Մամիկոնյան իշխանը, դառնալով Հայաստանի կառավարիչ, Արուճ ավանում կառուցում է հոյակապ կաթողիկե, իսկ Նրա հարավային կողմում՝ իր համար բնակարան։

Պեղման արդյունքները, միաժամանակ, մեծ արժեք են ներկայացնում հայ ճարտարապետության, հատկապես քաղաքացիական ճարտարապետության պատմության համար։ Այդ տեսակետից ուշադրավ է այն, որ ճարտարապետական գիտությունների թեկնածու Վարազդատ Հարությունյանը, ուսումնասիրելով Դվինի պեղումներից հայտնաբերված Կաթողիկոսարանի շինքի և Թալիշի պեղումներից հայտնաբերված Մամիկոնյանների պալատի մնացորդները, գտնում է, որ խիստ նմանություն կա դրանց ճարտարապետական ձևերի ու չափերի միջև։ Նա գտնում է, որ թե՛ Դվինի Կաթողիկոսարանը և թե՛ Թալիշի սյունազարդ դահլիճը եղել են փայտածածկ։

Պեղումները պարզեցին նաև, որ Արուճում մինչև տաճարի ու պալատի կառուցումը, գոյություն են ունեցել այլ կառուցվածքներ, ինչպիսիք են՝ բազիլիկ եկեղեցին, առանձին խոյակներ, քառակող կոթողներ և այլն։

ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂ.— Խոյակ՝ մինչ Մամիկոնյանների կառուցած տաճարի և պալատի շրջանից։

ԹԱԼԻՇԻ ՏԱՃԱՐԻ ՎՐԱ ԵՂԱԾ ՄՅՈՒՍ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅՈՒՆ ՊԱՏԻ ԱՐԻՎԵԼՅԱՆ ԵԼՈՒՍՏԻ ՎՐԱ.

ՅԺՋ: ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՅԻ-
ՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱԾՈՏՈՅ ԵՒ Ի ՏԵՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱՅ
ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՅ ԵՒ ԿԱԹԱՒՂԿՈ-
ՍՈՒԹԵԱՆ ՋԱՔԱՐՒԱԷ ԵՂԵՒ ԿՈՒՒ ԸՆԴ ՅԱՐՈՒՃ ԵՒ ԸՆԴ ԿՈՇ ԵՒ
ԸՆԴ ԳԱՒԱՌՆ ԵՀԱՐ ԱՐՈՒՃ ՁԿՈՇ ԵՒ ՁԳԱՒԱՌՆ ԵՒ ԿԱԼԱՒ
ՁԿՈՇԱ ՎԱՆԱԿԱՆՆ ԵՒ ՔՐԹԱՒԱՆԻՆ ԸՆԴ ԱՆԿԻՆ ՄԻՆԹԱ-
ՆԻ ՎԱՃԱՌԵՑԻՆ ԵՍ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ՎԱՌԱՄԱ ԾԱՌԱ
ՍՄԲԱՏԱ ԲԱԳՐԱՏՈՒՆՈ ԵԿԻ ՀՐԱՄԱՆԱՒ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԵՍ
ՀԱՒԱՍԱՐԵՑԻ ՁՁՈՒՒՐՆ ԸՆԴ ԿՈՇ ԵՒ ԸՆԴ ՅԱՐՈՒՃ ՁԻՆՁ
ԻՒՐԵԱՆՑ ԲՆԻԿ ԱՌՈՒՍ ՏԷՐ ԼԵԱԼ :Ա: ԵՒ ԿԷՍ ԿՈՇԱ ԵՒ :Ա: ԱՐՃՈ
ԱՐԴ ԵԹԷ ԱՅԼ ՈՔ ՀԱԿԱՌԱԿԵԼ ՁԱՆԱ ԱՅԼ ԱՒԵԼԻ ՌԱՍՄ
ՅՈՒՋԷ .Յ.Ժ.Ը. ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԵԱԼ ԼԻՑԻ ԵՒ
Ի ՍՄԲԱՏԱ ՄԱՀՈՒԱՄԲ ՊԱՏՈՒՀԱՍԻ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՄՈՒՏՔԻ ԱՐԻՎԵԼՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ, ԱՐՏԱՔՈՒՍ.

ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԹՈՒԱԿԱՆ .ՆԼՋ. ԵՍ ՍՄԲԱՏ ՇԱՀԱՆ|ՇԱՀ| ՈՐԴԻ ԱԾՈՏՈ
ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՁԱՏԵՑԻ ԿԱՍՆ ԻՄ ՀԱՒՐՆ ՀՈԳՈՅՆ ԵՒ ԻՄ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ
ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՁՇԱԼԱԿԱՒՈՐԻ ԲԱԺԻ ՇՆՈՐՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԵԹԷ ՈՔ
ԻՄ ՎՃՌԻՍ
ԴԻՍԱԴԱՐՁ ԼԻՆԻ ՆՁՈՎԵԱԼ ԻՑԷ ՅԱՍՏՈՒԾՈՅ ՅԺԸ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ
ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՃԱԿԱՏԻՆ.

ԹԿ ՆԽ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ՃԱԿԱՏԱՔԱՐԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ.

Ի ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ :ՁԼՈ: Ի ՓԱԹՇԱՀՈՒԹԵԱՆՆ
ԱՐՈՒՈՒՆ ԽԱՆԻՆ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԴԵՄ-
ԷՏՐԷԻ ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆՆ ՍՊԱ|ՍԱ|ԼԱՐ |Մ|ԽԱՐԿՈՇ-
ԵԼԻՆ ԵՂԲԱՒՐՆ ԻԿԱՆԷ ՈՐՈՒՅՆ ՄԵԾԻՆ ՇԱ-
ՀՆՇԱՀԻ ԵՍ ՄԱՆԿԼԻ ԽԱՍԱՆ ԱՂԱՅԻՍ ՈՐԴԻՍ ԵԿԻ
ԱՐՈՒՃ ԻՄ ՀԱՒՐՆ ԳԱՆՁԱՅԳԻՆ ԳԵՂՍ ԵՒ ԹՈՂԻ ՁՀԱՑԻՆ
ՇԱՐՒԱՏՆ ՀԱՍՏԻՑ Ի :Ո: ՏԱՐԻ ՊԱՐՈՆ ՈՐ ԱՅՍ ԳԵ-
ՂԻՍ ՏԷՐ ԳԱՅ ԻՄ ԱՂ[Բ]ՐԱՑԷ ԿԱՄ ԻՄ ՈՐԴԵԱՑ ԿԱՄ ՀԱ-
ՅՈՒ ԿԱՄ ՎՐԱՑԻ ՈՐ ՁԱՅՍ ԳԻՐՍ ,ԽԱՓԱՆԷ ԵՒ ԱՅԼ ՇԱՐՒԱՏ ԱՌ
ՅԱՍՏՈՒԾՈՅ
ԵՒ ԱՅՍ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՆՁՈՎԱԾ Է ԵՒ ՎԱՆՍ ՈՒ
ԴԱՌՈՒ ԵՒ :Գ:Ճ:ՈՒ:ԺԸ: ՀԱՅՐ-
ԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԱԾ Է ԵՒ ԱՄԷՆ ԱՁԳԻՆ ԱՅԱՁ Է:

Մ. ԷՍԿԻՃՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ

Հարություն Մանուկի Ալամդարյանը ծնվել է 1796 թվականին Աստրախանում։ Նա իր կրթությունն ստացավ տեղի Աղաբաբյան դպրոցում, տեսուչ Աներովբե վարժապետ Պատկանյանի ձեռքի տակ։ Դպրոցի ուսման ընթացքն ավարտելուց հետո Ալամդարյանը ինքնուս աշխատանքով կատարելագործվեց գիտությունների մեջ։ Նա աշխատասեր էր և իր այդ բարեմասնությամբ աչքի ընկավ իր ուսուցչի, Ռուսաստանի հայոց առաջնորդ Նփրեմ արքեպիսկոպոսի և ուրիշների առաջ։

Լազարյանները լսած լինելով Ալամդարյանի անունն ու բարի համբավը, 1814 թվականին հրավիրեցին նրան Մոսկվա, քահանա ձեռնադրել տվեցին, անունը փոխելով Հարություն՝ ի հիշատակ երիտասարդ հասակում Լայպցիգի ճակատամարտում ընկած Հարություն Լազարյանի, ու նշանակեցին իրենց քարտուղար և հայոց լեզվի ուսուցիչ Լազարյան ճեմարանում։

Հարություն Ալամդարյանը մոտ մի տասնամյակ վարեց այդ պաշտոնները, որոնք հաճելի էին իրեն։ Միևնույն ժամանակ նա հոանդագին ուսումնասիրեց ռուսական, ինչպես և արևմտա-եվրոպական մշակույթը և դարձավ իր ժամանակի իմաստուն տնձնավորություններից մեկը։

Ալամդարյանը 1818 թվականին ամուսնացավ Հարություն Արզանդյուլյանի Մարգարիտ անունով պարկեշտ դստեր հետ։

Նա հավանաբար սկսած 1821 թվականից դրում էր բանաստեղծություններ։ 1821 թվականին լույս տեսավ նրա կազմած ռուս-հայերեն «Համառոտ բառարան»[1]։ Նույն տարում վախճանվեց նրա սիրելի կինը և նա մնաց փշտահար այրի՝ երեք որբ դուստրներով։ «Դաս երևակայությեանս բանաստեղծության մեջ Ալամդարյանը ասում է, թե կնոջից հեռացած, «թոշնիմ, թառամիմ.

Ա՜խ, յիր կէտ վերջին եհաս սեաւ
կեանք իմ.
Ա՜հ, ես ե՞րբ մեռայց, ե՞րբ
հանդարտիցիմ։

Ներսես Աշտարակեցին Ալամդարյանին Մոսկվայից Թիֆլիս հրավիրեց, որպեսզի իր նոր հիմնած Ներսիսյան դպրոցում պաշտոնավարի որպես տեսուչ։ Ալամդարյանը Թիֆլիս ժամանեց 1824 թվականին և նվիրվեց դպրոցի կազմակերպության գործին։ Նրա ձեռքով նույն թվականին դպրոցը պաշտոնապես բացվեց։

Ալամդարյանը Ներսիսյան դպրոցում որպես տեսուչ և որպես ուսուցիչ կրոնի, վայելչագրության ու ռուսերենի պաշտոնավարեց ընդամենը վեց տարի։ Նրա այդ կարճատև գործունեությունը արդյունավետ եղավ։ Նրա ձեռքի տակ կրթություն ստացան Խաչատուր Արովյանը, Ստեփանոս Նազարյանը, Գալուստ Շերմազանյանը, Պետրոս Մադաթյանը և ուրիշներ, որոնք հետագայում, հայ նոր գրականության պատմության մեջ մեծ դեր խաղացին։ Ալամդարյանի շնորհիվ Ներսիսյան դպրոցի աշակերտությունը հրատարակեց «Ներախայրիք Ներսիսեան դպրոցի ժողովածուն, ուր ստեղծագործ աշակերտները

[1]. «Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայս, աշխատասիրութեամբ Յարութի-ն քահ. Ալամդարեանց. Մոսկուա, 1821։

դրելու փորձեր են անում։ Ալամդարյանի դպավորությամբ 1824—1828 թվականներին դպրոցի դահլիճում կազմակերպվեցին թատերական ներկայացումներ, որոնց մասնակցեցին իրեն դերակատարներ Սահակ Վարդանյան Սահառունին, Գրիգոր Հովսեփյանը, Գրիգոր Մելիքյանցը, Գաբրիել Միրզոյանցը, Գալուստ Շերմազանյանցը և ուրիշներ[1]։

Ալամդարյանը Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս կազմեց «Օրէնք ռուս քերականութեան ձեռնարկ, որտեղ տալիս է ռուսերենի քերականական կանոնների ընդհանրությունները և իր մտքերն ապացուցելու կամ պարզելու համար քաղվածներ է բերում Ի. Ի. Խեմնիցերի, Ի. Ի. Դմիտրևի, Ի. Ա. Կռիլովի և ռուս այլ դրողների ստեղծագործություններից։ 1825 թվականին հրատարակվեց նրա «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի սէջոս մանկանց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ դիրքը։

Ալամդարյանը Թիֆլիսում լայն կապեր ուներ քաղաքական ու մշակութային գործիչների հետ։ Պարսկաստանի ռուսական դեսպան Մազարովիչը, գեներալներ Կրասովսկին ու Բենկենդորֆը և այլ անձինք այցելում էին նրան, զրուցում նրա հետ։ 1826 թվականին Թիֆլիս ժամանեց ռուս նշանավոր դրող Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոեդովը և մոտիկ կապեր հաստատեց Ալամդարյանի հետ։

Ալամդարյանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության կողմնակիցներից էր և այդ բարեկամության ջերմ պաշտպանն ու եռանդուն ջատագովը Անդրկովկասում։ 1827 թվականի հոկտեմբերի 1-ին ռուսական զորքի և հայ աշխարհազորականների կողմից Երևանի բերդի գրավումով Արևելահայաստանը ազատագրվեց «երկաթի հնոցէ անադորոյն Պարսից» և միակցվեց Ռուսաստանին։ Ներսես Աշտարակեցուն ամեն կողմից ուղարկվեցին հրավիրագրեր շնորհավորական նամակներ։ Ալամդարյանը այդպիսի մի նամակում, որ նույն թվականի հոկտեմբերի 12-ին Թիֆլիսից առաքեց Աշտարակեցուն, գրում է.

«Զկնի բաղմադարեան ակնկալութեան վերջապէս արար զմեզ արժանի նախախնամութիւնն երկնից տեսանել և լսել պաղատութիւն ամենասիրելի հայրենեաց մերոց յրնդ լծոյ սատանայական սպառում բռնաւորաց։ Այս ձայն ուեռեաց նախ հնչեալ ի քաղաքի աստի ի 5 ամսոյս և ապա գրաւորապէս յ8-ն. ելից զելից գամենեցուն զսիրուս անպատում ուրախութեամբ, վասնորոյ և զօրհնութեան երգ ամենեցուն ի բերան առեալ՝ նորօրինակ փառաւորութեամբ դպրոցական ամենայն բարեաց զԱստուածն Իսրայէլի օրհնէին և օրհնեն. ես ևս ընդ նոսին մատուցեալ դասաւուածային Աստուծոյ խոնարհաշունչ համբուրիւ սուրբ դարշապարաց քաջարարիկ քահանայապետիդ մեծի՝ շնորհաւորեմ զիրկուրիւն Հայաստան աշխարհի երկաթի ճնոցէ անադորոյն Պարսից...»։

Արևելահայաստանը Ռուսաստանին միակցվելուց հետո, շատ չանցած, ֆելդմարշալ Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչը ընդհարվեց Ներսես Աշտարակեցու հետ, և նրան «գաղտնի դավադրություն լարելու» մեջ մեղադրելով, Նիկոլայ Ա.ի և նախարարության կարգադրությամբ 1828 թվականին հեռացրեց Անդրկովկասից։ Ներսես Աշտարակեցին նույն թվականին, դեռ չաքսորված, Ալամդարյանին ձեռնադրել էր վարդապետ։ Պասկևիչը Աշտարակեցուն աքսորելով չբավականացավ։ Նա արդիլեց նրա անունը հիշել, սկսեց հալածել նրա կողմնակից անձանց։ Պասկևիչը Ալամդարյանին, որի գործունեությունը դուր չէր գալիս իրեն և մյուս ցարական պաշտոնյաներին, 1830 թվականին դուրս անել ավեց Ներսիսյան դպրոցից։ Ալամդարյանը անտերության չմատնելու համար դպրոցը, նաև հնդախտի պատճառով փակեց ամբ, բանալիները հանձնեց Գ. Շերմազանյանին և ինքը մեկնեց Էջմիածին, որովհետև իրեն հրավիրել էին եպիսկոպոս ձեռնադրվելու։ Ալամդարյանը օգոստոսի 8-ին հասավ Էջմիածնի վանքը, ուր մնաց մինչև նույն ամսի 20-ը և դեռ պատրաստությունները չէին վերջացել, երբ բռնվեց «մահահրավեր» հնդախտով, որը քառասուն օր անխնա խոշտանգեց նրան և մահվան դուռը հասցրեց։ Ալամդարյանի բարեկամները, «ճարը կտրած», ուղարկեցին նրան Երևան՝ օդափոխվելու և բժշկվելու, որտեղ և տասնհինգ օր այրվեց «ջերմի չարատագնապ վառարանում»,—հետո «փոքր ինչ թեթևություն ստանալով մի բժշկապետի ձեռք առած քաջարվեստ միջոցների շնորհիվ» վերադարձավ Էջմիածին ու նկատելով, որ իրեն եպիսկոպոս ձեռնադրելու գործը «վերիվայր փոխվել էր՝ գնաց Թիֆլիս, որտեղից Պասկևիչի պահանջով աքսորվեց Հաղբատ։

Հաղբատի Ս. Նշան վանքում, «ձմեռվա ցրտաշունչ ձյունախառն բքարեր հողմերի պատճառով», կրկնվեց Ալամդարյանի հիվանդությունը, և նա մոտ երկու ամիս (նոյեմբեր-դեկտեմբեր, 1830 թ.) կրեց անտանելի նեղություն ու այնպես չարչարվեց, որ շատ անգամ նրա «ցամաքած շրթունքին մոտեցավ մահահրավեր բաժակը», բայց Հաղբատի և Սանահնի վանքերի երիտասարդ սարկավագ

1. Արամ Երեմյան, «Ռուսահայ թատրոնի պատմություն», հատոր Ա, Վենետիկ, 1933 թ., էջ 61։

Ս. Ջալալյանի խնամքով կարողացավ դիմանալ և առողջանալ[1]։ 1831 թվականի ապրիլի 27-ին Ալամդարյանը գրեց «Գարուն» բանաստեղծությունը, որտեղ բնության գարնային զարթոնքին հակադրում է իր «անդարձ դերությունն» ու կրած զրկանքները.

«Ցամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդոմբ զայտս իմ այրեցին,
Զիմ անդարձ դերութիւն յուշն իմ մուտ ածին։
Լեղուապէս դառնացան քիմք վհատ հոգւոյս,
Զմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս։
Ափսո՜ս ինձ, ասացի բիւր անգամ յայն օր,
Շատ անէծս թափեցի ծննդեանս վատ օր։
Մաշեցայ, թոշնեցայ, մտի խոր ի քուն,
Չլար կսկիծ հէք այրուոյս արկի ծով յանհուն։
Դշխոյն մեծ անմահից էջ ինձ յայց տեսլեամբ,
Որպէս թէ ի փոսոյ պիս ելոյզ ձեռամբ...»

Ներսես Աշտարակեցին, որ Քիշնև նստած, բոլոր իրադարձությունների մասին մանրամասն տեղեկություն էր ստանում իր կողմնակիցներից, միջնորդելով աղատեց Ալամդարյանին և ապրիլի 27-ին (1831 թ.) իր մոտ Քիշնև բերել տվեց։ Քիշնևում ապրում էին փոքրաթիվ հայեր, որոնք եկել, հավաքվել էին Թյուրքիայի զանազան գավառներից և որոնք խոսում էին առհասարակ թյուրքերեն ու մոլդավերեն։ Ալամդարյանը տեսնելով իրեն այդտեղ «իսպառ անպետք» իր սիրելի Հայրենիքին և հայրենակիցներին՝ տկար էր և «լի դառն տրամադրությամբ»։ 1832 թվականի հունիսի 17-ին իր աշակերտ Խ. Աբովյանին գրած նամակում նա դառնությամբ ասում է.

«Այս երկրի օդը շատ ծանր է օտարների համար... տկար եմ այստեղ և լի դառն տրամադրությամբ, տեսնելով ինձ այստեղ, աշխարհիս այս հեռավոր անկյունում, իսպառ անպետք իմ հայրենի աշխարհին և հայրենակիցներին, նամանավանդ ներկա ժամանակներում, երբ մեր անթիվ եղբայրները և ժողովուրդը, փոխադրված զանազան երկրներից իրենց գտրովագութ մոր և սխրալի Հայաստանի ծոցը, լափազանց կարոտ են, ինչպես իրենք, նույնպես և նրանց որդիները հոգևոր շինության, անարատ հավատի քարոզության, վարք ու բարքին, հրահանգության, և այլն, և այլն...»[2] (նամակի այս հատվածը բերված է տշխարհարար թարգմանությամբ)։

Ներսես Աշտարակեցին Ալամդարյանից մանրակրկիտ հաշիվ պահանջեց Ներսիսյան դպրոցի դրամական գործերի մասին։ Ալամդարյանը չկարողացավ գոհացնել Աշտարակեցուն, որովհետև իր ձեռքում ուներ դպրոցի ելեմուտքի փաստաթղթերի մի մասը միայն։ Դրա հետևանքով նրանց հարաբերությունների մեջ սառնություն ընկավ։ Ալամդարյանը Աշտարակեցուն մատուցեց մի թուղթ, որտեղ պատմում է իր հավատարիմ ծառայությունների և կրած զրկանքների մասին, ու խնդրեց իրեն նշանակել Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր։ Աշտարակեցին նրա խնդիրքը կատարեց, և նա 1833 թվականին դնաց Ս. Խաչ։ Այդտեղ նույն թվականին Ալամդարյանը գրեց մի ողբերգություն («Ողբերգութիւն»)՝ «Հրամիզդ և Զենորիա» վերնագրով[3]։

Ս. Խաչ վանքի մոտ գտնվում է մի լիճ, որը պատկանում էր վանքին։ Շրջակա գյուղացիները աշխատում էին օգտվել այդ լճից։ Վարդապետները և վանականները ձգտում էին թույլ չտալ այդ։ Ուստի և գյուղացիների և հոգևորականների միջև պայքար սկսվեց ու վերջինների ապահովությունը վտանգի տակ դրվեց։ Այս առթիվ Ալամդարյանը 1834 թվականի մայիսի 4-ին Նոր-Նախիջևանի հայ համայնքի դլուխ Հարություն Պողոսյանին գրեց.

«Մտանէ ի լիճս և կրեալ զձկունս ի տուն իւր՝ պանծալ ևս առաջի այլոց, թէ լիճն մեր դիւղականացս է և ոչ վարդապետաց և վանականաց։ Եթէ զայսպիսի անզգամ անպատիժ թողչիք, տէր իմ, մեզ անհնարին է աստ զապահով կեանս վարել»։

Տասն օր հետո, մայիսի 14-ին գյուղացիները հարձակվեցին վանքի վրա և Ալամդարյանը, որ Խ. Աբովյանի խոսքերով «Հեռացեալ ի տանէ և ի Հայրենեաց, զրկեալ յընտանեաց և ի զաւակաց... պատրաստեալ էր մատուցանել զանձն ի զոհ վասն օգտի հայրենեաց և հայկազուն մանկանց», մահացու վիրավորվելով՝ վախճանվեց ու թաղվեց վանքի բակում։

1. «Դիվան Խ. Աբովյանի», առաջին հատոր, կազմեց և ծանոթագրեց Երվանդ Շահազիզ, Երևան, 1940 թ., էջ 267—268։

2. Նույն տեղում, էջ 270։

3. «Հրամիզդ և Զենորիա», ողբերգութիւն յոտարս երից, 1833, ի Ս. Խաչ վանքն Նոր Նախիջևանայ, աշխատասիրութեամբ Յարութիւն վարդապետ Ալամդարեանցն։

***

Հարութիւն Ալամդարյանը երկար չապրեց, բայց թողեց բավական հարուստ գրական ժառանգություն՝ բանաստեղծություններ՝, «Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ», «Օրէնք ռուս քերականութեան», «Հրահանգ Քրիստոնեական վարդապետութեան», «Հրամիզդ և Զէնորիա», նամակներ, որոնք գրված են գրաբարով։

Ալամդարյանի բանաստեղծությունները, որոնք թվով շատ չեն, իրենց թեմատիկայով բաժանվում են երկու շարքի՝ պատմա-կրոնական և աշխարհիկ։

Պատմա-կրոնական բանաստեղծությունների մեջ Ալամդարյանը երգում է հին Հայաստանի հերոսներին, Հայ Եկեղեցու գործիչներին և այլն։

Հայոց առասպելական ու պատմական հերոսներին գովաբանելիս Ալամդարյանը գործածում է ստեղծագործական հին ձևի արտահայտչական միջոցները.

«...Հայկ է, բազմականք, մեր անզոյգ Պետ, Հայր, Բելայ դիւահար,
Հայկայն և ստուերս, նորին կերպարան, պատկեր անվթար՝
Ա՜խ, ուստի՞ եմուտ նա յայս տեսարան, յայս յարկ պերճափառ,
Եւ որ՞ քայլարիկ անկիւն յանկենէ՝ խրախ. յուսապատար...
Ի թիկանց վեհիս նաղարայլ ճեմեն Արամ մեծ անուն,
Զարմայր սատ քաջաց, Պարոյր թագապերճ, Արայն քաջ, սիրուն,
Արտաշէս աշխոյժ, Վաղարշակ խոհեմ, խոսրով քաջագուն.
Զուգընթաց սոցին այլ ճետք դիւցազանց ակնապիշ կառուն.
Վահագն անմահ, Վահէ, քաջն Վան,
Անվանին Տիգրան՝ յայսմ խմբի կան...»
(«Ցաղերգութիւն»)

Ալամդարյանը քնարերգու է։ Նա չի վիպում իր հերոսների գործերը, այլ զմայլում է և ապրում նրանցով։ Նա գեղարվեստական այս ձևով ներբողում է ոչ միայն հին Հայաստանի հերոսներին, այլև նրա թե՛ ավանդական, թե՛ պատմական կրոնական ու մտավոր գործիչներին.

«Թադդէ բազմարդիւն Տեառն այգուոյ մշակ, տիրաջանն Արգար,
Գրիգոր լուսատիպ, անձնանուէր հովիւ, սրբութեան սատար,
Սահակ Պահլաւիկ, Մեսրովբ բանիբուն և քերթողացն Հայր,
Նարեկայն հրեշտակ, շնորհապերճ ներսէհ և սուրբ հարց կաճառ՝
Աստէն ակմբին, քաղցրութեամբ հային, ծնծան, սիրփին, զմեռք խանդաղատին...»
(«Ցաղերգութիւն»)

Ալամդարյանը երգում է նաև Ներսես Աշտարակեցուն, իրեն վերոհիշյալ հոգևորականների փառավոր հետնորդի և իրեն «հովուաց պետ»։

Ալամդարյանը աշխարհիկ թեմատիկայով գրված իր բանաստեղծությունների մեջ երգում է սերը, իր վազամեռ կնոջը, իր դժբախտ կյանքն ու միայնությունը, թոչունները, ծաղիկները։ Այդ բանաստեղծությունների վրա դրված է կարոտի և տխրության սրտաբուխ, անկեղծ շեշտ։

Ալամդարյանի արտահայտած հույզերի մեջ իշխում է սերը։ Սերը մարդկային կյանքի իմաստն է։ Սիրո պատճառած բերկրությունը ամենանվիրական զգացումն է մարդու հոգեկան աշխարհում։ Ալամդարյանը «Պարերգութիւն» բանաստեղծության մեջ ասում է, որ եթե որևէ մեկը «զաշխարհ լի գանձուք» իրեն պարգևե՝ այնքան ուրախ չի լինի, «որքան ի գոլս առ կուսին»։

«...Եթէ զաշխարհ լի գանձուք
Ինձ ոք բաշխէր ի պարգև՝
Ոչ տեսանէր այնքան բախ՝
Որքան ի գոլս առ կուսին...»։

Ալամդարյանը «Դաւ երևակայութեան» բանաստեղծության մեջ իր կնոջ՝ Մարգարիտին համեմատում է պատմական և առասպելական Հուդիթի, Սաթենիկի, Բերսաբեի, Եսթերի, Ռաքելի, Կղեոպատրայի հետ և ասում է, թե վերջիններս «դիշեր» են, իսկ առաջինը՝ «ուիւ անմահ»։

Հիշատակենք և «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» ու «Վարդակորոյս» բանաստեղծությունները։ «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» դրամատիկական ոտանավորի մեջ Ալամդարյանը զրուցում է իր որբերի հետ, և վերջիններս խնդրում են նրանից, որ չմորմոքի ու հանդստանա.

«Հայր

...Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք՝ ձայնիւ սգալի
Հեղրեցից զնա յամենայն երկրի։

Մարիամ

Ջի՞նչ խօսիս, հայրիկ, զի՞նչ դու կորուսեր,
Եւ զի՞նչ գտանել յանծանօթ երկիր
Կամիս, ասա մեզ, մի՛ թագուցաներ,
Տար և զմեզ ընդ քեզ, հա՛յր, մի՛ արտասուեր։

1. Ցարութիւն վարդապետի Ալամդարեանց, «Զատիկ-բերական», Ս. Պետերբուրգ, 1884։

Անեմա

Հայր մեր, ես գիտեմ, զմայր մեր ողբալ,
Զմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սդալ.
Ե՞րբ սա մոռացի զանուն, զկերպ նորա,
Ե՞րբ հանգիստ տեսցուք մեք զհոգի սորա։

Կատարինէ

Մի՛ արտասուեր, հա՛յր, մի՛ սգար, ողբար,
Արտասուք զքեզ մաշեցին խսպառ.
Զիս ո՞ սիրեսցէ՝ զկատեալս քո թշուառ՝
Թէ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից դաւառ։

«Վարդակորոյս» բանաստեղծության մեջ Ալամդարյանը պատկերում է «անբախտ» սոխակի սիրո ողբերգությունը.

«Այգանալ ահա, այգացաւ ահա.
Ա՜խ, սոխակս հեծէ, դնի անդգալ։
Լաց չառնէր երէկ, այսօր շատ ողբալ.
Վարդն իւր չերևի, այգն է ցայգ նման։
Աւա՜ղ վիճակի անբաղդ սոխակին,
Ոյր կեանքն ի հնոցի սիրո տոչորին...»։

Ալամդարյանը իր աշխարհիկ ոտանավորների մեջ արձագանքեց նոր բանաստեղծությանը։ Նա իր աշխարհիկ ստեղծագործությամբ հարթեց իր սիրելի աշակերտի՝ Խաչատուր Աբովյանի ուղին և նախապատրաստեց նրա գրական-հասարակական խոշոր աշխատանքը։

Ալամդարյանի և՛ պատմա-կրոնական, և՛ աշխարհիկ բանաստեղծությունները մեծ մասամբ ստեղծված են քնարերգական շնչով։

Ալամդարյանի քերթողական արվեստը հիմնականում ստեղծագործական հին մեթոդն է։ Սակայն նրա արվեստի մեջ պատահում են նաև նոր պատկերավոր արտահայտություններ, իրերի իրական վերստեղծում, ժողովրդական ոճեր և այլն։

Ալամդարյանի աշխարհայացքը կրոնական է, որը դրսևորված է նրա և՛ աշխարհիկ և՛ պատմա-կրոնական բանաստեղծությունների մեջ։ Նրա կարծիքով աշխարհը «անգութ թշնամի» է մարդոց, մարդը «նանրախորհուրդ» է և սերը դառնվում է «ի ձեռս Արարչին»։ Նա հաճախ դիմում է սուրբ խաչին, Աստուծուն, որպեսզի իրեն պաշտպանեն կյանքի դարանների դեմ։ Այսպես, մի ոտանավորի մեջ նա դիմում է սուրբ խաչին և թախանձում նրան՝ իրեն փրկել ամբարիշտների լցված թակարդից և փորձություններից.

«Լարեն ինձ թակարդ ժանտից ջոկք ահեղ,
Ցիմ կորուստ բերին, իրր անհատ հեղեղ,
Զիս զերծո, ապրեցո, քո նշանաւ ամրացո։
Աման յեղկելիս զմահաթոյն քարրից,
Ընդ լաց իմ բերկրին, ա՜խ, ո՞ւր դիմեցից.
Քառաթև, լուսաձև, ձգեա առ իս զքո սուրբ թև։
Մորմոք, սուգ, կսկիծ և երկունք մահուան,
Անթիւ տառապանք զինեն շրջեցան.
Ապշեցայ, ցնորեցայ. Սուրբ խաչ, ոգնել ինձ փութա։
Դառնացան իմ կեանք յոլոս ծննդեան,
Ցո և դնացի՝ միշտ գտի դարան.
Հալեցայ, մաշեցայ, յամրարշտաց ոչ զերծայ»։

(«Ողկողանք առ խաչ Փրկչին»)

Վերոհիշյալ «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» ոտանավորի մեջ նա իր որդուներին կամենում է հանձնել «Հոր համայն որբոց, Փրկչին Քրիստոսի՝ վստահ լինելով, որ նրանք նրա հովանու ներքո ապահով կապրեն.

«Հոր համայն որբոց, Փրկչին Քրիստոսի
Ցանձն առնեմ զձեզ՝ դստերք նաղելի.
Սուրբ աջոյ նորա ռնտես հովանի
Ի գլխոց ձերոց մի պակասեսցի...»։

Եզրափակենք։

Ալամդարյանի գլխավորությամբ 1824—1828 թվականներին որոշ աշխատանք ծավալվեց հայ թատրոնի զարգացման ուղղությամբ։ Ալամդարյանը իր աշխարհիկ ոտանավորների մեջ արձագանքեց նոր բանաստեղծությանը, հարթեց Խաչատուր Աբովյանի ուղին և հանդիսացավ նրա գրական-հասարակական գործունեության նախապատրաստողը։

Այսպիսով Ալամդարյանը խոշոր դեր խաղաց հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Փետրվարի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Խստոնական ՍՍՌ-ի վաստակավոր արտիստ Խուդո Լեպնուրմը (Երգեհոնահար) և Տալլինի կոնսերվատորիայի դոցենտ Ժենի Սիմոնը (երգչուհի՝ մեցցո-սոպրանո)։ Հյուրերը եղան Մայր Տաճարում, Վեհարանում, ծանոթացան Մայր Աթոռի թանգարանի հետ։

Հյուրերին ցույց տրվեց ջերմ ընդունելություն։

***

Փետրվարի 5-ին, շաբաթ, «Սրբոցն Սարգսի զօրավարին և որդւոյ նորին Մարտիրոսին և չորեքտասան դինուորացն» տոնի օրը, գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում սարկավագ ձեռնադրեց Կիրովաբադ քաղաքի ընծայացու Կարապետ Հազարյանին։ Հաջորդ օրը, կիրակի, սրբազանը Կարապետ սարկավագին ձեռնադրեց քահանա։

***

Փետրվարի 17-ին, «Սրբոց Վարդանանց զօրավարաց 1036 վկայից» տոնի օրը, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Կոստանդին վարդապետը։ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի ավուր պատշաճի քարոզից հետո կատարվեց հոգեհանգիստ։

***

Փետրվարի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Չինական Ժողովրդական Հանրապետության էներգետիկների պատգամավորությունը, որին գլխավորում էր ՉԺՌ-ի վառելանյութերի արդյունաբերության մինիստրի տեղակալ Լյու Լան-ցուն։ Պատգամավորության կազմի մեջ մտնում են 12 հոգի, դրանց թվում՝ գլխավոր հիդրոէներգոշինի պետ Լի Ժուն, Արևելյան Չինաստանի հիդրոշինի վարչության պետ Վան Սինը, Հյուսիս Արևելքի հիդրոշինի վարչության պետի տեղակալ Շեն Սին-սյանը, նախագծային ինստիտուտի պետի տեղակալ Վան Լու-նանը և ուրիշներ։ Պատգամավորությանը Երևանից ուղեկցում էր Արտասահմանի հետ կուլտուրական կապի ընկերության աշխատակից Դ. Մովսիսյանը։ Պատգամավորությանը վանքի բակում դիմավորեցին գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը և հոգեշնորհ Տ. Կոստանդին վարդապետը։

Հյուրերը Մայր Տաճարի ավագ լուսարարի առաջնորդությամբ եղան Տաճարի ներսում, ուր նրանց մանրամասն բացատրություններ տրվեցին Տաճարի շինության, ժամանակի, վերանորոգության և մանրանկարչության վերաբերյալ։ Հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ուր տեսան թանկարժեք սպասներ ու զգեստներ։

Մեկնելիս, հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին սրբազան հոր և միայնությանը՝ իրենց ցույց տրված ուշադիր վերաբերմունքի համար։

***

Փետրվարի 22-ին, Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի հանձնարարությամբ, գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը կիսասարկավագության աստիճան շնորհեց Թբիլիսիի էջմիածնեցիներից Ս. Գևորգ եկեղեցու դպիր Ռուբեն Ալիսաղյանին։

***

Փետրվարի 23-ին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, որը գտնվում էր Ս. Էջմիածնում՝ մասնակցելու Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին, մեկնեց իր պաշտոնավայրը՝ Ռումինիա։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Ջ. Հայրապետի անվան հետ սերտորեն կապված պիտի մնա անշուշտ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի վերջին լայնածավալ և ճամայնապարփակ նորոգությունը, որի աշխատանքները, սկսվել էին, երբ դեռևս տգջ էր ավագարդ Հայրապետը և շարունակվում են ներկայումս ամենամեծ թափով և ուշադրությամբ։

Ընդգծում ենք լայնածավալ և ճամայնապարփակ բառերը, որովհետև ներկայումս կատարվող աշխատանքներն ընդգրկում են ոչ միայն Մայր Տաճարի և Վեհարանի՝ ժամանակի և բնության ազդեցության ներքո հնացած, մաշված և խարխլված մասերի վերանորոգումը, այլև արմատական վերամշակումը ներքին նկարազարդության, գործ՝ նշանավոր Նաղաշ Հովնաթանի (մն. 1661 թ.) և նրա թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի (18-րդ դար), ինչպես նաև արտաքին հոյակերտ պարսպի հիմնովին քանդումով և տուֆաքարաշեն պարսպի կանգնումով, որը, շտապենք ասելու, արդեն վերջանալու մոտ է։

Հայ Եկեղեցու պատմության ծանոթ ամենը գիտի, թե Ս. Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական փայտաշեն կառուցումը տեղի է ունեցել Քրիստոսի 303 թվականին՝ Տրդատ Մեծ թագավորի և Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ, իսկ 485 թվականին, Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանը, փայտաշեն եկեղեցու տեղ, նոր տճով և ժամանակի պահանջած հատակագծով շինել է քարակերտ եկեղեցին, որ հետագային կրել է զանազան նորոգություններ և նույնիսկ հատակագծային փոփոխություններ։

Մայր Տաճարի առաջին կարևոր նորոգությունը տեղի է ունեցել նախապես Մամիկոնեից եպիսկոպոս և Ս. Հռիփսիմեի վանքի փակակալ (լուսարարապետ) Կոմիտաս կաթողիկոսի օրով (7-րդ դար)։ Նրան է վերագրվում մասնավորապես փայտաշեն գմբեթի տեղ քարաշեն գմբեթի կառուցումը։ Սակայն հատակագծային աչքառու փոփոխությունը կատարվել է Ներսես Գ. Շինող կաթողիկոսի ձեռամբ (7-րդ դար, Կոմիտասից 20 տարի հետո)։

Ըստ ճարտարապետ Թորոս Թորամանյանի հայտնած հեղինակավոր տեսակետի, Ս. Էջմիածնի Մայր Տաճարն սկզբում եղել է քառակուսի, իսկ այժմվա խաչաձև վիճակը ստացել է Ներսես Գ. Շինող կաթողիկոսի կատարել տված նորոգությունների ժամանակ (642—662 թ. թ.)։ Մեծանուն ճարտարապետը, մանրակին վերապով ուսումնասիրելով հայ եկեղեցական ճարտարապետության սեր և Մայր Տաճարի հնագույն պատերի վրա տեսնվող ճարտարապետական հատուկ կենտ փշրանքները, հայտնում է այն միտքը, թե Ներսես Շինող կաթողիկոսը, թերևս տաճարը ընդարձակելու դիտավորությամբ, չորս կողմից քառակուսի պատերի մեջ ամփոփված արսիդները (խորան— Ս. Հ.) արտաքին պատերից դուրս հանից, ինչպես որ այժմ կտեսնվի։ Ուրեմն, հատակագծի վերջին ձևը տրվեցավ 7-րդ դարում։

Ներսես Շինող կաթողիկոսից (7-րդ դար) մինչև Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսը (17-րդ դար) անցնող տասը դարերի ընթացքում, Մայր Տաճարի վրա ոչ միայն կարևոր նորոգության հիշատակությունը չենք գտնում մեր պատմիչների մոտ, հակառակ այն իրողության, որ Կաթողիկոսական Աթոռը Կիլիկիայից (Սսից) էջմիածին է փոխադրվել 15-րդ դարի առաջին կեսին (1441 թ.), այլև ընդհակառակը, ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու՝ «Ցորժամ Մովսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին փակակալ (լուսարարապետ) Կոմիտաս կաթողիկոսի օրով (7-րդ դար)։ Նրան է վերագրվում մասնավորապես փայտաշեն գմբեթի տեղ քարաշեն գմբեթի կառուցումը։ Սակայն հատակագծային աչքառու փոփոխությունը կատարվել է Ներսես Գ. Շինող կաթողիկոսի ձեռամբ (7-րդ դար, Կոմիտասից 20 տարի հետո)։

Ըստ ճարտարապետ Թորոս Թորամանյանի հայտնած հեղինակավոր տեսակետի, Ս. Էջմիածնի Մայր Տաճարն սկզբում եղել է քառակուսի, իսկ այժմվա խաչաձև վիճակը ստացել է Ներսես Գ. Շինող կաթողիկոսի կատարել տված նորոգությունների ժամանակ (642—662 թ. թ.)։ Մեծանուն ճարտարապետը, մանրակին վերապով ուսումնասիրելով հայ եկեղեցական ճարտարապետության սեր և Մայր Տաճարի հնագույն պատերի վրա տեսնվող ճարտարապետական հատուկ կենտ փշրանքները, հայտնում է այն միտքը, թե Ներսես Շինող կաթողիկոսը, թերևս տաճարը ընդարձակելու դիտավորությամբ, չորս կողմից քառակուսի պատերի մեջ ամփոփված արսիդները (խորան— Ս. Հ.) արտաքին պատերից դուրս հանից, ինչպես որ այժմ կտեսնվի։ Ուրեմն, հատակագծի վերջին ձևը տրվեցավ 7-րդ դարում։

Ներսես Շինող կաթողիկոսից (7-րդ դար) մինչև Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսը (17-րդ դար) անցնող տասը դարերի ընթացքում, Մայր Տաճարի վրա ոչ միայն կարևոր նորոգության հիշատակությունը չենք գտնում մեր պատմիչների մոտ, հակառակ այն իրողության, որ Կաթողիկոսական Աթոռը Կիլիկիայից (Սսից) էջմիածին է փոխադրվել 15-րդ դարի առաջին կեսին (1441 թ.), այլև ընդհակառակը, ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու՝ «Ցորժամ Մովսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին

վան հողն և մոխրոյն, որ լլրացեալ կայր շուրջանակի, թէ դիա՞ղ պեղել...», Նշանակում է, որ 1729 թվականին Մայր Տաճարը գտնվում էր հողի և մոխրի լլրի տակ և Սյունյաց անապատի փառքն ու պարծանքն եղող և Երևանի Ամիրգունա խանի պաշտպանությունը վայելող Մովսես վարդապետի (ապա կաթողիկոս) ձեռամբ, հիմնական նորոգություններ կատարվեցին Մայր Տաճարի վրա և նրա շուրջը կառուցվեցին պարիսպներ և նոր շենքեր, որոնց մասին պատմագիր Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ դպարիսպն զոր շինեցին, այսպէս ձևեցին։ Որպէս և տեսանի լեկեղեցւոջ անդ շուրջքին խորանք սկեղեցւոյն, որք կան յորինեալք ի նմա ընդ շորս կողմս աշխարհիս, յարտաքսուտ կոտէ եկեղեցւոյն ի ճակատաց այս շորից խորանացս ...Եւ ապա ի մէջ պարիսպին արևմտեան կողմն շինեցին դարպասք և տունք ի պէտս ինքեանց և հիւրոց. և ի հիւսիսային կողմն և յարևելեան կողմն շինեցին խցիր ի բնակութիւն միաբանից. և ի հարաւային կողմն շինեցին սեղանատուն, փռնատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենոյ և այլ նիւթոց։ Եւ ամենայն շինուածք այսոքիք, միայն պարիսպն ի հողոյ եղև շինեալ, իսկ այլքն ամենքեան լիտեալ քարիւ և թրծեալ աղիւսով և կրով և բոով շինեցան գեղեցիկ և վայելուչ յորինուածովք։

«Յետ այսորիկ սեկեղեցւոյ գմբեթի տանիքն նորոգեցին, քանզի սաստիկ քանդեալ և ի տեղւոյն ի բաց ոստեալք էին։ Եւ թէ ոք տեսնէր զեալ գիտել կամիցի զչափ լուսակառոյց քրիստոսանկար աստուածարնակ տաճարի Սուրբ Էջմիածնի, այսքան է. յիտուն Հալարի գաղ երկայնքն է յարևելից դէպ յարևմուտս. ԽՀ Հալարի լայնքն է հիւսիսոյ դէպ ի հարաւ. Լե Հալարի բարձրութիւնն է ներսի կողմանէն Կաթուղիկէի՝ պորտէն մինչև ի գետինն. այս չափերս եկեղեցւոյ մէջն է ներսի կողմն, թող զպատերն։

Մովսէս Տաթևացի կաթողիկոսի Մայր Տաճարում կատարած փերոհիշյալ շինարարություններից հետո, մասնակի նորոգություններ կատարված են նաև Փիլիպոս Աղթամարեցի (1633—1655 թ. թ.) և Հակոբ Դ. Ջուղայեցի (1655—1680 թ. թ.) կաթողիկոսների ձեռամբ։ Փիլիպոսը սկսել է գանգակատան շինությունը, հավատալ Երևանի խանի կամքին, բայց դեռևս չավարտած շինությունը՝ վախճանվել է և թաղվել Ս. Հռիփսիմեի վանքում։ Հակոբ Ջուղայեցին, շարունակելով նախորդի սկսած շինարարությունը, ոչ միայն ավարտել է գանգակատան կիսատ մնացած շինությունը Շահի հրամանով, այլև կառուցել շորս լճակները՝ Էջմիածնապատկան դաշտերի ոռոգման համար։ Ներկա լճակը՝ Ներսես Աշտարակեցու նորոգածն է։

Մայր Տաճարի գմբեթների շինության և տանիքի նորոգության կապակցությամբ հիշվում են անունները Եղիազար Այնթապցի կաթողիկոսի (1682—1691 թ. թ.) և Եփրեմի կաթողիկոսի (1810 թ.)։ Ավելի ուշ, նորոգություններ են կատարվել նաև Մակար և Գեորգ կաթողիկոսների օրով։ Իսկ նրանցից հետո Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի վրա բազմած կաթողիկոսները միշտ երազել ու ծրագրել են Մայր Տաճարի արտաքին նորոգությունը, բայց բախտը չեն ունեցել իրականացած տեսնելու իրենց այդ երազը, որովհետև նման նորոգության համար կարիքը կար հսկայական գումարների, և հայ մեծահարուստներն ամուր էին կապել իրենց բսակների բերանները։

Նորոգությունների պակասի հետևանքով էր անշուշտ, որ Եղիազար կաթողիկոսի շինելուված երեք փոքր զանգակատներից հարավային խորանի վրայինը փուլ էր եկել 1921 թվականին։ Փլած զանգակատունը չէր վերականգնվել՝ չծանրաբեռնելու համար 13 դարի հնություն ունեցող խորանի պատերը, բայց փլատակից խախտված մասերը նորոգվել էին ըստ հարկական ոճի՝ ակադեմիկոս Ճարտարապետ Թամանյանի ցուցումների համաձայն և ճարտարապետ Թորոս Թորամանյանի անմիջական հսկողության ներքո։

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնական նորոգության հարցը առաջնահերթ հարցն էր, որ հուզում էր երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի միտքը։ Նա, որպես հայրապետական Հովվապետ, երբեմն-երբեմն բախում էր արտասահմանում բարերար ազգայիների սրտի դռնակները, որպեսզի հիշեն «Էջմիածնի լումանա», բայց երբ չարդարացան Նրա հույսերը, Նա դիմեց հայրենի կառավարության, որը ընդառաջեց Վեհափառի բաղձանքին և իր վրա վերցրեց վերանորոգության գործը, նայելով Էջմիածնի Տաճարի վրա որպես պատմական և ճարտարապետական կարևոր ուշարձանի։

Սակայն, իրողությունն այն է այսօր, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում և շրջափակում սկսվել են և մեծ թափով առաջ են տարվում վերանորոգման և վերակառուցման այնպիսի հսկայական և ընդարձակ աշխատանքներ, որոնց նմանը երբևիցե չի արձանագրել հայ եկեղեցական պատմությունը։ Երբ այդ աշխատանքները վերջանան, քրիստոնեական ծագում ունեցող եկեղեցիների ամենահինն եղող Էջմիածնի Տաճարը կդառնա, 16 դարի հնություն ունենալով հանդերձ, հայ ճարտարապետության նոր հրաշալիքը։

Վերև նշեցինք արդեն, որ հին, պարսկական տիրապետության շրջանի հողակերտ

պարսպի տեղ այժմ բարձրանում է գեղեցիկ տաշված տուֆաքարաշեն պարիսպը։ Ինչ վերաբերում է Մայր Տաճարի պատմական նկարագրության վերականգնման աշխատանքներին, նրանք կատարվում են Երևանի Գեղարվեստական ինստիտուտից շրջանավարտ նկարիչներ Խանաղյան Գեորգի (Գիգա), Սարգսյան Ալեքսանդրի, Սիրավյան Հենրիկի, Շահբաղյան Գեորգի, Հովսեփյան Քնարիկի, Գորգմազյան Էմմայի, Հակոբյան Հրանտի և ուրիշների ձեռքով և հսկողությամբ Հայաստանի Պետական թանգարանի և Պատկերասրահի Հին հայկական արվեստի բաժնի պետ, արվեստի վաստակավոր գործիչ, հայ մանրանկարչության հանրածանոթ մասնագետ տիկին Դուտնովայի, որի «Հայ մանրանկարչության ալբոմը լույս տեսավ անցյալ տարի Լենինգրադում։ Անցյալ նոյեմբերի 25-ին սկսված սույն աշխատանքները վերջանալու են առաջիկա հունիսին։

Դավրիժեցին, Մովսես Տաթևացու կատարած նորոգությունների կապակցությամբ, դրում է. «Եւ օր յաւուր նորոգեալ հաստատէր Սուրբ Աթոռն, որով և՝ ամենայն կարգ և կրօնք հաւատոյս քրիստոնէութեան, վասնզի համբաւ նորոգման Սրբոյ Աթոռոյս հրաշակեալ ծաւալեցաւ ընդ ամենայն աշխարհ, ի Հոռոմաստան, ի Պարսկաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, և ամենեքեան զուարճացեալք ցնծային։ Այդ ցնծությունը տեղի էր ունեցել, երբ Հայաստան աշխարհը հեծեծում էր պարսիկ խաների և օսմանցի հորդաների բիրտ կրունկների տակ։ Անտարակույս, անհամեմատորեն և անսահմանորեն մեծ պիտի լինի հանուր հայության ցնծությունն ու զվարճությունը՝ դերագահ Մայր Աթոռի հաստատման և Գրիգոր Լուսավորչի ձեռամբ հիմնված Հայաստանյայց Միածնէջ Մայր Եկեղեցու գերիվեր պայծառացման ի լուր, մանավանդ, երբ այդ պայծառացումը տեղի է ունենում Հայաստանի իմաստուն կառավարության հայրախնամ հոգատարության։

Թո՛ղ հավետ օրհնյալ լինի հիշատակը երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի, որ եղավ մարդարե ներշնչողը համորեն հայկազանց հոգևոր միության կենտրոն և լուսո խորան Ս. Էջմիածնի հրաշակերտման։

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՎ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հինգշաբթի, փետրվարի 17-ին, երեկոյան ժամը 8.10-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ տոնակատարություն, ի հիշատակ սրբոց Վարդանանց և Ղևոնդյանց։ Նախագահության սեղանի շուրջն էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ՝ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հյուրաբար քաղաքումս գտնվող ռումինահայերի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Մինաս Մինասյանը և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Մարտիրոս Տեր-Ստեփանյանը։ Դահլիճը լցնող բազմության մեջ տեղ էին գրավել Էջմիածնի միաբանության անդամ վարդապետներ, աբեղա, քահանա, սարկավագ, Ճեմարանի դասախոսներ, վանքի պաշտոնյաներ և Սրևանից հրավիրված երկսեռ հանդիսականներ։

Հանդեսի բացումը կատարվեց Ճեմարանի ուսանողների երգած Սովետական Հայաստանի Պետական Հիմնով և գերաշնորհ Տ. Սահակ սրբազանի «Զդորձս ձեռաց մերոց» մաղթանքով, որից հետո հանդիսականները հոտնկայս հարգում են Գերաշնորհ Հայրապետի հիշատակը, ապա լսում՝ ուսանողների երգած «Նորահրաշ պսակաւոր...» շարականը, որտեղ Ներսես Շնորհալի կաթողիկոսի գրչով փառաբանվում են Հայ Հայրենիքի ու հավատի ազատության պայքարում նահատակված զորագլուխները՝ քաջն վարդան Մամիկոնյան, կորովին Խորեն Խորխոռունի, արին Արտակ Պահլավունի, զարմանալին Տաճատ Գնթունի, իմաստունն Հմայակ Դիմաքսյան, հրաշակերտն Ներսեհ Քաջբերունի, մանուկն Վահան Գնունի, արդարն Արսեն Ընծայեցի և հատաջալանն Գարեգին Սրվանձտյանց։

Ապա խոսքը տրվում է Հոգևոր Ճեմարանի Հայ ժողովրդի պատմության, Հայ Եկեղեցու պատմության, կրոնագիտության և դպրարարի դասախոս Արթուն Հատիտյանին, որ յուրահատուկ պերճախոսությամբ ներկայացնում է Վարդանանց հոգեղունց դյուցազնամարտը, նրա պատճառներն ու հետևանքները, դրվում՝ հայ ժողովրդի հայրենասիրությունն ու ազատասիրությունը, փառաբանում ու պանծացնում նրա փառավոր ներկան, հորդորում՝ նաբշնչվել Վարդանանց խորհրդով և «եկեցեք» հռչակում հայ ժողովրդի և նրա սիրելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հացնով։

Ավուր պատշաճի քերթվածներ արտասանեցին կամ ընթերցումներ կատարեցին ուսանողներ Ազատ Սանթուրյանը («Եկեղեցին Հայկական»— Վ. Թեքեյան), Ժիրայր Բոյաճյանը («Խորհուրդ Վարդանանց»— Վ. Թեքեյան), Ցոլակ Աղաջանյանը («Երգ Հայաստանի»— Հ. Սահյան), Ավետիս Ղուկասյանը («Քաջն Վարդան»— Սիոն Եպիսկոպոս), Իշխան Մելքոնյանը («Զայն հայրենական»— Ն. Զարյան), Սանդրո Բեհրուդյանը («Տիկնայք փափկասունք»— Եղիշե), Հովհաննես Դանիելյանը («Ավարայրը»— Հ. Ղ. Ալիշան)։

Գեղեցիկ ու հաճելի անակնկալ եղավ բանախոսությունը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և ռումինահայերի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի, որ հանդեսը սկսելուց հաղիվ մեկ-երկու ժամ առաջ էր վերադարձել Բաքու և Կիրովապատ կատարած այցելությունից։ Սրբազան բանախոսը նմանապես կանգ առավ Վարդանանց

դյուցազնամարտի մեծ նշանակության վրա և թելադրեց ուսանողներին և հանդիսականներին՝ առաջնորդվել հայրենի հերոսների դյուցազնական ոգով, սիրել Ազգը, սիրել Եկեղեցին և երախտապարտ լինել մեծ Սովետական Միության, որի հայրախնամ հոգատարությամբ օրեցօր ծաղկում և բարգավաճում է մեր սիրելի Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։

Եզրափակիչ խոսքում հանդեսի ղեկավարող վերատեսուչ Մարտիրոս Տեր-Ստեփանյանը նշեց պատմական այն խոշոր նշանակությունը, որ ունեցել է Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմության մեջ։

«Այսօր աշխարհացրիվ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին,— ասաց վերատեսուչը,— սկսյալ Միածնաէշ և լուսավորչակերա Մայր Տաճարից, երգով ու շարականով, խունկով ու կնդրուկով, աղոթքով ու պատարագով պանծացրեց սրբացած հիշատակը Վարդանանց և Ղևոնդյանց նահատակների, զորք կատարեցան ի մեծի պատերազմին Աւարայրի։

«Այսօր, աշխարհի բոլոր անկյուններում, հայ ժողովուրդը մեծաշուք հանդեսներով պանծացնում է Հայրենիքի ու հավատի պաշտպանության պայքարում ընկած նահատակների՝ Վարդանանց և Ղևոնդյանց անմահ հիշատակը։

«Հայաստանյայց Եկեղեցին և հայ ժողովուրդը, այսօր, պանծացնելով 451 թվականին Տղմուտ գետի ափին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի հերոսների խընկելի հիշատակը, պանծացնում են իրենք իրենց, որովհետև այդ քաջամարտիկ նահատակների անձում մարմնավորված են տեսնում իրենց իդեալը, իրենց հոգին»։

Այնուհետև վերատեսուչը կատարում է Ամենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի Վարդանանց նվիրված նշանավոր կոնդակից մեջբերում՝ Ավարայրի պատմական նշանակության մասին. «Ավարայրը հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պանծալի բարձունքն է՝ հերոսական արտահայտությունը Հայ Ազգի բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնուրաց հերոսության, հոգևոր մշակույթի, նվիրվածության և մարտական կորովի։ Ով կարդացել է երանաշնորհ Հայրապետի 1950 թվականին Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության ուղղած սրբատառ կոնդակը՝ Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակն ազգովին տոնելու մասին,— շարունակում է վերատեսուչը,— անպայման պիտի հիշի նրա վերջաբան աղոթքը. «Հավետ անշարժ և անսասան մնա լուսո խորան Ս. Էջմիածինը, որի ալեզարդ Գահակալը ի տվնչյան և ի գիշերի ծնրադրոք և չերմեռանդ աղոթում է Ամենաբարձրյալին՝ աշխարհի խաղաղության և մարդկանց երջանկության համար։

Հանդեսը փակվեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի «Պահպանիչ»ով և ուսանողների երգած եռաձայն «Հայր մերով և «Բա՜մ, փոքրոտանով՝ ղեկավարությամբ Ճեմարանի երաժշտության դասատու պարոն Հրանտ Գեորգյանի։

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ

ԵՂԻՇԵ ԱՐԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 22-ն է։ Առավոտյան նախաճաշից հետո, Հոգևոր Ճեմարանի ուսանողները կազմ ու պատրաստ են։ Նրանք բոլորն էլ ուրախ են այս առավոտ, որովհետև այցի են գնում հայ ճարտարապետության փառքի կոթող Զվարթնոցը, որին ի տես օտարներն անգամ իրենց հիացմունքն են արտահայտում հայ ժողովրդի ստեղծագործական տաղանդի առաջ։ Ուսանողներին ընկերակցում են Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը, Ճեմարանի դասախոսներից Արթուն Հատիտյանը և տողերիս գրողը։

Զրոսապտույտի դուրս եկած խումբը, չնայած առավոտյան ամպամած օդին, հետիոտն, ճամբա է ընկնում դեպի Զվարթնոց։

Ճանապարհով անցնելիս աչքի են զարնում նորակառույց բնակելի շենքերի շարանները, որոնք ուղեկցում են Էջմիածին— Երևան խճուղուն և առանձին գեղեցկություն են տալիս շրջապատին։ Մեր առաջ փռված է Արարատյան դաշտը, որն այս տարի ավելի շուտ է արթնացել իր ձմեռային նիրհից։ Զախում՝ քառագագաթ Արագածը, աջում՝ սուրբգրական ու հավերժական Արարատը, իրենց ամպածրար գագաթներով, որպես արթուն պահակ, հսկում են հայրենի անսահման տարածությունների վրա։ Մեղանից ոչ հեռու աշխատում են տարբեր ձևի տրակտորներ, որոնց մոտոռների շռինդը գարնանային զով քամին տանում է հեռուն, միախառնելով դաշտերում հողին կյանք տվող աշխատավորների ուրախ երգի հետ։

Ահա հասնում ենք Զվարթնոց։ Մեզ դիմավորում է Ճարտարապետական հնությունների պահպանության կոմիտեի ներկայացուցիչը։ Նա մեզ տալիս է մանրամասն բացատրություններ Զվարթնոց տաճարի, Կաթողիկոսարանի, բաղնիքի և հարակից շինությունների ու թանգարանում պահված հնությունների մասին, որոնք գտնվել են պեղումների ժամանակ։

Հետո, Զվարթնոց տաճարի խորհրդավոր ավերակների միջև, ուսանողները լսում են հայ ժողովրդի պատմության իրենց դասախոս Արթուն Հատիտյանի դասախոսությունը Ներսես Գ. Շինող կաթողիկոսի, Զվարթնոց տաճարի և առհասարակ նրանց ժամանակաշրջանում տիրող քաղաքական անցուդարձերի մասին։ Դասախոսը, ի միջի այլոց ասում է, որ Ներսես Գ. Շինող կաթողիկոսը տաճարի օծման ժամանակ հրավիրել էր նաև բյուզանդական Կոստանդ կայսեր, որը, տեսնելով տաճարի գեղեցկությունը, ցանկացել էր նույն վարպետի ձեռքով և նույն ոճով տաճար կառուցել տալ նաև Կոստանդնուպոլսում։ Բայց հայ ճարտարապետը մահացել էր ճանապարհին, և Զվարթնոցը մնացել էր անկրկնելի։ «Հայ վարպետները, — ասում է դասախոսը,— երբե՛ք չեն ուզեցել իրենց ձեռքով մի ուրիշ տեղ նույն ձևով և բովանդակությամբ շինություն կառուցել։ Նրանք հաճախ գմբեթներից կամ տանիքներից են իրենց գցել, որպեսզի չկրկնեն իրենց կառուցածը, այսպիսով ցույց տալով հայ ժողովրդի նկարագրի ամրությունը, նրա հոգու գեղեցկությունն ու հանճարի մեծությունը։ Հայը ունի Զվարթնոցներ, Հռիփսիմեներ, Հովվի եկեղեցիներ և Ս. Էջմիածնի պես գեղակա-

ռույց տաճարներ, որոնք մեր ժողովրդի ճարտարապետության փառապսակներն են։

Վերջացնելով իր շահեկան դասախոսությունը, հարգելի դասախոսը իր խոսքն ուղղում է ուսանողներին. «Այս հրաշակերտ տաճարը՝ Զվարթնոցը,— ասում է նա,— հողի տակից լույս աշխարհ է հանել Ս. Էջմիածնի համեստ միաբաններից մեկը՝ Խաչիկ վարդապետ Դադյանը։ Մենք ունենք շատ վանքեր ու եկեղեցիներ, որոնք կարոտ են ուսումնասիրության։ Ես հույս ունեմ, որ Զվարթնոց կատարած մեր այցելությունը ձեր սրտերում կարծարծի հայրենասիրությունը և դուք այսուհետև ավելի մեծ եռանդով պիտի ուսումնասիրեք մեր ժողովրդի սքանչելի պատմությունը։

Վերատեսուչը ևս բարեմաղթում է Հոգևոր Ճեմարանի ուսանողներին, որ նրանցից ևս դուրս գան ուսումնասեր և գիտնական մարդիկ և կարդան այս լուռ քարերի մեջ եղած խորհուրդը, ինչպես կարդացել են մեր նախահայրերը և ներշնչվել են այդ խորհրդով։

Վերադարձի ճանապարհի վրա ուսանողները բազմաթիվ հարցեր են տալիս դասախոսին և պատասխան ստանում նրանից՝ հայ ժողովրդի և Հայ եկեղեցու պատմության զանազան շրջանների և առանձին կաթողիկոսների ու անհատների մասին։ Խոսակցությունը այնքան շահեկան է, որ ոչ ոք հոգնություն չի զգում։

Ճանապարհի վրա այցելում ենք նաև Ս. Հռիփսիմեի վանքը, որտեղ ուսանողները մի անգամ ևս համբուրում են Ս. Կույսի մարմարե գերեզմանը, դիտում են գեղեցիկ տաճարը և ուրախ տրամադրությամբ, շատ գոհ իրենց կատարած հաճելի և օգտակար պտույտից, վերադառնում են Հոգևոր Ճեմարան։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ԱՐՎԱՐՁԱՆՆԵՐԸ.— Միկոյանի անվան շրջան է կոչվում Երևանի այն մասը, որը հիմնականում ընկած է Քանաքեռի սարալանջին։ 6—7 տարի առաջ այս կողմերը գրեթե ամայի տարածություններ էին։ Գոյություն ուներ միայն Նոր-Արարատը, այն էլ ոչ ներկայիս դրությամբ։ Այժմ առաջացել են նոր ավաններ՝ Զեյթուն, Կամարակ, Կիրզա և այլն։ Բազմաթանգ քարերով կառուցված բազմաթիվ դեղեցիկ շենքերը վեր են բարձրացել համատարած կերպով, միացել բուն քաղաքին, նրանց շարքերը ձգվել են մինչև նորքի հետևում ընկած լեռների լանջերը։

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այս շրջանում կառուցվել են արդյունաբերական 7 խոշոր ձեռնարկություններ, չհաշված արհեստագործական արտադրությունները։ Այդ ձեռնարկությունների թվին են պատկանում էլեկտրական լամպերի, կահույքի, ժամացույցի, կոշիկի, շամպայն գինիների, տնային գործածության ամանեղենի և այլ գործարանները։

Կառուցված են 10-ից ավելի նոր դպրոցներ, մանկապարտեզներ, բանվորական ակումբներ և կուլտուրական այլ հաստատություններ։ Շրջանն ունի իր բուժարանները, հիվանդանոցը, բաղնիքները, 60-ից ավելի խանութներ և կենցաղային սպասարկման այլ հարմարություններ։ Կառուցված են հասարակական շատ շենքեր, հիմնված են գրադարաններ, պուրակներ։ Միկոյանի շրջանը քաղաքի կենտրոնի և մյուս ծայրերի հետ կապված է երթևեկության բոլոր միջոցներով։

Արդյունաբերական ձեռնարկությունների ընդարձակ խոշոր շենքերից բացի, վերջին 4 տարում շուրջ 3.000 ընտանիքներ իրենց համար կառուցել են բարեկարգ տներ՝ պետական վարկերի միջոցով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ.— Հայաստանի պետական պատկերասրահը վերջերս գրգռիչորեն ընդարձակվեց։ Ցուցադրման են հանված շուրջ 300 նոր նկարներ, քանդակներ, գրաֆիկ աշխատանքներ, որոնք տեղ չունեին պատճառով չէին ցուցադրվում։ Երկու ընդարձակ սենյակներում ցուցադրված են Հին Հունաստանի, Հռոմի, Հնդկաստանի, Եգիպտոսի, ինչպես նաև 17-րդ, 18-դ և 19-րդ դարերի ֆլամանդական, իտալական և ֆրանսիական արվեստի մի շարք հետաքրքիր նմուշներ։ Այդ գործերի թվում են հոլանդական և ֆլամանդական հոչակավոր վարպետներ Ռեմբրանտի, Դյուժարդենի, Վան Դեյկի, Իորդանսի և մյուսների աշխատությունները։ Առաջին անգամ այստեղ ցուցադրված է 16-րդ դարի իտալական հայտնի նկարիչ Ճակոպո դա Պոնտե Բասանի «Մեռելոց» նկարը, որը Պատկերասրահին նվեր է ուղարկված Ռումինիայի հայերի կողմից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատմական թանգարանում բացվել է հայ ժողովրդի նյութական կուլտուրայի պատմության մշտական ցուցահանդես։ Ցուցահանդեսում մի առանձին բաժին նվիրված է նախնադարյան հասարակության շրջանին։ Այստեղ ցուցադրված են քարե գործիքներ, որոնք հայտնաբերված են Արզամփ ստորոտներում և Հրազդանի ձորում կատարված պեղումների ժամանակ։ Հաջորդ բաժիններում կան հետաքրքիր նմուշներ, որոնք վերաբերում են ավելի նոր շրջանի (պղնձե դար և այլն)։

Լայն տեղ է հատկացված Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերված իրերի ցուցադրմանը։ Տնային գործածության բազմապիսի իրերը վկայում են այն մասին, թե ինչպիսի զարգացում են ունեցել արհեստները Ուրարտական պետության շրջանում։ Հայաստանի միջնադարյան կենտրոններին՝ Դվինին և Անիին նվիրված են առանձին սրահներ։

Հարուստ և հետաքրքիր է Հայկական հին ճարտարապետությանը նվիրված բաժինը, ուր կարելի է տեսնել մեր հարուստ ճարտարապետական կոթողներին վերաբերող բազմաթիվ նմուշներ։

Այս մշտական ցուցահանդեսը հետագայում հարստացվելու է Հայաստանի պատմությանը վերաբերող նոր նյութերով՝ սկսած 16-րդ դարից մինչև մեր օրերը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃԸ.— Հանրագումարի են բերված Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման

1954 թվականի արդյունքները։ Ստորև բերում ենք մի քանի թվեր, որոնք բնորոշում են ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության աճը։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները 1954 թվականի արտադրական ծրագիրը կատարեցին 102 տոկոսով։ Արդյունաբերության համախառն արտադրանքը նախորդ, 1953 թվականի համեմատությամբ աճեց 18 տոկոսով, 1950 թվականի համեմատությամբ՝ 73 տոկոսով, իսկ նախապատերազմյան 1940 թվականի համեմատությամբ՝ ավելի քան 5 անգամ։ Մեքենաշինական, քիմիական, գունավոր մետաղների, լեռնահանքային արդյունաբերության հետ միասին արագորեն զարգանում է ժողովրդական սպառման առարկաների արդյունաբերությունը։

1954 թվականին Հայաստանի արդյունաբերությունը թողարկել է (համեմատական գներով) 87 անգամ ավելի արտադրանք, քան 1913 թվականին։ Ներկայումս ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունները յուրաքանչյուր 4 օրը թողարկում են այնքան արտադրանք, որքան թողարկվել է 1913 թվականի ամբողջ տարվա ընթացքում։ Հայաստանի էլեկտրակայանները այժմ մեկ օրում արտադրում են այնքան էլեկտրաէներգիա, որքան արտադրված է 1913 թվականի ամբողջ տարվա ընթացքում։

1954 թվականին, նախորդ 1953 թվականի համեմատությամբ, Հայաստանում մթերված է 41 տոկոսով ավելի բանջարեղեն, 43 տոկոսով ավելի խաղող, 37 տոկոսով ավելի կաթ, ինչպես նաև զգալի քանակությամբ ավելի ձմեռնամ, ժամապտուղ, շաքարի ճակնդեղ, բամբակ և այլն։

ԴԵՐԱՍԱՆ ԴԱՎԻԹ ՄԱՅՑԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ.— Փետրվարի 7-ին Երևանի հասարակայնությունը նշեց ռեսպուբլիկայի ժողովրդական դերասան Դավիթ Մայլյանի ծննդյան 50-ամյա և բեմական գործունեության 30-ամյա հոբելյանը։ Դ. Մայլյանը Երևանի Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի ամենավառ դերասաններից մեկն է։ Հանդիսավոր երեկույթի ժամանակ հոբելյարին ջերմորեն ողջունեցին Հայաստանի թատրոնների և կոլտուրական հաստատությունների, ինչպես նաև Թբիլիսիի և Բաքվի վրացական ու ադրբեջանական թատրոնների ներկայացուցիչները։

«ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ.— Հայաստանի պետական հրատարակչությունը լույս է ընծայել կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի հայտնի «Անուշ» օպերան։ Օպերայի տեքստը տրված է հայերեն և ռուսերեն լեզուներով։ Երգերը տրված են դաշնամուրի նվագակցությամբ։ Գիրքը ձևավորել է ժողովրդական նկարիչ Հ. Կոջոյանը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ.— Երևանի բժշկական ուսումնարանը ռեսպուբլիկայի հնագույն ուսումնական հաստատությունն է։ 1922 թվականին այն տվել է բուժքույրերի և մանկաբարձուհիների առաջին շրջանավարտները։ Իր գոյությունն 34 տարվա ընթացքում ուսումնարանը տվել է 5.530 շրջանավարտներ, որոնք աշխատում են Հայաստանի և Սովետական Միության տարբեր վայրերում իբրև բուժքույրներ, մանկաբարձներ, դեղագործներ, լաբորանտներ։ Ուսումնարանն ունի որակյալ մանկավարժներ, որոնց թիվը հասնում է շուրջ 100-ի։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Տարեցտարի Հայաստանում լայն ծավալ է ստանում շինարարությունը։ Հետաքրքիր է մեջ բերել հետևյալ տվյալները.

Վերջին 4 տարում, սկսած 1950 թվականից ռեսպուբլիկայում կառուցվել և շահագործման են հանձնվել Գյումուշի հսկա հիդրոէլեկտրակայանը, Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանը, Երևանի «Էլեկտրո» գործարանը, մետաքսապտղաբուծական ֆաբրիկան, բրդյա նուրբ գործվածքների կոմբինատը, ինչպես նաև սննդի, թեթև և տեղական արդյունաբերության մի շարք այլ ձեռնարկություններ։ Շինարարության կարիքների համար հատկացվող միջոցները անցյալ 1951 թվականին 2,3 անգամ գերազանցեցին 1940 թվականի նախապատերազմյան։

Միայն բնակարանային շինարարության գծով վերջին 4 տարում պետությունը ծախսել է 338.000.000 ռուբլի։ Ռեսպուբլիկայի քաղաքներում կառուցվել և շահագործման է հանձնվել 243.000 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Բացի այդ, նույն ժամանակամիջոցում պետական վարկերի և իրենց անձնական միջոցներով քաղաքների և ավանների բնակիչները կառուցել են 20.000 անհատական տներ։

Չորս տարվա ընթացքում կառուցվել և գործադրման են հանձնվել մեծ թվով դպրոցներ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ, ակումբներ, կինոթատրոններ և հասարակական այլ շենքեր։

Ներկայումս հաջողությամբ ստաց է տարվում Արզնիի հիդրոէլեկտրակայանի, Թալինի, Արզնի—Շամիրամի ու Կոտայքի ոռոգման ջրանցքների, ինչպես նաև մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը։

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՌԱՇԵՌՈՒԹՅՈՒՆ.— 1954 թվականի դեկտեմբերին, երբ Հայաստանում լայնորեն նշվեց մեծանուն գրող-հրապարակախոս և հասարակական գործիչ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը, Երևանում, Նալբանդյանի փողոցի վրա գտնվող պուրակում հանդիսավոր կերպով հիմք դրվեց նրա հուշարձանին։ Այժմ Հայաստանի Կոլտուրայի մինիստրությունը հայտարարել է վերոհիշյալ հուշարձանի նախագծի բաց մրցանակաբաշխություն, որին հրավիրված են մասնակցելու ինչպես Հայաստանի, այնպես էլ Սովետական Միության այլ ռեսպուբլիկաների ճարտարապետներ և քանդակագործներ։

Հուշարձանը պետք է ունենա 6—8 մետր բարձրություն։ Պատվանդանի համար հանձնարարվում է օգտագործել գրանիտ կամ բազալտ, իսկ արձանի համար՝ բրոնզ։ Լավագույն նախագծի համար սահմանված է մեկ հատ առաջին մրցանակ՝ 20.000 ռուբլի, մեկ հատ երկրորդ մրցանակ՝ 15.000 ռուբլի և երկու հատ երրորդ կարգի մրցանակ՝ յուրաքանչյուրը 10.000 ռուբլի։

Նախագծերի ներկայացման վերջնական ժամկետը սահմանված է մինչև 1955 թվականի նոյեմբերի 15-ը։

ՔԱՂԱՔԱՇԱՏԻՆ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ.— Իր մեծությամբ Կիրովականը երրորդ քաղաքն է Հայաստանում։ Արդյունաբերության զարգացման շնորհիվ քաղաքը բուռն թափով աճում է։ Վերջին 6—7 տարվա ընթացքում բնակարանային շինարարության վրա ծախսված է շուրջ 40.000.000 ռուբլի, չհաշված անհատական բնակարանային շինարարությունը։ Նույն ժամանակամիջոցում առանձին քաղաքացիներ իրենց համար կառուցել են մոտ 2.500 տուն։ Քաղաքի գրաված տարածությունը ներկայումս 5 անգամ ավելի մեծ է, քան 20 տարի առաջ։ Գոյացել են ամբողջ թաղամասեր։ Բնակչության կուլտուրական, կենցաղային և առողջապահական կարիքները հագեցնելու համար կառուցվել են բազմաթիվ հաստատություններ։

ՀԱՆՔԱԳԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ.— Երևանի հանքագործարանը մայրաքաղաքի այն ձեռնարկություններից է, որոնք տարեցտարի ընդարձակում են իրենց արտադրանքի թողարկումը։ Բացի շենքերի ներսի համար գործածվող երեսապատման սալիկներից, վերջերս այստեղ սկսվել է հավճապակյա (ֆայանս) զանազան ամանների և գեղարվեստական իրերի արտադրությունը։ Այդ ամանները ու իրերը մեծ ընդունելության են արժանանում սպառողների կողմից, որովհետև պատրաստվում են նուրբ ճաշակով և առանձին վարպետությամբ։ Դրանց արտադրության համար հրավիրված են հատուկ մասնագետներ և նկարիչներ։

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Այս տարի Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայելու ավելի քան 130 անուն գիտական աշխատություններ, մոտ 230.000 օրինակ ընդհանուր տպաքանակով։ Արժեքավոր աշխատություններ են հրատարակվելու գյուղատնտեսության, բժշկության, Հայաստանի բուսականության և այլ հարցերի վերաբերյալ։ Շարունակվելու է մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի երկերի լրիվ հրատարակությունը 8 հատորով։ Մի շարք գրքեր կհրատարակվեն Հայաստանի նորագույն պատմության վերաբերյալ։ Լույս կտեսնի ռուս-հայերեն բառարանի երկրորդ հատորը և այլ աշխատություններ։

ՔՐԴԱԿԱՆ ԹԵՐԹ.— Սույն թվականի փետրվարի 1-ից Երևանում սկսվեց թրդերեն լեզվով «Ինյա Թադա» («Նոր ուղի») թերթի հրատարակումը։ Թերթը լույս է տեսնում շաբաթական 2 անգամ։ Նման պարբերականի հրատարակումը կուլտուրական խոշոր իրադարձություն է ոչ միայն Հայաստանում, այլև Սովետական Միության սահմաններից դուրս ապրող թուրք ժողովրդի կյանքում։

Իր առաջին համարում թերթը տպագրել է Հայաստանի ռեսպուբլիկական թերթերի խմբագրությունների, ինչպես նաև մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ողջույնները։ Թերթի շուրջը համախմբված են Հայաստանի բազմազգուն ուսումնական հաստատություններում իրենց կրթությունը ստացած մի խումբ թուրք մտավորականներ, ինչպիսիք են Հայրի Ընդին, Ամիտ Ավղաը, Ջաբրմ Ջաֆիլը, Ռասաբ Բակոն և ուրիշներ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐ.— Վերջին մեկ տարում Երևանի Կինոստուդիան զգալիորեն աշխուժացրել է իր գործունեությունը։ Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքի հաջողություններ պատկերող մի շարք ակնարկներից բացի, անցյալ տարի բաց թողնվեց «Մեսրոպ Մաշտոցի» գունավոր գեղարվեստական ֆիլմը, ինչպես նաև մի քանի այլ նկարներ։ Շուտով կցուցադրվի «Հայկական կինոհամերգ» նկարը, որի մեջ հանդես են գալիս Հայաստանի երաժշտական արվեստի ակնառու վարպետները և երաժշտական խմբերը։ Ավարտվում է «Բոստորագույն լեռների գանձը» գեղարվեստական ֆիլմի նկարահանումն ու ձայնագրումը։ Նկարը նվիրված է Հայաստանի երկրաբանների դարձնեությունը։

Նկարահանման համար պատրաստվում է «Լենինգրադի Երիվանդազնի օպերայի համար» դրամա։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցվո Թեմական պատգամավորական ժողովը այս տարի գումարվեցավ նոյեմբեր 27—28-ին, Ցունիրն Սիտիի Ս. Խաչ եկեղեցվույն մեջ, ուր ընտրված դիվանը — առաջին ատենապետ պարոն Տատուր Տատուրյան, երկրորդ ատենապետ պարոն Տիգրան Սրմսարյան և առաջին ատենադպիր պարոն Պետրոս Պոնտացի, երկրորդ ատենադպիր Տ. Շահէ քահանա Ալթունյան — ձեռնհասությամբ ընթացք տված օրակարգին, որուն գործադրության մասնակցեցան 38 համայնքներե մոտավորապես 100 պատգամավորներ։

Կիրակի հետ միջօրեի նիստին մեջ 99 քվեատուներու մասնակցությամբ վարված ընտրությամբ և քվեից մեծամասնությամբ հառաջիկա չորս տարվան համար թեմական առաջնորդ ընտրվեցավ գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիսկոպոս Գալֆայան, և եղած առաջարկը գործադրվելով՝ ան միաձայնությամբ ընդունվեցավ առաջնորդ։

Ժողովականները, առաջնորդությամբ հոգևոր դասուն, ուրախությամբ ողջունեցին իմացությամբ ընտրված թեմական առաջնորդը ու խանդավառությամբ երգեցին «Թագաւոր երկնաւորս շարականի հոգեշունչ երգը, որուն խոսքին մեջ կարծես դեռ շատ թարմ է շունչը հայ քրիստոնյա հայրապետներուն։

Հուզված այդպես սրտաբուխ իրեն ընծայված պատիվեն՝ Մամբրե սրբազան ուխտ կատարողի հավատքով կարծես բարձրաձայն աղոթեց երբ ըսավ՝ ինչպես անցնող 32 տարվան մեջ իբրև հովիվ, թեմական առաջնորդի պաշտոնի բերումով ալ պիտի մնար հավատարիմ Մայր Աթոռին հանդեպ, պիտի պահպաններ բոլոր տրամադրությունները թեմական կանոնադրության, և միշտ արդարադատությամբ պիտի հովվեր իրեն հանձնված հոտը հայոց Ամերիկայի։

Պատգամավորական ժողովի փակումեն հետո, Ս. Խաչ եկեղեցվո ընդարձակ և արդիական սրահին մեջ, կարգադիր հանձնախումբի կողմե սարքված ընթրիքի սեղաններուն շուրջ հապիվ բոլորված էին քաղմահարյուր կոչնականներ, երբ ամբողջ հոգևորականներու առաջնորդությամբ ընտրյալ առաջնորդը տարվեցավ պատվո սեղանին, ուր իրենց պաշտոնի հանգամանքովը արդեն տեղ գրաված էին Ս. Խաչ եկեղեցվո հովիվը՝ Տ. Հմայակ վարդապետ Ինդոյան, պարոն Հայկ Սմսարյան՝ ատենապետը Կարգադիր հանձնախումբին, Պատգամավորական ժողովի դիվանի անդամները և հեռավոր համայնքներե եկած կարգ մը հոգևորականներ։ Հոգեշնորհ Տ. Հմայակ վարդապետ Ինդոյան, երեկոյան առաջին խոսողը, իր, ինչպես նաև իր ծուխին՝ խնդակցությունը հայտնեց Թեմական պատգամավորական ժողովի կատարած ընտրության համար ու շնորհավորեց ընտրյալ առաջնորդ սրբազանը։

Ս. Խաչ եկեղեցվո Մխական խորհուրդի ատենապետ պարոն Հայկ Սմսարյան, ի դիմաց համայնքին և Կարգադիր հանձնախումբին, կարդաց ուղերձ մը։

Սեղանապետ պարոն Լուիֆիկ Շահպազյան, եղբայրը Ս. Խաչ եկեղեցվո սրահին բարեբար ողբացյալ Շահպազյանի, որ տեղական մամուլի մը խմբագիրն ու սպորտի սյու-

նակագիրն է, համեմված հումորով, հայերեն ու անգլերեն թե՛ զվարճալի և թե՛ լուրջ կատարած իր ուղերձեն հետո՝ ընթացք տվավ հայտարարին։

Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպության ներկայացուցիչը՝ պարոն Նուպար Տոբյան, որ մեր ազգային կյանքեն հաճախ կստանձնե խոշոր պատասխանատվություններ, մաքուր հայերենով կարդաց ուղերձ մը։

Թեմական պատգամավորական ժողովի առաջին ատենապետ պարոն Տատուր Տատուրյան, պարոն Տիգրան Սմսարյանի հետ միասին նիստերու ընթացքին ցույց տված լայնախոհության, կարգ ու կանոնի բծախնդրությամբ և ժողովին վեհությունը պահելու գիտակցությամբն ժողովականներու երախտիքին արժանացած ըլլալով երբ հրավիրվեցավ ուղերձ մը ընելու՝ բուռն և երկարատև ծափահարությամբ ընդունվեցավ։

Զգածված էր խորապես, երբ պարոն Տատուրյան կմաղթեր, որ թեմի բոլոր հոգևորականները, ծխական խորհուրդներու անդամները, պատգամավորներն ու ժողովուրդը հնազանդ ու հարգալիր գտնվին ընտրյալ առաջնորդին։ Ամենքը պետք է ձեռք-ձեռքի տված՝ աշխատին հոգևոր եկեղեցվո պայծառության։ Ցուրաքանչյուրի պարտականությունն էր Թեմական խորհուրդի կողմե տրված բոլոր հրահանգները գործադրել, առաջնորդին հանդեպ ըլլալ պարտաճանաչ և փոխադարձ հարգանք տածել իրարու հանդեպ։ Միշտ մնալ հավատարիմ Մայր Աթոռին հանդեպ և ի գործ դնել անկե եկած բոլոր հոգևոր պատգամները։ Եվ երեկոյան ուրախ պահուն և հանդիսավոր առիթով պարոն Տատուրյան խոնարհաբար առավ աջը Մամբրե արքեպիսկոպոսին և անոր մաղթեց առողջություն և հաջողություն։

Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյան, հանուն թեմի հոգևորականաց դասուն, ըսավ, թե իր հոգևոր եղբայրներուն անունով կուզար վստահացնել սրբազան հայրը, որ իրեն իր զավակները զինք խորապես կսիրեին և կհարգեին։ Համերաշխությամբ պիտի գործեին ընտրյալ առաջնորդին հետ և այն սիրով, որ իրենք կսիրեին Հայրենիքը։ Այն եկեղեցականը, որ հայկական պատմության մեջ իր կապը խզեր է Մայր Աթոռեն, բացարձակ ոճիր է գործեր, և իրենք, հոգևորականները սերտիվ կապված էին Մայր Աթոռին։

Պատգամավոր պարոն Տիգրան Պոյաճյան, որ ծանոթ է նաև իբրև հմուտ իրավաբան ու գրագետ, կարդաց շատ խնամով պատրաստած իր ճառը։

Պատգամավոր պարոն Հայկազ Նաճարյան դրվատեց պարոն Տատուր Տատուրյանի գեղեցիկ հատկանիշները և հրավիրեց հանդիսականները, որ օրվան արժանավորին տային իրենց հարգանքը։

Ամերիկայի հայոց թեմական առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս երբ հրավիրվեցավ խոսելու՝ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեցավ ու երկարատև ծափահարեց։

Սրբազան հայրը կարծես բարձրաձայն կաղոթեր երբ կխոսեր։

Խորին շնորհակալություն ուներ իր հոգևոր զավակներուն և հոտին բարի։ Ահա իրեն համար նոր օր մը սկիզբ կառներ։ Այդ նոր օրը պետք է լինի շինարար, և համերաշխ գործունեություն պետք է լինի հոգևոր հոր և ժողովրդյան միջև։ Ի դիմաց հոգևորական դասուն հայր Իսահակի արտասանած խոսքերեն զգացված էր ու խորապես կգնահատեր իրեն հանդեպ ցույց տրված անկեղծ վերաբերմունքի ոգին։ Կարևոր է Առաջնորդարանին մեջ, ի շահ մեր հայ կյանքին ունենալ աջակցությունը բոլորին։

Ուներ խորին շնորհակալություն դիվանին ու հանձնախումբերուն, որ ձեռնհասությամբ կատարեցին Պատգամավորական ժողովի աշխատանքները։ Նաև շնորհակալության խոսք ուներ իրեն ընծայված հարգանքին ու միաձայն վստահության համար։ Մեծարել հարկ էր Ս. Խաչ եկեղեցվո Միսկան խորհուրդն ու ծուխի համայնքը, որոնց ծառայել էր եկած ինք ասկից 28 տարի առաջ և ուրկե կոչված էր առաջնորդական տեղապահի պաշտոնին առաջին անգամ։ Անցնիլ ծառայության զանազան համայնքներու, վարել Գալիֆորնիայի թեմական առաջնորդի պաշտոնը ու դարձյալ վերադառնալ Ցունիրն Սիտիի դրացի մեկ քաղաքի՝ Պետրոսոնի մեր ծուխի հովվության, որպեսզի մեյ մըն ալ կանչվեր առաջնորդական տեղապահի պաշտոնին, և ահա այսօր ալ պատահած հրաշքով մը հասարակության առջև կկանգներ իբրև ընտրյալ առաջնորդ։

Ի՞նչ պիտի ընե ան իր պաշտոնին բերումով։

Պիտի ջանա Հայերենի դպրոցը հանձնել խնամոտ ձեռքերու, որոնք կարենան զայն տանիլ բաղձացված բարձրության մը։

Պիտի հաստատե ամառային քնմբեր Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպության անդամներու համար, ուր, մասնավոր հոգևորականներու և ուսուցիչներու հսկողության տակ, արձակուրդի օրերուն, մեր մանուկները և պատանիները ստանան Հայաստանյայց Եկեղեցվո, Հայոց պատմության և մշակույթի վերաբերյալ նյութերու վրա շամբված դաստիարակություն։

Տարիներով ունեցեր եմ առիթ ներկա գտնվելու Թեմական պատգամավորական ժողովներու, բայց այս տարի մասնավորապես նկատելի էր ժողովականներուն ցույց տված խոհուն վերաբերմունքը հարցերուն նկատմամբ և հետո ալ երկօրյա ճաշկերույթներու և վերջի իրիկվան ընթրիքին ատեն հայտնարերված խանդավառ ոգևորությունը՝ ազգային ու եկեղեցական երգեցողություններով հանդերձ, խորապես տպավորիչ էր։ Ամենքը արժանի են ծափահարության։

ԹՂԹԱԿԻՑ

(«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնական ամսագիր Հյուսիսային Ամերիկայի հայոց Առաջնորդարանի, Նյու-Յորք, 1954 թ., հունվար)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԴ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ

Նոյեմբեր, 1954-ին, Լիբանանի Հանրապետության Նախագահ Նորին Վսեմություն Գամիլ բեյ Շամուն Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ՝ գերաշնորհ Տ. Խադ սրբազան արքեպիսկոպոս Աջապահյանը պատված է Մայրիներու Մեծ Սպայի Շքանշանով։

Առ այդ, Վարչապետ Սամի բեյ Սոլհ, հանուն Նորին Վսեմություն Նախագահին և Լիբանանյան կառավարության, անձնապես գնաց Անթիլիաս և Տեղապահ սրբազան հոր կուրծքը զարդարեց շքանշանով։

Շքեղ անցավ պարգևատրումի արարողությունը։ Գերաշնորհ Տ. Խադ սրբազան արքեպիսկոպոս կարդաց երախտապարտություն, շնորհակալություն և Լիբանանի հաջողություն հայտնող կոկիկ ճառ մը, որ արաբերեն թարգմանեց հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյան։ Վարչապետը սիրալիր պատասխան մը տվավ, և ըսավ ի միջի այլոց.

«1922-ին երբ դաղթական էիք և պետք ունեիք պաշտպանության, մենք չզլացանք մեր օժանդակությունը. հիմա, որ հաստատված եք և բարգավաճ կյանք մը կապրիք, մեր պաշտպանության պետք չունիք այլևս, այլ մեր անկեղծ և անվերապահ սիրույն։ Կրնաք վստահ ըլլալ, թե այդ սերը անսահման է։

1942-ին, իբր վարչապետ ես փի, որ հրահանգեցի հայկական վարժարաններուն արաբերենի ուսուցիչներ տրամադրել. հիմա ուրախ եմ, որ այս երիտասարդ վարդապետը անմիջապես և առանց դժվարության թարգմանեց ձեր ճառը։ Սա կնշանակե, թե հայերը ամեն տեսակետով դարձած են հարապատ լիբանանցիներ։

Պարգևատրումի արարողություններեն ետք, Նորին Վսեմություն վարչապետը շամպանիա խմեց Տեղապահ սրբազանին կենացը, և կրկին շնորհավորելե ու ներկաներուն հետ լուսանկարվելե ետք՝ մեկնեցավ Անթիլիասեն։

Այս առթիվ Լիբանանի «Զարթոնք» օրաթերթը կգրե.

«Մեր կողմե արտանց կշնորհավորենք Կաթողիկոսական տեղապահ սրբազանը այս բարոյական վարձատրության համար։ Տարակույս չկա, թե Խադ սրբազան լիովին արժանի էր այս պատվին։ Ան արթուն պահակը հանդիսացած է, երկար տարիներ, Կիլիկիո Ս. Աթոռին, անոր վատ թե լավ օրերուն։ Իրբև ամբասիր եկեղեցական, իբրև ազգանվեր ու ժողովրդանվեր կրոնական՝ Խադ արքեպիսկոպոս միշտ բարձր պահած է Հայաստանյայց Եկեղեցվո գերագույն վարկն ու պատիվը։ Ան ջերմ պաշտպանը եղած է Հայաստանյայց Եկեղեցվո գերագույն շահերուն։ Եվ այս պատճառներով, Խադ արքեպիսկոպոս ժողովուրդին միակ թեկնածուն է՝ Կիլիկիո Կաթողիկոսության համար։

(«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնական ամսագիր Հյուսիսային Ամերիկայի հայոց Առաջնորդարանի, Նյու-Յորք, 1954 թ., հունվար)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՐԵՆԻ ԱՐԵՎԻՆ ՏԱԿ»

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿ. ՊԱԼՃՅԱՆ

(Բուքրեշ, տպարան «Նոր Կյանք», 1954 թ., 109 էջ)

Ռումինահայ թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, Բուխարեստում, 1954 թվականին, «Նոր Կյանք» տպարանից լույս է ընծայել Մայր Հայրենիքից և Ս. Էջմիածնից իր խանդավառ տպավորություններն ու հուզերը՝ «Հայրենի արևին տակ» ընդհանուր խորագրի ներքո։

Վազգեն սրբազանը, իր համապատասխանական բարձրագույն կրթությամբ, իր բազմակողմանի զարգացումով, բարեմտությն և հեզահամբույր բնավորությամբ, իր անկաշառ հայրենասիրությամբ, ձկնդեցասիրությամբ, հոգևորականի փչման ու պարտականության խորը գիտակցությամբ և նախանձախնդրությամբ, իր ուրույն տեղն է գրավում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձր հոգևորականության շարքերում։ Հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը Վազգեն սրբազանի նկարագրի, կյանքի և գործունեության երկու հիմնական, ամենակարևոր գաղափարներն են, որոնք լարում և առաջնորդում են սրբազանին դեպի արդյունաշատ, հանրօգուտ և եկեղեցաշեն աշխատանքներ։

Իր գրական վաստակով Վազգեն սրբազանը իր արժանի տեղն է գրավում մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ։ Նա արդեն հասուն գրող է, ունի յուրահատուկ բազմակողմանի զարգացում, հայրենասիրի վառ սիրտ, գրելու տաղանդ, գրական փորձ ու ճաշակ։ Նրա բեղուն գրչին են պատկանում մի շարք արժեքավոր պատմա-բանասիրական աշխատություններ։ Այսպես, «Մուսա լեռան հայերը Տրապեզ Վերջելի վեպին մեջ» (վերլուծական փորձ), Բուխարեստ, 1940 թ., 62 էջ, «Երիվյան Հայրիկ ուրախ դաստիարակ», Բուխարեստ, 1943 թ., 158 էջ, «Մեր պատարագը— Հայաստանյայց եկեղեցին սուրբ պատարագի խորհուրդը բացատրված նավատացյալ ժողովուրդին համար», Բուխարեստ, 1945 թ., 104 էջ, և «Հոսմ Հայրենիքի մասին— Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության սրբազան Տեզակալի վերջին ջրջաբերական կոնդակով», Բուխարեստ, 1945 թ., 27 էջ։



Վազգեն սրբազանը արտասահմանի մեր բարեբաստիկության այն հոգևորականներից մեկն է, որին վիճակվել է տեսնել քանիցս մեր վերածնվող Հայրենիքը, մեր Սրբությունն Սրբոց Ս. Էջմիածինը։

1945 թվականից ի վեր սրբազանը զանազան տիպերով եղել է «Հայրենի արևի տակ», ըրջաբերել ու նեբրշնչել է Հայրենիքի իրականությամբ, հակել և աղոթել պատմական վանքերի, մենաստանների խորհրդավոր կամարների տակ և, մանավանդ, ողջագուրվել Հայրենիքի իր հարազատ ժողովրդի հետ, քաժանել նրա խինդն ու տրտմությունը, լսել նրա կառուցման գրգռան երգերը, բազմել նրա սեղանների առաջ և մեծ բերկրանքով կխմել նրա սուրբ գրտինքով շոհված արգար հացն ու սեղանի մյուս բարիքները։

Սրբազան հեղինակի «Հայրենի արևի տակ» գիրքը սովորական ճանապարհորդական նկարագրություն չէ, այլ քնարական վառ զեղումներով և գրան հմտապատասխան խորհրդածություններով, տեսիլքների մի երփներանգ ժայռկնփունք՝ ինքնաբուխ, անկեղծ, անմիջական։

Այս բովանդակալից, արժեքավոր գիրքը կարդացվում է հարատև հետաքրքրությամբ։ Ընթերցողը անցնում է գրքի էջերով, որոնցից յուրաքանչյուրը վառ հետաքրքրություն է զարթեցնում նրա մտքում, կանգնեցնում է նրան Հայրենի մի սրտաուշ պատկերի առաջ և նրա մեջ առաջացնում է անանուն ու խոր ապրումների մի հաճելի զգացմունք, և ընթերցողը ինքն էլ ուզում է սրբազան հեղինակի հետ շրջագայել Հայրենի երկրով մեկ, ման գալ Երևանի փողոցներով, Մեսանի ափում, Արարատյան դաշտում, Ս. Էջմիածնի պատմական և նվիրական վայրերում։

Վազգեն սրբազանը ունի դիտող ու սուր աչք, թափանցող միտք, գրական փորձ ու ճաշակ։ Լեզուն յուրահատուկ է, հարուստ, պատկերավոր, քնավոր մտածումներով և պատկերներով համեմված։ Այս ամենը

նոր հրապույր, գրավչություն են տալիս գրքին։ Հայրենասեր և հավատավոր եկեղեցականը, արվեստագետի բծախնդրությամբ և քարեխղճությամբ, թղթի է հանձնել իր տպավորությունները, հուշերն ու խորհրդածությունները կենդանի, խոսուն, տպավորիչ ձևով։ Հայրենասերի սրտով։ Գիրքը հագեցված է զգայուն հայրենասիրությամբ, ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ։

«Հայրենի արևին տակ» գիրքը բաժանվում է 14 ենթավերնագրերի կամ հատվածների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին համն ու հոտը, բույրն ու գունը։ Հատվածներ կան՝ գրված գրական բարձր արվեստով, ներշնչումով։ Դրանցից է «Կարսո հայրենիքն» (էջ 6), սրտառուչ հայրենասիրությամբ և հուզականությամբ գրված առաջին պատկերը, որտեղ համոզիչ ձևով տրվում են առաջին անգամ հայրենի հողի վրա ոտք դնող հայրենադարձ ու տարաբնակ հայ մարդու ապրումները, ուրախությունն ու երջանկությունը։ «Երևա՜ն... Արարատյան դաշտ... Հայաստա՜ն... կանգնած եմ ահա մեր նախնիքներու հողին վրա... անանուն, անույշ հուզումներ ալիք-ալիք ուժգին կգրավեին սրտիս ամենուն ափերուն և հորդառատ ու թաղցրահոս փղոցեն հոգիս... կյանքի առավելագույն երջանկության պահն է զոր կապրիմ։ Ես այ կուզեմ դողալ՝ «Կա՛նգ առ, բոլո՛ր, դուն ապքա՜ն գեղեցիկ ես...» (էջ 5)։

Հայրենի յուրաքանչյուր ծառ ու ծաղիկ, քար ու քոչոն իր գրավչությունը, իր ասելիքն ունի հայ մարդու համար։ Հայրենի քարերն անգամ «գեղեցիկ են. ամեն մեկ քար սրտիս կհպի։ Ամեն մեկ քարեն սիրտս հուզում մը կքաշեն։ Այստեղ ամեն ինչ, շենքերը, ծառերը, քարերը, մարգոց աչքերը, երկնքի կապույտը հոգիս կիսային անծանոթ և խորհրդավոր, սակայն քաղցր ու մտերիմ բարբառով մը» (էջ 6)։

Վազգեն սրբազանը ազնիվ գաղափար է ոսկեցել այդ բոլոր ապրումներից, խոհումներից, խանդավառությունից «մատ և բաժին» հանել իրեն նման ալնիվ, հայրենակարոտ հայորդիներին։ «Կցանկամ խոսիլ, պատմել մեր անմոռաց երկրի, մեր հարազատ Սովետական Հայաստանի մասին, կցանկամ խոսիլ ու պատմել այնինչ տեսա, այնինչ զգացի մեր վերածնված երկրի հողին վրա» (էջ 7)։

Հաջորդ էջերի վրա սրբազանը տալիս է իր տեսածների և զգացածների լրիվ պատկերը, իր ապրումների, խոհումների «քարտեզը»։

«Դու նորաշարս ես դասալ երևան» գլխում (էջ 8—20) սրբազանը հայրենասիրական հպարտությամբ խոսում է այն մասին, որ մեր օրերի հետ առնում, գեղեցկանում են մեր երկիրն ու ժողովուրդը, «անճանաչելի դառնալու ստիպեան»։ Թե 1945 թվականին, իր առաջին այցելության ժամանակ, Երևանը «շրջապատող լերկ լեռներ և բլուններ» միայն կային, այսօր, զրչակա բարեփոխումների անտառապատումով, բաղաքում աճեցրած պուրակների և փողոցների ծաղկազարդումով և կանաչապատումով «Երևանը դարձած է քաղաք մը, որ բարձրին կգրչ կանաչներու մեջ...»։

Սրբազան հեղինակը երկար կանգ է առել Սովետական Հայաստանի մայրաքաղաքի՝ «իր արտաքին կերպարանքով, իր շենքերու յուրահատուկ գեղեցկությամբ» «նորահարս» դարձած Երևանի վրա։

Եվ, արդարև, Երևանը արժանի է այդ խորը ուշադրության, սիրույն, ազգային հպարտության, որովհետև նա եղել է և է այսօր ևս հայ ժողովրդի քաղաքական, մշակութային կենտրոնը։ «Երևա՜ն, անքամամ ծաղիկ հայ ժողովուրդի հազարամյա անշեջ հույսին, համառ պայքարներուն, շնչարար ոգիին, բացված Արարատյան դաշտի սրտին վրա, սեգ Մասիսներու և քառագագաթն Արագածի հավերժական նայվածքին ներքև» (էջ 6)։

Երևանը, որպես երիտասարդ մայրաքաղաք, իր շենքերի ճարտարապետական յուրահատուկ ոճով, համաչափությամբ և ներդաշնակությամբ, շինությունների բազմազանությամբ և դիմագծունությամբ, այլազան երանգների համադրությամբ նվաճում է այցելուի ուշադրությունն ու հիացումը։ Ի տես մայրաքաղաքի այդ կատուցքերին, նույն տպավորությունն է ապրում նաև Վազգեն սրբազանը։ «Երևանը աշխարհի այն հազվագյուտ քաղաքներն է, որ իր յուրահատուկ ոճը ունի ու կպահե զայն ամենայն հետևողականությամբ... ունի յուրահատուկ համաչափություն և ներդաշնակություն, ունի գույն և ուրույն մթնոլորտ։ Սրբազանը, մանր գալով մեծ ու փոքր պողոտաների վրա, փողոցներում, այն մտածումն ու զգացումն է ունենում, որ «ճարտարապետական ցուցահանդես մըն է որ կայցելե։ յուրաքանչյուր նոր շենք ճարտարապետական գյուտ մըն է, նոր ու ծաղկող համադրություն մը հայկական հին ճարտարապետական ոճի և ստվեռական նորագույն կառուցողական ըմբռնումներու» (էջ 97)։ «Եվ ահա կանգ, կուռնանա, կծաղկի նոր Երևանը, կբարձրանա անդադար ամենայն հայոց բոլոր ժամանակներու Հայրենիքի կենսուրախ շենքը...», իսկ «Երբեմնի Երևանը՝ Թշվառության, խավարի, փոշիի և ցեխի մեջ թաղված այդ գյուղաքաղաքը, այդ մայրաքաղաքի բույրը «Թանգարանի» մեջ կտեսնեմ» (էջ 14)։

Իր հայրենի պատմական հողերի վրա, այսօր հայ ժողովուրդը վարել է իր գոյության անմար խարույկը դարերի դիմաց, այնքան զառն փորձություններից, անվերջ նահատակություններից հետո, «առասպելական փյունիկի նման իր իսկ մոխիրներեն վերածնված՝ շնորհիվ իր ապրելու հավատքին, իր տոկալու ուժին, իր գավակներու զոհաբերության ոգիին, բայց մանավանդ շնորհիվ ահա մեծ ժողովուրդի անշահախնդիր եղբայրական օգնության» (էջ 17)։

Ջերմությամբ, քարեպաշտիկ զգացումներով, հավատի կրակով են գրված Ս. Էջմիածնին նվիրված տողերը։

Հայրենի հողի վրա, վերածնված և վերաշինվող Հայրենիքի ծոցում, հայ ժողովրդի Սրբությունն Սրբոց Ս. Էջմիածնի «ազգային-եկեղեցական կյանքի վերազարթնումի և վերակազմակերպման ձեռնարկներն ու ճիգերը» անհուն բերկրանքով են լցնում սրբազանի հավատավոր սիրտը։ «Հայաստանի նավատացյալ ժողովուրդը իր լայն զանգվածներով ամուր կանգնած է իր նախնյաց սուրբ նավատի վիմին վրա և նախանախդիր է իր ազգային ավանդությունները պան-

պանման, իսկ Սովետական իշխանությունը, ոչ միայն ուրեք կիրառով տարկէ չի հանդիսանար կրոնական կյանքի առաջնայությունները, այլ օրենքի ուժով կատարելով բոլոր նկեղեցիներու ազատ ու անկաշկանդ գործունեությունը» (էջ 65):

«1945—1955 թվականներին Վազգեն սրբազանը բազմիցս լինելով Մայր Աթոռում, երբանիկ բայերախտությանն է ունեցել աղոթելու, պատարագելու և քարոզելու. «Բազմաթիվ անգամներ մասնակցեցա եկեղեցական արարողություններու և ուխտագնացություններու, սուրբ պատարագ մատուցանեցի թե՛ Ս. Էջմիածին Մայր Տաճարի մեջ, թե՛ Երևան՝ Ս. Սարգիս, Ս. Վարդան զորավար և Ս. Հովհաննես եկեղեցիներուն մեջ և թե՛ Օշական՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի տոնին առթիվ»

Ս. Էջմիածինը. որպես պատմական ու դարավոր կենտրոն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ինքնության իրականությունն մրն է այսոր Նայրենի աշխարհին մեջ. Էջմիածինը՝ անսասան վիմը մեր լույս հավատքին, անշեջ փարոսը մեր հոգևոր լուսավորության, աստվածապարգև ճանապարհը մեր հոգիներու փրկության ու միաժամանակ հարազատ օջախ մը չեմ Հայրենասիրության» (էջ 67)։ Ու Վազգեն սրբազանի բարեպաշտ հոգին և հայրենասեր սիրտը արդար զայրույթով են լցված բոլոր նրանց դեմ, ովքեր առասպելներ են տարածում Սփյուռքում Ս. Էջմիածնի, մեր Հայրենիքի մասին, աշխատելով թունավորել հայ հավատացյալ ժողովրդի հայրենասիրության և եկեղեցասիրության չիմք ակունքները։

Կարելի չէ երկար կանգ առնել հայրենասիրական վառ զգացմունքով գրված այս շահեկան գրքի յուրաքանչյուր գլխի առաջ։ Գրքի մյուս էջերում Վազգեն սրբազանը հարազատ չերմությամբ և խանդավառությամբ խոսում է Ռումինիայից ներգաղթած իր հոտի, ժողովրդի Ֆոր կյանքի, երազների մասին, խոսում է Երևանի մտավորականության, արվեստագետների հետ ունեցած իր մտերիմ զրույցների և տպավորությունների մասին։ Սաստեր նոր հուզումներ և ապրումներ է զարթեցնում սրբազանի հոգում։ Այնուհետև գրքում խոսվում է զանազան բնականկան, հասարակական այցելությունների մասին։ Սրբազանը, որպես հայ երգի և երաժշտության չեմ սիրողներից մեկը, միշտ ներկա է լինում մայրաքաղաքի համերգներին։ Նա Հայրենիքում շրջապատված է զգում իրեն հայ ժողովրդի սիրով և գուրգուրանքով, ավանդական հյուրասիրությամբ, և որտի անհուն բերկրանքով ձեռքն է սեղմում յուրաքանչյուր հայ մարդու։

Վազգեն սրբազանի «Հայրենի արևին տակ» գիրքը նոր ավանդ է հայ ժողովրդի համար, հայրենասիրության և եկեղեցասիրության բնագավառում։ Գիրքը կարդացվում է մեծ հաճույքով, ժանրաբեռնված չէ ավելորդ և երկրորդական հարցերով, ամեն մի տող շնչում է վառ հայրենասիրությամբ, հայ հողի, հայ երի, հայ ժողովրդի հանդեպ մեծ ու անկաշառ սիրով։ Մի շարք գեղեցիկ նկարներ գրքին տալիս են դունդությունի, կենդանություն և գրավչություն։

Լեզուն նոր է, պատկերավոր, բանաստեղծական։ Էջեր կան, որոնք արժան բանաստեղծություններ են։

Վազգեն սրբազանը գտնվում է իր ուժերի ծաղկման ամենաբեղմնավոր շրջանում։ «Հայրենի արևին տակ» գիրքը սրբազան հեղինակի մեծապես հաջողված գրական ստեղծագործությունն է, որը ընթերցողին իրավունք է տալիս նորին Սրբազանությունից սպասելու ավելի մեծագույն և մեծարժեք գործեր։

Ա. Հ.